

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱԼ-ՔԱՎԱՅԱՆ և ԹԱՀԵՐԻՆ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

(Գանձատ թիվ 26766/05-ի և 22228/06-ի)

ՎՃԻՌՂ

Ստրասբուրգ, 2011թ Դեկտեմբերի 15

Այս վճիռը վերջնական է, բայց ենթակա է խմբագրական փոփոխությունների:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Ալ-Քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով՝
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որպես Մեծ Պալատ նիստ գումարելով
հետևյալ կազմով՝

Նախագահ՝

Ֆրանսուազ Թալկենս,

Դատավորներ՝

Նիկոլաս Բրացա,

Ժան Պոլ Կոստա,

Քրիստոս Բոզակիս,,

Փեր Լորենցեն,

Էլիզաբեթ Ֆուրա,

Ալվինա Գյուլումյան,

Դանուտե Ժոսին,

Դրագոյուբ Պոպովից,

Ինետա Զիմել,

Մարկ Վիլիգեր,

Զիորջիո Մալինվերնի,

Անդրաս Սայո,

Միրյանա Լազարովա Տրայկովսկա,

Իսիլ Կարակաս,

Նեբոյսա Վուցինից,,

Քրիստինա Պարդալոս,

և մատենավարի տեղակալ՝

Մայքլ Օբոյլ ,

2010թ. մայիսի 19-ի և 2011թ. Նոյեմբեր 9-ի դռնփակ խորհրդակցություններից հետո
կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց 2011թ. Նոյեմբերի 9-ին:

Վարույթը

1. Գործի համար առիթ է հանդիսացել Մարդու իրավունքների եվրոպական
դատարանին (այսուհետ՝ Դատարան) ուղղված երկու գանգատ՝ 2005թ հուլիսի 18-ի
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին
կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 34-րդ հոդվածի հիման վրա Միացյալ
Թագավորության քաղաքացի Իմադ Ալ-Քավայայի («առաջին դիմումատու»)՝
գանգատն (թիվ 26766/05) ընդդեմ Միացյալ Թագավորության և 2006թ մայիսի 23-ի
[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Իրանի Հանրապետության քաղաքացի Ալի Թահերիի («Երկրորդ դիմումատու») գանգատն (թիվ 2228/06) ընդդեմ Իրանի Հանրապետության՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի հիման վրա:

2. Առաջին դիմումատուին ներկայացնում էին «Վելս Բուրքոմբ Սոլիսիթորս» ՓԲԸ-ի հետ Լոնդոնում աշխատող Ա. Բուրքոմբը և Դ. Վելսը, իրավախորհրդատու Ջ. Բենեթանի աջակցությամբ: Երկրորդ դիմումատուին ներկայացնում էր «Փեթեր Քանդլեր և Քո. Սոլիսիթորս» ընկերության հետ Լոնդոնում աշխատող պրն Ֆիշերը՝ իրավախորհրդատու Բ. Թրաուլերի աջակցությամբ: Միացյալ Թագավորության կառավարությունը (այսուհետ՝ «Կառավարություն») ներկայացնում էր Արտաքին գործերի նախարարության աշխատակից Ջ. Գրեյնջերը:

3. Առաջին դիմումատուն պնդում էր, որ սեռական ոտնձգության ենթարկելու համար իր դեմ դատաքննությունն անարդար էր, քանզի իր դեմ ցուցմունք տված կանանցից մեկը մահացել էր մինչև դատաքննությունը, իսկ նրա՝ ոստիկաններին տված ցուցմունքը հրապարակվել էր երդվյալ ատենակալների առջև. Երկրորդ դիմումատուն պնդում էր, որ ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու մտադրությամբ հարվածներ հասցնելու համար իր դեմ դատաքննությունն անարդար էր, քանզի վկաներից մեկը վախի պատճառով չէր ներկայացել դատաքննության, բայց նրա ցուցմունքը կարդացվել էր երդվյալ ատենակալների առջև:

4. Գանգատները հանձնվել են Դատարանի չորրորդ բաժանմունք (Դատարանի կանոնակարգի Կանոն 52 1-ին կետ): 2009թ. հունվարի 20-ի ընդունելիության և գործի փաստական հանգամանքների վերաբերյալ կայացած լսումներից հետո այդ բաժանմունքի դատավորներից (Քասադավել, Բրացա, Բոնելլո, Թրայա, Միյովից, Միկուտա և Հիրվելա) բաղկացած պալատը բաժանմունքի մատենավար Թ. Լ. Ըրլիի հետ միասին միաձայն որոշեցին միացնել գանգատները՝ դրանք հայտարարելով ընդունելի, և յուրաքանչյուր գանգատի վերաբերյալ արձանագրել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի Հոդված 6 1-ին և 3 («դ»)-ի կետերի խախտում:

5. 2009թ. ապրիլի 16-ի Կառավարության պահանջով 2010թ. մարտի 1-ին Մեծ Պալատի հանձնաժողովը (այսուհետ՝ «Հանձնաժողով») որոշեց գործը հանձնել Մեծ Պալատ՝ Կոնվենցիայի Հոդված 43-ի համաձայն:

6. Մեծ Պալատի կազմը որոշվել էր Կոնվենցիայի Հոդված 27-ի 2-րդ և 3-րդ կետերի և Դատարանի Կանոնակարգի Կանոն 24-ի դրույթների համաձայն: Վերջնական լսումների ժամանակ դատավորներ Ալվինա Գյուլումյանը, Իսիլ Կարակասը և Նեբոյսա Վուցինիցը, փոխարինեցին դատավորներ Քորնելիու Բիրսանին, Իրենեո Քաբրալ Բարբետոյին և Սվերե Էրիկ Էբենսին, ովքեր չէին կարող մասնակցել գործի հետագա քննությանը (Կանոն 24, 3-րդ կետ): Դատավորներ Ժան Պոլ Կոստան,

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Քրիստոս Բոզակիսը և Ջիորջիոն, որոնց պաշտոնավարման ժամկետը լրացել էր դատավարության ընթացքում, շարունակեցին մասնակցել գործին (Կոնվենցիայի Հոդված 23-ի 7-րդ կետ և Կանոնակարգի Կանոն 24, 4-րդ կետ)։

7. Դիմումատուները և Կառավարությունն առանձին ներկայացրեցին փաստարկներ գործի վերաբերյալ: Ի հավելում՝ ներկայացվեցին Լոնդոնում գործող «Արդարադատություն» հասարակական կազմակերպության՝ որպես երրորդ կողմի դիտարկումները: Այդ ՀԿ-ին գրավոր վարույթին մասնակցելու թույլատրությունը տրվել էր Նախագահի կողմից (Կոնվենցիայի Հոդված 36-ի 2-րդ կետ և Կանոնակարգի Կանոն 44-ի 2-րդ կետ): Կողմերը ներկայացրեցին իրենց փաստարկներն այդ դիտարկումների վերաբերյալ (Կանոն 44-ի 5-րդ կետ):

8. Դատալսումը տեղի է ունեցել դռնբաց նիստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի շենքում, Ստրասբուրգում, 2010թ. մայիսի 19 (Կանոն 59-ի 3-րդ կետ):

Դատարանի առջև հանդես են եկել՝

(ա) *Կառավարության անունից՝*

ՊՐՆ Ջ. ԳՐԵՅՆՋԵՐ,

գործակալ,

ՊՐՆ Դ. ՓԵՐՐԻ,

ՊՐՆ Լ. ՄԵԲԼԻ,

ՊՐՆ Վ. ԷՅԼԵՍ,

պաշտպան,

ՊՐՆ Ս. ՄՈՒՆՐՈՈ,

ՊՐՆ Ն. ՋԻԲԲՍ,

իրավախորհրդատու,

(բ) *դիմումատուի անունից*

ՊՐՆ Ջ. ԲԵՆՆԱԹԱՆ,

պաշտպան,

ՊՐՆ Դ. ՈՒԵԼՍ,

իրավախորհրդատու.

Դատարանը լսել է պրն Բենեթանի և պրն Փերիի ելույթները և Դատարանի կողմից տրված հարցերին վերջիններիս պատասխանները:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Փաստեր

I. Գործերի հանգամանքները

Ա. Պրն Ալ-Քավայա

9. Առաջին դիմումատուն ծնվել է 1956թ և բնակվում է Բրայթոն քաղաքում: Վերջինիս գանգատի համար առիթ հանդիսացած փաստերը ներկայացվում են ստորև:

10. Վերականգնողական բժշկության ոլորտում որպես բժիշկ-խորհրդատու աշխատելիս առաջին դիմումատուին մեղադրանք է ներկայացվել երկու կին հիվանդների սեռական ոտնձգության ենթարկելու առթիվ, մինչդեռ վերջիններս հիպնոսի ազդեցության տակ էին: Մեղադրական եզրակացության առաջին մասը պնդում էր, որ նա սեռական ոտնձգության է ենթարկել Ս.Թ անունով կնոջ 2003թ-ի հունիսի 3-ի կոնսուլտացիայի ժամանակ : Մեղադրանքի երկրորդ մասը պնդում էր, որ նա սեռական ոտնձգության է ենթարկել Վ.Յ. անունով կնոջ 2003թ-ի հունիսի 12-ի կոնսուլտացիայի ժամանակ :

11. Սեռական ոտնձգություններին չառնչվող պատճառներից ելնելով՝ Ս.Թ-ն ինքնասպան է եղել դատավարությունից առաջ: Այնուամենայնիվ, ենթադրյալ սեռական ոտնձգություններից մի քանի ամիս անց վերջինս ցուցմունք էր տվել ոստիկանությանը: Նա պատմել էր նաև իր երկու ընկերներին՝ Բ.Ֆ. և Ս.Հ-ին, որ դիմումատուն սեռական ոտնձգության էր ենթարկել իրեն:

12. 2004թ-ի մարտի 22-ին նախնական դատալսում տեղի ունեցավ որոշելու համար, թե արդյոք Ս.Թ-ի ցուցմունքը պիտի հրապարակվեր երդվյալ ատենակալների առջև, թե ոչ: Դատալսման ժամանակ պաշտպանյալը նշեց, որ պաշտպանության կողմի մոտեցումը երկու մեղադրանքի դեպքում էլ նույնն է, մասնավորապես, որ թե՛ Ս.Թ-ի և թե՛ Վ.Յ.-ի պնդումները իրականությանը չեն համապատասխանում: Դատավորը դատալսման ժամանակ որոշեց, որ Ս.Թ-ի ցուցմունքը պետք է հրապարակվեր դատաքննության ժամանակ երդվյալ ատենակալների առջև: Դատավորը նշեց, որ առաջին դիմումատուն, հավանաբար, այլընտրանք չուներ և պետք է Վ.Յ.-ի առաջադրած մեղադրանքի հետ կապված ցուցմունք տար՝ իրեն պաշտպանելու նպատակով: Այդ իսկ պատճառով Ս.Թ-ի ցուցմունքը հրապարակելը դիմումատուի համար խոչընդոտ չէր լինի՝ ցուցմունք տալուց հրաժարվելու համար: Դատավորը նշեց նաև, որ Ս.Թ և Վ.Յ.-ի միջև գաղտնի դավադրության վարկած չէր առաջադրվել, ուստի այդ հարցի քննության կարիք չկար կանանց խաչաձև հարցաքննության միջոցով:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

13. Ուսումնասիրելով Մ.Թ-ի ցուցմունքը՝ դատավորը նկատեց նաև, որ այն չափազանց կարևոր էր առաջին մեղադրանքի համար, քանզի 2003թ հունիսի 3-ին կոնսուլտացիայի ժամանակ կատարվածի մասին ոչ մի այլ ուղիղ ապացույց չկար: Նա ասաց. «կարճ ասած՝ ցուցմունք չկա, ապա մեղադրանք էլ չկա»: Շարունակելով՝ նա նշեց, որ իրական խնդիրը կայանում է նրանում, որ առաջին դիմումատուն կարող էր ցուցմունքն այնպես վերափոխել, որ այն օգտագործվեր ի օգուտ իրեն: Առաջին դիմումատուն կարող էր ցուցմունք տալ կոնսուլտացիայի ժամանակ կատարվածի մասին: Մեղադրանքի կողմը մտադրություն ուներ նաև կանչել Մ.Թ-ի ընկերներին՝ վերջինիս պատմածի վերաբերյալ ցուցմունք տալու նպատակով: Մ.Թ-ի և իր ընկերների տված ցուցմունքների միջև անհամապատասխանություններ կային, ինչը թույլ է տալիս կասկածի տակ գցել Մ.Թ-ի ցուցմունքը: Նաև փորձագետ կիրավիրվեր, որը ցուցմունք կտար հիպնոսի ժամանակ ընկալման փոփոխության վերաբերյալ, և վերջինիս խաչաձև հարցաքննությամբ հնարավոր կլիներ նվազեցնել Մ.Թ-ի ցուցմունքի հավաստիությունը:

14. Դատաքննության ժամանակ Մ.Թ-ի ցուցմունքը հրապարակելուց անմիջապես հետո վերջինիս ընկերները՝ Բ.Ֆ. և Ս.Հ վկայություն տվեցին: Մ.Թ-ի թերապևտը նույնպես վկայություն տվեց Մ.Թ-ի անունից հիվանդանոցի ղեկավարությանն ուղղված նամակի վերաբերյալ, որտեղ նշված էր առաջին դիմումատունին ուղղված Մ.Թ-ի մեղադրանքի մասին: Ինչ վերաբերում է երկրորդ մեղադրանքին՝ Վ.Յ.-ի հանդեպ իրականացրած սեռական ոտնձգությանը, վերջինս վկայություն տվեց, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցները, ովքեր զբաղվել էին գործի հետաքննությամբ: Հետո վկայություն տվեցին երկու կանայք, ովքեր պնդում էին, որ առաջին դիմումատուն իրենց ոչ պատշաճ առաջարկություններ է արել հիպնոսի կոնսուլտացիայի ժամանակ: Մեղադրանքի կողմը հիմնվել էր այդ ցուցմունքի վրա որպես «նմանատիպ փաստի վկայում»՝ հոգուտ Մ.Թ և Վ.Յ.-ի վկայությունների: Ինչպես մեղադրանքի կողմը նշեց, փորձագետը վկայություն էր տվել հիպնոսի ազդեցության վերաբերյալ: Պաշտպանող կողմին հնարավորություն տրվեց խաչաձև հարցաքննել դատարանում ներկա բոլոր վկաներին: Առաջին դիմումատուն վկայություն տվեց իր իսկ օգտին: Նա նաև կանչեց մի շարք վկաների, որոնք վկայություն տվեցին վերջինիս լավ բնավորության վերաբերյալ:

15. Ամփոփելիս դատը վարող դատավորը երկու անգամ խոսքն ուղղեց երդվյալ ատենակալներին՝ ասելով, թե ինչպես պետք է վարվել Մ.Թ-ի ցուցմունքի հետ: Սկզբում նա նշեց. «Շատ կարևոր է, որ դուք (երդվյալ ատենակալներ) Մ.Թ-ի ցուցմունքը քննարկելիս հաշվի առնեք, որ չեք տեսել կամ լսել նրան ցուցմունք տալիս,

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

ինչպես նաև չեք մասնակցել նրա խաչաձև հարցաքննությանը պրն. Ալ-Քավայայի փաստաբանի կողմից, որն անշուշտ, մի շարք հարցեր կունենար վերջինիս ուղղելու»:

16. Հետո նա նշեց. «Հաշվի՝ առեք, որ այս ցուցմունքը կարդացվել է... ենթադրյալ մեղադրանքը հերքվել է: Դուք դա պե՛տք է հաշվի առնեք վերջինիս ցուցմունքը քննարկելիս»:

17. Ինչ վերաբերում է Ս.Թ-ի ընկերների վկայություններին, դատավորը հիշեցրեց երդվյալ ատենակալներին, որ կոնսուլտացիայի ժամանակ կատարվածի վերաբերյալ անհամապատասխանություն կար Ս.Թ-ի և Ս.Հ-ի տված ցուցմունքների միջև (Ս.Թ-ն իր ցուցմունքի մեջ ասել էր, որ դիմումատուն դիպել էր իր դեմքին և բերանին, իսկ ըստ Ս.Հ-ի տված ցուցմունքի՝ Ս.Թ-ն ինքն էր դիպել իր դեմքին և բերանին): Դատավորը շարունակեց.

«Դուք եք որոշելու, թե ինչքանով է [Բ.Ֆ.] և [Ս.Հ]-ի ցուցմունքը ձեզ օգնելու որոշել [Ս.Թ]-ի ցուցմունքի ճշմարտացիությունը: Բայց հիշեք, որ Ս.Թ-ի կողմից Բ.Ֆ. –ին և Ս.Հ-ին հայտնած տվյալները կապված են նրա կողմից ներկայացված մեղադրանքի ճշմարտացիության հետ»:

18. Դատը վարող դատավորը երդվյալ ատենակալներին հայտնեց, որ Ս.Թ-ի ցուցմունքի ճշմարտացիությունը որոշելիս նրանք իրավունք ունեին հաշվի առնել նաև Վ.Յ.-ի և մյուս երկու կանանց՝ առաջին դիմումատուի կողմից արված անբարո առաջարկների վերաբերյալ տված ցուցմունքը: Այնուամենայնիվ, երդվյալ ատենակալները պետք է նախ և առաջ բացառեին դավադրության վարկածը այդ չորս կանանց կողմից: Բացի այդ ինչքանով է խելամիտ, որ նույն մեղադրանքը ներկայացնող իրարից անկախ չորս մարդ սուտ խոսեն կամ սխալված լինեն կամ նույն հալյուցինացիայով (զգայախաբությամբ) կամ կեղծ հիշողությամբ տառապեն: Եթե երդվյալ ատենակալները դա անհավանական համարեին, ապա դա բավարար կլիներ, որ Ս.Թ և Վ.Յ.-ի ցուցմունքները ճշմարիտ համարվեին: Դատավորը նաև նշեց, որ ինչքան մեծ է նմանությունը ենթադրյալ մեղադրանքների միջև, այնքան ավելի հավանական է, որ այդ չորս կինը ճշմարտությունն են ասում: Նա ավելացրեց նաև, որ երդվյալ ատենակալները պետք է քննարկեին նաև այն հարցը, թե արդյոք այլոց բողոքները կարող էին գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար ազդել այդ չորս կանանց ցուցմունքների վրա:

19. Քննարկումների ընթացքում երկու անգամ երդվյալ ատենակալները դիմեցին Ս.Թ-ի ցուցմունքի պարզաբանումների հարցով: 2004թ. Նոյեմբերի 30-ին երդվյալ ատենակալները միաձայն մեղավոր ճանաչեցին առաջին դիմումատուին սեռական ոտնձգության երկու մեղադրանքի համար: Առաջին դեպքի համար նրան

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

դատապարտեցին 15 ամիս ազատազրկման, իսկ երկրորդ դեպքի համար դատապարտեցին 12 ամսով, որը պիտի կիրառվեր առաջինից հետո:

20. Առաջին դիմումատուն վճիռը բողոքարկեց վերաքննիչ դատարան: Բողոքը հիմնված էր Մ.Թ- ցուցմունքը որպես ապացույց համարելու փաստի վրա: Նշված էր նաև, որ դատը վարող դատավորն ամփոփելիս պատշաճ կերպով չի ուղղորդել երդվյալ ատենակալներին, որն էլ հետևաբար վատ էր անդրադարձել առաջին դիմումատուի պաշտպանությանը: 21. Բողոքը քննվել և մերժվել է 2005թ. Սեպտեմբերի 6-ին: 2005թ. նոյեմբեր 5-ի գրավոր որոշման մեջ վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ առաջին դիմումատուի՝ արդար դատաքննության իրավունքը չի խախտվել: Մ.Թ-ի ցուցմունքի ընդունելիությունը որպես ապացույց դատարանի կարծիքով անհրաժեշտաբար անհամատեղելի չէր Կոնվենցիայի Հոդված 6 1-ին և 3(«դ»)-րդ կետերի հետ: Հիմնվելով Դորսոն ընդդեմ Հոլանդիայի 1996թ. մարտի 26-ի որոշման վրա (Եզրակացությունների և որոշումների հաշվետվություն, 1996-II)՝ դատարանը գտավ, որ ապացույցի ընդունելիությունը նախ և առաջ ներպետական իրավունքի խնդիր է: Հետո ավելացրեց.

«25. Այս գործի կարևոր գործոններն են՝

Վկան՝ Մ.Թ-ն չէր կարող հարցաքննվել առաջին դիմումատուի կողմից, քանի որ նա մահացել էր: Նա միակ վկան էր, որի ցուցմունքը ուղղակիորեն խոսում էր բողոքարկողի կողմից նրան սեռական ոտնձգության ենթարկելու մասին: Եթե նրա ցուցմունքը բացառվեր, ապա մեղադրանքի կողմը ստիպված կլիներ հրաժարվել մեղադրանքի առաջին մասից: Դիմումատուն կարող էր կասկածի տակ գցել Մ.Թ -ի ցուցմունքը՝ վեր հանելով անճշտությունները նրա և մյուս վկաների՝ [Բ.Ֆ.] and [Ս.Հ]-ի միջև, ինչպես նաև օգտվելով փորձագետի՝ հիպնոսի ներքո ընկալման փոփոխության վերաբերյալ տված վկայությունից: 1988թ-ի ընդունված ակտի կարևոր մասերը [տե՛ս ստորև՝ 41-րդ կետ] պարունակում են մեղադրյալների պաշտպանության համար նախատեսված դրույթներ, որոնք պատշաճ կերպով հաշվի են առնվել են դատավորի կողմից մինչև ցուցմունքը որպես վկայություն ընդունելը: Եվ ի վերջո, ապացույցը գնահատող մարմինը՝ այս դեպքում երդվյալ ատենակալները, կարող էր և պետք է հաշվի առներ դժվարությունները, որոնք կարող էին առաջանալ ցուցմունքի ընդունման հետևանքով, և որոնք մասին պետք է պատշաճ ձևով ներկայացվեին երդվյալ ատենակալներին:

26. Եթե վկան, որը հանցագործության միակ վկան է, և որի տված ցուցմունքը պետք է օգտագործվի մեղադրանքի մեջ, մահացել է, ապա կարող է լինել հանրային մեծ շահագրգռվածություն՝ ցուցմունքը որպես ապացույց ընդունելու մեջ, որպեսզի մեղադրանքը շարունակվի: Իրավիճակն այդպիսին էր այս դեպքում: Չպետք է թույլ տալ, որ հանրային հետաքրքրությունը գերակայի մեղադրյալի՝ արդար դատավարություն ունենալու պահանջի վրա: Ինչպես Սելիկի դատարանը [տե՛ս ստորև՝ 48-րդ կետ], մենք նույնպես չենք կարծում, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն այսպիսի հանգամանքներում դատավարությունն անարդար կլինի: Հոդված 6-ի 3(«դ»)-րդ կետի համաձայն արդար դատաքննության իրավունքի կարևոր տարրերից մեկն այն է, որ վկան մեղադրյալի առջև

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

հարցաքննվի, բայց եթե այդպիսի հնարավորություն չի ընձեռվում, ապա հիմնական խնդիրը նրանում է, թե արդյոք դատավարությունն ամբողջությամբ՝ ներառյալ ցուցմունք վերցնելու ընթացակարգը եղել են արդար, թե ոչ (Դորսոն 1-ին, 9-րդ կետ): Մա այնպիսի դեպք չէ, երբ վկան դիտավորյալ բացակայում է վախի կամ այլ պատճառով կամ էլ պահանջում է անանուն հանդես գալ կամ էլ օգտվում լռելու իր իրավունքից: Պատճառը մահն էր, իսկ դա նշանակում է վերջ, որն էլ իր հերթին մտածելու տեղիք է տալիս, ինչպես որ պարագրաֆի սկզբում էր հիշատակված»:

22. Անդրադառնալով դատը վարող դատավորի ամփոփմանը՝ դատարանը նշեց. «Մենք կարծում ենք, որ շատ ավելի լավ կլիներ, եթե դատավորն ուղղակիորեն նշած լիներ, որ Ս.Թ –ի բացակայությունը կարող էր բացասաբար ազդել առաջին դիմումատուի վրա, և Ս.Թ –ին խաչաձև հարցաքննելու ու ատենակալների՝ նրան տեսնելու անհնարինությամբ պայմանավորված՝ Ս.Թ –ի ցուցմունքը պետք է համեմատաբար փոքր կշիռ ունենար ատենակալների համար: Այնուամենայնիվ, այս գործի հանգամանքներում դատավորի կողմից տրված ուղղորդումներից ատենակալների համար պետք է ամբողջությամբ պարզ լիներ, որ դա է եղել իր դիտարկումների նպատակը: Մենք հետևաբար գտնում ենք, որ երդվյալ ատենակալներին տրվել են պատշաճ ուղղորդումներ Ս.Թ-ի ցուցմունքի՝ որպես նրա բացակայությամբ ներկայացված ապացույցի հետևանքների մասին, և որ սա այնպիսի գործոն չէ, որը կարող էր առաջին դիմումատուի նկատմամբ դատաքննությունը դարձնել անարդար և Կոնվենցիայի 6-րդ հոդվածին հակասող: Մենք պետք է ավելացնենք, որ առաջին դիմումատուի դեմ ներկայացված ապացույցները, ընդհանուր վերցված, շատ ուժեղ էին: Մենք ամբողջությամբ համոզված ենք, որ դատավճիռները ճիշտ են»:

23. Վերաքննիչ դատարանը չթույլատրեց դիմել Լորդերի պալատ, բայց հաստատեց, որ որոշման մեջ ներառված էր ընդհանուր հանրային կարևորության իրավական տեսակետ:

24. 2005թ. նոյեմբերի 30-ին առաջին դիմումատուն Վերաքննիչ դատարանի կողմից հաստատված վերոհիշյալ իրավական տեսակետի հիման վրա միջնորդություն է ներկայացրել Լորդերի պալատ: 2005թ. փետրվարի 7-ին Լորդերի պալատը մերժել է միջնորդությունը:

B. Պրն. Թահերի

25. Երկրորդ դիմումատուն ծնվել է 1975թ-ին: Նրա գանգատի համար առիթ է հանդիսացել միտումնավոր վնասվածք հասցնելու համար դատապարտվելը: Գործի մանրամասները ներկայացված են ստորև:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

26. 2004թ. մայիսի 19-ին Լոնդոնում ապրող իրանական համայնքի անդամ Ս.-ը վիճել է որոշ քուրդ տղամարդկանց հետ: Երկրորդ դիմումատուն ներքաշվել է վերոնշյալ վեճի մեջ Ս.-ին պաշտպանելու նպատակով: 2004թ. մայիսի 20-ի վաղ առավոտյան Ս.-ը և երկրորդ դիմումատուն կրկին հանդիպել են Լոնդոնի Հեմրամիթ թաղամասում գտնվող իրանական ռեստորանի մոտ: Երկրորդ դիմումատուն հարցրել է՝ արդյոք կարող են գրուցել և վերջինիս հետ քայլել դեպի մոտակա նրբանցք: Հետո սկսել են քննարկել ավելի վաղ տեղի ունեցած վեճը: Չնայած Ս.-ն հերքեց, որ ինքն է առաջինը հարվածել, բայց երկրորդ դիմումատուի գործով տեղի ունեցած դատավարության ժամանակ վկայություն տալիս ընդունել է, որ հարվածել է երկրորդ դիմումատուին: Վեճի ժամանակ երկրորդ դիմումատուն ետ է հրել Ս.-ին, և այդ պահին Ս.-ն ուժգին ցավ է զգացել մեջքին, որը պարզվեց՝ դանակի երեք հարվածների արդյունք էր: Ս.-ը և երկրորդ դիմումատուն դեմ առ դեմ կանգնած են եղել, և Ս.-ը չի տեսել երկրորդ դիմումատուին իրեն դանակով հարվածելիս և ոչ էլ կարող է ասել, որ երկրորդ դիմումատուն քայլել է դեպի իր ետևի մասը, որպեսզի դանակով հարվածի իրեն:

27. Կռվի ժամանակ ներկա էին այլ տղամարդիկ՝ ներառյալ քուրդ տղամարդիկ, որոնք մասնակցել էին վիճաբանությանը: Ս.-ի ընկեր Թ.-ն , որը նույնպես իրանական համայնքի անդամ է, նույնպես ներկա էր վեճին, ինչպես նաև Թ.-ի երկու ընկերները և երկրորդ դիմումատուի հորեղբայրը: Ս.-ը չէր կարող ասել, թե նրանցից ով էր գտնվում իր ետևում:

28. Ս.-ն, ի վերջո, զգաց, որ դանակով հարվածել են իրեն: Հետո տեսավ գետնին ընկած դանակը: Երկրորդ դիմումատուի գործով տեղի ունեցած դատավարության ժամանակ (տե՛ս ստորև՝ 48-րդ կետ) տված իր ցուցմունքում նա նշեց, որ ցանկացել է վերցնել դանակը, բայց երկրորդ դիմումատուն կամ էլ Թ.-ն արդեն վերցրել և նետել էին այն ռեստորանի կողմը: Ս.-ը ենթադրել է, որ երկրորդ դիմումատուն է իրեն դանակով հարվածել: Ըստ Ս.-ի՝ երկրորդ դիմումատուն անմիջապես հերքել է դա: Նա ասել է Ս.-ին նստել իր կողքին և փորձել է կանգնեցնել Ս.-ի վերքից հոսող արյունը, մինչ կհասներ շտապ օգնությունը: Երբ շտապ օգնությունը հասավ, նա ուղեկցեց Ս.-ին հիվանդանոց: Հիվանդանոցում երկրորդ դիմումատուն հայտնել է ռատիկանությանը, որ տեսել է, թե ինչպես են երկու սևամորթ տղամարդ դանակով հարվածում Ս.-ին:

29. Երբ դեպքի վայրում ներկա վկաներին հարցաքննեցին, նրանցից ոչ ոք չասեց, որ երկրորդ դիմումատուն դանակով հարվածել էր Ս.-ին. Այնուամենայնիվ, երկու օր անց Թ.-ն ցուցմունք է տվել ռատիկանությունում, որում նշել է, որ տեսել է, թե ինչպես է երկրորդ դիմումատուն դանակով հարվածում Ս.-ին: Ցուցմունք տալիս Թ.-ն պատմեց,

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

որ երբ երկրորդ դիմումատունն և Ս.-ն սկսել են վիճել նրբանցքում, Թ -ն փորձել է նրանց առանձնացնել: Հետո տեսել է, թե ինչպես է երկրորդ դիմումատունն բռնում Ս.-ի ծոծրակից, մոտեցնում դանակը և երկու անգամ հարվածում Ս.-ի մեջքին: Թ-ի մոտենալուն պես երկրորդ դիմումատունն փորձել է դանակով հարվածել նաև Թ-ի ծոծրակին: Ըստ Թ-ի՝ երկրորդ դիմումատունն հետո գցել է դանակը և բղավել. «Չասես ոստիկանությանը»:

30. 2004թ. նոյեմբերի 3-ին երկրորդ դիմումատունն ձերբակալվել և տարվել է Հեմբսմիթի ոստիկանություն: Հարցազրույցի ժամանակ նա հերքեց, որ հարվածել է Ս.-ին և կրկին նշեց, որ երկու սևամորթ տղամարդիկ էին պատասխանատու այդ արարքի համար: Նրա նկատմամբ ներկայացրել էին մեղադրանք՝ դիտավորյալ վնասվածք հասցնելու, ինչպես նաև արդարադատության նորմալ ընթացքը խոչընդոտելու փորձի համար, քանզի վերջինս ոստիկանությունում և հիվանդանոցում ասել էր, որ երկու սևամորթ տղամարդիկ էին դանակով հարվածել Ս.-ին:

31. 2005թ. ապրիլի 25-ին երկրորդ դիմումատուի դատավարությունն սկսվեց Բլեքֆրայրս թագավորական դատարանում: Այդ օրը նա իրեն մեղավոր ճանաչեց արդարադատության ընթացքին խոչընդոտելու մեջ, բայց չընդունեց դիտավորյալ վնասվածք հասցնելու մեղադրանքը:

32. Ս.-ը վկայություն տվեց մեղադրանքի կողմի համար: Նա պատմեց, թե ինչպես են ինքը և երկրորդ դիմումատունն վիճել նրբանցքում: Մի րոպե անց նա զգացել է, որ մեջքից վիրավորել են: Բայց նա չի տեսել, թե ով է դանակով հարվածել իրեն: Երկրորդ դիմումատունն նստեցրել է իրեն և ծածկել վերքը: Ս.-ը հարցրել է երկրորդ դիմումատուին, թե ով է հարվածել իրեն, բայց վերջինս չի ընդունել, որ ինքն է հարվածել: Խաչաձև հարցաքննության ժամանակ Ս.-ն ընդունել է, որ չի տեսել, որ երկրորդ դիմումատունն գնար իր ետևի մասը. նրանք դեմ առ դեմ են կանգնած եղել: Նա նաև նշեց, որ լսել է, թե ինչպես է ինչ-որ մեկը բղավում «Ասա՛ նրան, որ սևամորթներն էին», և դա երկրորդ դիմումատուի ձայնը չէր:

33. Ս.-ի վկայությունից հետո մեղադրանքի կողմը միջնորդություն ներկայացրեց, որպեսզի հրապարակի Թ -ի ցուցմունքը՝ 2003թ-ի Քրեական Արդարադատության ակտի բաժին 116(2)(«ե») և (4)-ի համաձայն («2003 Ակտ». տե՛ս ստորև՝ 43–45 կետեր): Մեղադրանքի կողմը, հիմնվելով 2003 Ակտի վրա, ներկայացրեց, որ Թ-ն չի ներկայացել դատարան վախից դրդված և որ պետք է հատուկ միջոցներ ձեռնարկել: Գործը քննող դատավորը լսեց նաև գործը վարող ոստիկանության աշխատակցի ցուցմունքը, որը հաստատեց, որ իրանական համայնքի անդամները սերտ կապի մեջ էին գտնվում, և որ Թ-ի վախը միանգամայն իրական էր: Թ-ն գործը քննող

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

դատավորին (բայց ոչ երդվյալ ատենակալներին) վկայություն տվեց նաև առանձին: Նա պատմեց դատավորին, որ վախենում էր իր և իր ընտանիքի համար, քանզի այցելություններ և զանգեր էր ստանում, բայց որոնցից և ոչ մեկը երկրորդ դիմումատուի կողմից չէին: Նա չասեց, թե ով էր պատասխանատու զանգերի ու այցելությունների համար:

34. Երդվյալ ատենակալների առջև ցուցմունքը հրապարակելու միջնորդության վերաբերյալ որոշման մեջ գործը քննող դատավորը նշել է. «Ապացույցի քրեական չափանիշների համաձայն ես կարող եմ ասել, որ վկան իսկապես վախեցած է, և ես հիմնվում եմ ոչ միայն վկայի բանավոր ցուցմունքի վրա, այլև այն փաստի վրա, որ կարողացել եմ հետևել նրան, մինչև նա վկայի աթոռում էր:

Այդ իսկ պատճառով պիտի շարունակեմ՝ քննարկելով տրված հարցերը [Ակտ 2003-ի Բաժին 116(4)]. Ըստ ենթակետ 4(«ա»)-ի ես պետք է ի նկատի ունենամ ցուցմունքի բովանդակությունը: Ես այդպես էլ արել եմ: Ըստ պաշտպանության կողմի՝ ցուցմունքը հավաստի չէ, քանզի անհամապատասխանություններ կան [Մ.-ի] տված վկայության հետ:

Միշտ էլ կլինեն գործեր, որտեղ թե՛ բանավոր, թե՛ հրապարակվող վկայության դեպքում կլինեն անհամապատասխանություններ: Երդվյալ ատենակալներն են, հիմնվելով փաստաբանների պնդումների և լսած վկայությունների վրա, որոշում, թե արդյոք վկայությունը հավաստի է, թե ոչ: Եվ նրանք ցուցմունքի վերաբերյալ ժամանակին պատշաճ զգուշացում կստանան իմ կողմից:

Հետո նշված էր, որ ցուցմունքը շատ կարևոր է այն առումով, որ այն տրվել է մի մարդուց, որը ջանում է վկայություն տալ դեպքի վերաբերյալ և, հետևաբար, վերաբերում է դեպքի բովանդակությանը:

Իմ կարծիքով հենց այս կարգի վկան կարող է վախենալ, և, հետևաբար, հենց այդ է ի նկատի ունեցել պառլամենտը, երբ ընդունել է այս հատուկ բաժինը:

Այդ իսկ պատճառով, ծանոթանալով ցուցմունքի բովանդակությանը, ես պետք է հաշվի առնեմ դրա ընդունման կամ բացառման հետևանքով առաջացած ցանկացած վտանգ, որը որևէ կողմի համար կարող է պատճառ դառնալ անարդար դատավարության: Ես համամիտ եմ, որ անարդարություն կլինի դրա բացառման դեպքում, բայց նաև համոզված եմ, որ դրա ընդունումը չի առաջացնի անարդարություն: Եվ այսպես վարվելով՝ հաշվի եմ առել Ակտ 2003-ի այն մասը, որում ասվում է, թե ինչքան դժվար կլինի կարևոր վկայի բանավոր վկայության բացակայության դեպքում որոշել ցուցմունքի հավաստիությունը:

Ցուցմունքի հավաստիությունը միշտ չի, որ խաչաձև հարցաքննությամբ է որոշվում: Ցուցմունքի հավաստիությունը կարելի է որոշել նաև այն հերքող մեկ այլ վկայությամբ կամ պաշտպանյալի կողմից ցանկության դեպքում կամ էլ մեկ այլ ակնատեսի կողմից, քանզի գիտենք, որ դեպքի վայրում եղել են նաև այլ մարդիկ:

Հետևաբար, ես համոզված եմ, որ մեղադրյալի վկայությունը, եթե, իհարկե, վկայություն տա, բավարար կլինի հերքելու և կասկածի տակ դնելու ցուցմունքի հավաստիությունը:

Ես հաշվի եմ առել նաև այլ կարևոր գործոններ, ինչպես նաև մինչև վկան առանձին վկայություն էր տալիս, նրան նաև առաջարկել եմ նույն անվտանգության միջոցներն ապահովել երդվյալ

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

ատենակալների առջև վկայություն տալու համար: Բայց նա ինձ ասաց, որ չի փոխի որոշումը և որ չի կարող վկայություն տալ երդվյալ ատենակալների առջև, իսկ չկարողանալու պատճառն էլ վախն էր:

Տվյալ հանգամանքների պայմանում, հաշվի առնելով վերոնշյալ գործոնները, համոզված եմ, որ սա այնպիսի գործ է, որտեղ կարիք կա ցուցմունքը հրապարակելու՝ նախատեսված պառլամենտի կողմից»:

35. Թ-ի՝ որպես վկայի ցուցմունքը հրապարակվեց երդվյալ ատենակալների առջև: Վերքի բնույթի վերաբերյալ վկայություն տվեց հիվանդանոցում Ս. -ի բուժմամբ զբաղվող բժիշկը, իսկ դատական փորձագետը հաստատեց, որ երկրորդ դիմումատուի հագուստի վրա գտած արյունը համընկնում էր Ս.-ի արյան հետ (չնայած ստույգ եզրակացություն չէր կարող արվել, թե ինչպես կարող էր Ս.-ի արյունը հայտնվել երկրորդ դիմումատուի հագուստի վրա): Երկրորդ դիմումատուի՝ ոստիկանությանը տված հարցազրույցի արձանագրությունը նույնպես ներկայացվեց մեղադրանքի կողմից (տե՛ս վերը՝ 30-րդ կետ):

36. Երկրորդ դիմումատուն վկայություն տվեց ի պաշտպանություն իրեն: Նա նշեց, որ ներկա է եղել քուրդ տղամարդկանց հետ ավելի վաղ տեղի ունեցած վեճին: Երբ հետո ինքը և Ս.-ն հանդիպել են ռեստորանի մոտ, բռնել է Ս.-ի ձեռքից և առաջարկել է գնալ և խոսել, բայց Ս.-ն սկսել է բռունցքով հարվածել իրեն: Պաշտպանելու նպատակով նա Ս.-ի օձիքից է քաշել և ետ հրել: Թ-ն հետո փորձել է միջամտել, և իրանական համայնքի մի շարք մարդիկ փորձել են զսպել Ս.-ին: Թ-ն կանգնած է եղել Ս.-ի և երկրորդ դիմումատուի միջև, և հենց այդ պահին էլ երկրորդ դիմումատուն նկատել է գետնին ընկած դանակը: Նա բարձրացրել և նետել է դանակը առանց իմանալու, որ Ս.-ին դանակով հարվածել էին: Երբ Ս.-ը մեղադրել է երկրորդ դիմումատուին իրեն դանակով հարվածելու մեջ, վերջինս նրան համոզել է նստել և բարեհաջող հանգստացրել: Նա ապա իր ձեռքը դրել է Ս.-ի մեջքի վերքի վրա: Ս.-ը հետո, կարծես թե, ընդունել է, որ երկրորդ դիմումատուն դանակով չի հարվածել իրեն: Երկրորդ դիմումատուն նաև նշել է, որ ոստիկանությանը հայտնել է, որ երկու սևամորթ են հարվածել Ս. -ին, քանզի հորեղբայրն էր այդպես ասել: Վերջապես, երկրորդ դիմումատուն նշեց նաև, որ մինչև ոստիկանությանը ցուցմունք տալը Թ-ն իրեն ասել է, որ և՛ ինքը, և՛ Թ-ն գիտեին, որ երկրորդ դիմումատուն դանակով չէր հարվածել Ս.-ին:

37. Ամփոփելիս դատավորը զգուշացրեց երդվյալ ատենակալներին, թե ինչ վտանգ կարող է առաջանալ Թ-ի վկայության վրա հիմնվելու դեպքում.

«Ինչպես գիտեք այս վկայությունը հրապարակվել է համաձայն այն դրույթի, որը թույլատրում է վախի մեջ գտնվող վկայի ցուցմունքը հրապարակել. դա նյարդերի հետ կապված խնդիր չէ, այլ վախն է պատճառը, բայց դուք պետք է զգույշ լինեք այդ վկայությունը քննելիս: Ճիշտ է, ինչպես պաշտպանությունը նշեց, նրանք զրկված են եղել վկայությունը խաչաձև հարցաքննությամբ ստուգելու

[Type text]



հնարավորությունից: Ճիշտ է նաև, որ դուք հնարավորություն չեք ունեցել տեսնելու վկային և իր վարքագիծը դատարանում: Դուք հնարավորություն չեք ունեցել մտածել և ասել. «հավանաբար իմ տեսած բաների պատճառով ես երկուսին գումարեցի երկուս և ստացա հինգ», ինչպես ձեզ պաշտպանն է առաջարկում ասել: Այլ կերպ՝ պետք է միշտ ի նկատի ունենաք, որ նա կարող էր իր տեսածի հիման վրա սխալ եզրակացության գալ: Այդպես կարելի է ուսումնասիրել ցուցմունքը: Դուք պետք է ինքներդ ձեզ հարցնեք՝ «արդյո՞ք կարող ենք հիմնվել այս ցուցմունքի վրա, արդյո՞ք այն համոզիչ ապացույց է»: Այս ցուցմունքի վրա կարող եք հիմնվել միայն այն դեպքում, երբ համոզված կլինեք, որ այն ճշգրտորեն ներկայացնում է այդ գիշերվա պատահածը և այն, ինչ վկան էր տեսել: Դա վերաբերում է ցանկացած վկայի: Ցուցմունքի վրա կարող եք հիմնվել միայն այն դեպքում, երբ այն հիմնավոր եք համարում: Ուստի, միշտ պետք է մտածեք՝ արդյո՞ք ցուցմունքը հավաստի է, թե ոչ:

Միշտ ի նկատի ունեցեք բոլորի կողմից ճանաչված մի կարևոր հանգամանք, որ մեղադրյալը պատասխանատու չէ վկայի վախեցած վիճակի համար»:

38. 2005թ. ապրիլի 29-ին երկրորդ դիմումատուն մեծամասնության կողմից մեղավոր ճանաչվեց ծանր մարմնական վնասվածք հասցնելու նպատակով դիտավորյալ վիրավորելու մեջ և դատապարտվեց 9 տարի ազատազրկման, որին միաժամանակ գումարվելու էր 15 ամիս ազատազրկումը՝ արդարադատության ընթացքը խաթարելու փորձի մեղադրանքով, որը նա ընդունել էր:

39. Երկրորդ դիմումատուն դիմել էր վերաքննիչ դատարան՝ վիճարկելով այն հարցը, որ Թ-ի հետ խաչաձև հարցաքննություն իրականացնելու հնարավորություն չունենալը խախտել է իր արդար դատաքննության իրավունքը: Վերաքննիչ դատարանը ճանաչել է, որ Թագավորական դատարանն ընդունել է, որ Թ-ի ցուցմունքը «կարևոր և ապացուցողական նշանակություն ունի գործի համար, իսկ եթե չընդունեք, ապա դատապարտման հավանականությունը կնվազեր, իսկ արդարացման հնարավորությունը կմեծանար»:

Դատարանը հաստատեց գործը քննող դատավորի պատճառաբանությունը, ասելով, որ հնարավոր էր խաչաձև հարցաքննել ոչ միայն մեղադրանքի կողմի այլ վկաներին, այլև երկրորդ դիմումատուին և մյուս ականատեսներին անարդար դատավարությունից խուսափելու նպատակով: Նշված էր նաև, որ գործը քննող դատավորը հստակորեն և մանրամասն զգուշացրել էր երդվյալ ատենակալներին, թե ինչպես պետք է նրանք դիտարկեին այս ապացույցը, և պատշաճորեն ուղղորդել էր նրանց, թե ինչպես պետք է նրանք հաշվի առնեին այն իրենց վճիռը կայացնելիս: Չնայած երկրորդ դիմումատուն չփոխեց իր այն կարծիքը, որ նույնիսկ դատավորի ճիշտ ուղղորդումը չէր կարող վերացնել անարդարությունը, Վերաքննիչ դատարանը գտավ, որ երդվյալ ատենակալներին տեղեկացրել էին այն բոլոր հարցերի մասին, որոնք կարևոր էին իրենց որոշումը կայացնելիս: Դատապարտման վերաբերյալ բողոքը մերժվեց 2006թ. հունվարի 24-ին: Վերաքննիչ դատարանը, այնուամենայնիվ,

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

թույլատրեց երկրորդ դիմումատուին բողոքարկել իր նկատմամբ նշանակված պատիժը և այն նվազեցրեց՝ 9 տարի ազատազրկումը դարձնելով 7 տարի:

II. Գործին առնչվող ներպետական օրենսդրությունը և դրա կիրառումը

A. Երկու գործին առնչվող ընդհանուր իրավունքի սկզբունքները

40. Ասեկոսե ապացույցը փաստի հաստատումն է, որը տարբերվում է սեփական իմացության հիման վրա արված վկայություններից և արվում է վկայի կողմից բանավոր վկայության ձևով (տե՛ս *Ռ-ն ընդդեմ Հորնքեսլի* և այլոց գործում *Լորդ Ֆիլիպսի* վճռի 20-րդ կետ, որն ամփոփված է ստորև՝ 57-62-րդ կետերում): Որպես կանոն, այն անընդունելի է քրեական գործում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն թույլատրված է ընդհանուր իրավունքի որևէ նորմով կամ որևէ օրենքի դրույթով:

Գործին առնչվող նորմատիվ դրույթները, որոնք վերաբերում են երկու դիմումատուների գործին, ներառված են հաջորդ բաժնում: Այդ օրենսդրական սահմանումները լրացվում են ընդհանուր իրավունքի երեք սկզբունքով: Առաջին՝ ընդհանուր իրավունքում դատավորն օժտված է լրացուցիչ հայեցողությամբ՝ բացառելու ցանկացած ապացույց, որի նախադատելի ազդեցությունը գերակշռում է դրա ապացուցողական նշանակության նկատմամբ: Սա, իր հերթին, լրացվում է 1984թ.-ի Ոստիկանության և քրեական ապացույցի մասին ակտի 78-րդ բաժնով, որը դատարանին հայեցողություն է տալիս բացառել ապացույցը, եթե դրա ընդունումը արդար դատավարության վրա կարող է ունենալ այնպիսի հակասական ազդեցություն, որի պատճառով այդ ապացույցը չպետք է ընդունվի: Երկրորդ՝ եթե անուղղակի ապացույցն ընդունվում և հրապարակվում է երդվյալ ատենակալների առջև, ապա գործը քննող դատավորն ամփոփելիս պետք է հայտնի երդվյալ ատենակալներին այն վտանգների մասին, որոնք կարող են առաջանալ ասեկոսե ապացույցների վրա հիմնվելու դեպքում: Երրորդ՝ երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարության ժամանակ ատենակալները պետք է ստանան ապացույցի կարևորության վերաբերյալ ավանդական ուղղորդում, այսինքն՝ նրանք պետք է համոզված լինեն մեղադրյալի մեղքի մեջ առանց որևէ հիմնավոր կասկածի:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

B. Հիմնական օրենսդրություն

1. Այլ-Քավայայի գործին առնչվող հիմնական օրենսդրությունը:

41. Առաջին դիմումատուի դատավարության ժամանակ 1988թ-ի Քրեական արդարադատության ակտի 23-28-րդ բաժինները հանդիսանում էին կարևոր օրենսդրական հիմք: 1988 թ-ի ակտի 23-րդ բաժինը նախատեսում է, որ քրեական դատավարությունում ընդունելի են փաստաթղթային տեսքով ասեկոսե ապացույցները.

“23.— ... որևէ անձի կողմից փաստաթղթի ձևով տրված ցուցմունքը պետք է քրեական դատավարության ընթացքում ընդունվի որպես ապացույց, որն ընդունելի կլինի դատավարության ժամանակ այդ իսկ անձի կողմից բանավոր վկայություն տալիս, եթե.

(2)(a) ցուցմունք տված անձը մահացել է կամ ֆիզիկական կամ մտավոր խնդիրների պատճառով ի վիճակի չէ ներկայանալ որպես վկա...

25.—(1) Եթե, հաշվի առնելով բոլոր հանգամանքները՝

(a) Թագավորական դատարանը,

(i) մեղադրանքի դատալսման ժամանակ;

(ii) մագիստրատների դատարանի կողմից բողոքարկման ժամանակ, կամ

(iii) դիմումը քննարկելու նիստի ժամանակ համաձայն 1987թ-ի քրեական արդարադատության ակտի 6-րդ բաժնի [1987 c. 38.] (խարդախության մեղադրանքի դեմ բողոքներ, որոնք մագիստրատների դատարանից փոխանցվել են Թագավորական դատարան), կամ

(b) Վերաքննիչ դատարանի քրեական բաժինը, կամ

(c) մագիստրատների դատարանը տեղեկատվության վերաբերյալ նիստին,

այն կարծիքին է, որ արդարադատության շահերից ելնելով՝ այն ցուցմունքը, որն ընդունելի է վերոնշյալ 23-րդ և 24-րդ բաժինների համաձայն, այնուամենայնիվ կարող է անընդունելի լինել, այն կարող է ուղղորդել, որպեսզի ցուցմունքն ընդունելի չլինի:

(2) Վերևում բերված ենթաբաժնի նկատմամբ առանց որևէ կանխակալ մոտեցման՝ դատարանը պարտավոր է հաշվի առնել.

(«ա») ցուցմունքը պարունակող փաստաթղթի բնույթն ու աղբյուրը և հաշվի առնելով ցուցմունքի բովանդակությունն ու աղբյուրը և որևէ այլ հանգամանք, որ դատարանը կարող է կարևոր համարել և որոնցից բխում է, որ փաստաթուղթը վավեր է,

(«բ») ինչքանով է ցուցմունքը կարևոր որպես ապացույց, որն այլ կերպ հասանելի չէր լինի,

(«գ») այդ ցուցմունքի միջոցով տրամադրվող ապացույցի վերաբերելիությունը որևէ հարցի, որը հավանական է, որ պետք է որոշվի դատավարությունում, և

(«դ») ցանկացած վտանգ, հաշվի առնելով այն հանգամանքը, թե արդյոք հնարավոր չէ հերքել ցուցմունքը, եթե ցուցմունք տվող անձը չի ներկայանում բանավոր վկայություն տալու

[Type text]



դատավարությանը, և որ դրա ընդունումը կամ բացառումը կարող է անարդարության պատճառ դառնալ մեղադրյալի համար, կամ էլ, եթե մեկից ավելին են, ապա դրանցից ցանկացած որևէ մեկի հետ կապված:

26.— Եթե քրեական վարույթում համաձայն վերոնշյալ 23 և 14-րդ կետերի ընդունելի ցուցմունքը դատարան նախապես պատրաստված է ներկայացվում հետևյալ նպատակներով.

(«ա») ընթացիկ կամ նախատեսված վարույթների համար

(«բ») քրեական հետաքննության համար,

Ապա առանց դատարանի որոշման ցուցմունքը որպես վկայություն քրեական վարույթ չի մտնի, և դատարանն էլ իր հերթին թույլատրություն չի տա մինչև որ համոզված չլինի, որ ցուցմունքը պետք է վարույթ մտնի արդարադատության շահերից ելնելով, իսկ իմանալու համար արդյոք ցուցմունքի վարույթ մտնելը արդարադատության շահերից է բխում թե ոչ, դատարանը պետք է հաշվի առնի հետևյալը.

(i) ցուցմունքի էությունը;

(ii) ցանկացած վտանգ, հաշվի առնելով հատկապես, թե ինչքանով է հնարավոր ձևափոխել ցուցմունքը, եթե այդ ցուցմունքը տվող անձը չի ներկայանում դատավարության բանավոր վկայություն տալու համար, ինչպես նաև այն, որ ցուցմունքի ընդունումը կամ բացառումը կարող են անարդար լինել մեղադրյալի հանդեպ, իսկ եթե մեկից ավելի մեղադրյալ կա, ապա նրանցից որևէ մեկի հանդեպ

(iii) ցանկացած այլ հանգամանք, որ կարող է կարևոր համարվել դատարանի կողմից»

Ակտի վերոնշյալ (2) մասը թույլ է տալիս ընդունել ապացույցը, հիմնվելով ցուցմունք տվող անձի վստահելի ու կայուն լինելու փաստի վրա, այն դեպքում, երբ այդ ապացույցը ընդունելի լիներ տվյալ անձի անձամբ վկայություն տալու, կամ էլ՝ խաչաձև հարցաքննելու դեպքում: Վերոնշյալ մասում նշված օրենսդրության համաձայն ցուցմունքի կարևորությունը գնահատելիս, եթե, իհարկե, այն կարևոր է, պետք է հաշվի առնվեն այն բոլոր հանգամանքները, որոնց միջոցով հնարավոր կլինի ցուցմունքի ճշգրտության վերաբերյալ ողջամիտ եզրահանգման գալ:

2. Թահերիի գործին առնչվող հիմնական օրենսդրություն

(a) Օրենսդրական հանձնաժողովի զեկույցը

42. 1997թ-ի իր «Ապացույցը քրեական դատավարությունում. Ասեկոսե ապացույց և հարակից նյութեր» կոչվող զեկույցում Օրենսդրական հանձնաժողովը Անգլիայում և Ուելսում ասեկոսե ապացույցի օրենքի վերաբերյալ մի շարք բարեփոխումներ առաջարկեց, ներառյալ 1988թ-ի ակտով նախատեսված դրույթները: Ի հավելում այն պայմանների պարզեցման, որոնց դեպքում ցուցմունքն ընդունելի է դատավարության ընթացքում (ներառյալ մահվան և վախի առկայության դեպքում),

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Հանձնաժողովն առաջարկեց, որ ասեկոսե ասպացույցն ընդունելու վերաբերյալ սահմանափակ հայեցողություն պիտի թողնվի, եթե օրենսդրության կամ ընդհանուր իրավունքի շրջանակներում դրա վերաբերյալ որևէ բացառություն չի նախատեսվում (առաջարկություն 28):

Իր ավելի վաղ խորհրդատվական թերթում, որը հրատարակվել էր 1995թ., Հանձնաժողովը վերանայել է այս դատարանի նախադեպի վերաբերյալ Հոդված 6-ի 3(«դ»)-րդ կետը և եզրակացրել, որ կոնվենցիայի խախտման վտանգ կա, քանզի մարդուն դատելու էին՝ հիմնվելով միայն ասեկոսե ասպացույցի վրա: Ըստ Հանձնաժողովի՝ այս վտանգն այնքան լուրջ էր, որ գործը քննող դատարանը պետք է ծանուցեր գործը դադարեցնելու մասին, եթե ասեկոսե ասպացույցը լիներ մեղադրող կողմի միակ ասպացույցը (խորհրդատվական թերթի 9.5-րդ կետ): Այս առաջարկի քննադատությունից հետո (հիմնականում ոչ պատշաճ զգուշությամբ արված լինելու և գործնական խնդիրներ առաջացնելու պատճառով), 1997թ-ի զեկույցում Հանձնաժողովը որոշեց չպահպանել առաջարկը (տե՛ս զեկույցի 5.33-5.41-րդ կետեր): Ապա եզրափակեց, ասելով, որ փոխարենը համապատասխան պաշտպանություն կտրամադրվի իր առաջարկած երաշխիքներով, մասնավորապես 47-րդ երաշխավորագրով, որի համաձայն դատը վարող դատավորին հնարավորություն էր տրվում դադարեցնել գործը, եթե ասեկոսե ասպացույցը համոզիչ չլիներ: (տե՛ս ստորև՝ 45-րդ կետ):

(b) 2003թ.-ի Քրեական արդարադատության ակտը

43. 2003թ-ի Քրեական արդարադատության ակտի 11-րդ մասի 2-րդ գլուխն ուժի մեջ մտավ 2005թ-ի ապրիլին: Օրենսդրական Հանձնաժողովի նախնական օրինագծով առաջարկվեց հիմնովին բարեփոխել քրեական վարույթում ասեկոսե ասպացույցի վերաբերյալ օրենքը:

2003թ-ի 114-րդ բաժնի համաձայն ասեկոսե ասպացույցը ընդունելի է միայն քրեական վարույթում, եթե հանդիսանում է մի շարք ելքերից մեկը: Չնայած երկրորդ դիմողի գործը այդ ասպացույցի վրա հիմնված չէր, այնուամենայնիվ, 114(1)(«դ»)-րդ բաժինը նմանատիպ մի ելք է, ըստ որի ասեկոսե ասպացույցն ընդունելի է, եթե դատարանը գտնում է, որ արդարադատության շահերից է բխում, որ այն ընդունելի լինի: 114(2)-րդ բաժնում նշվում է.

“Որոշելիս, թե արդյոք ոչ բանավոր վկայությամբ տրված ցուցմունքը պետք է ընդունվի (1)(«դ») ենթաբաժնի համաձայն, թե ոչ, դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ գործոնները (և այլ գործոններ, որոնք դատարանը կարևոր կհամարի).

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

(a) ինչպիսի ապացուցողական նշանակություն ունի ցուցմունքը (եթե այն համարենք ճշմարիտ) գործի առնչությամբ, կամ էլ՝ ինչքանով է կարևոր գործին առնչվող մյուս ապացույցները հասկանալու համար.

(b) ուրիշ ինչ ապացույց է կա կամ կարող է տրվել տվյալ գործի առնչությամբ համաձայն (a) կետի,

(c) ինչքանով է կարևոր (a) կետում նշված ապացույցը թեման գործի առնչությամբ,

(«դ») ցուցմունքի տրման պայմանները,

(e) ինչքանով է վստահելի ցուցմունք տվող անձը,

(f) ինչքանով է ցուցմունքը հավաստի որպես ապացույց,

(g) արդյոք հնարավոր է բանավոր վկայություն տալ, եթե ոչ, ապա ինչու հնարավոր չէ,

(h) ինչքանով է դժվար ստուգել ցուցմունքի հավաստիությունը,

(i) ինչքանով այդ դժվարությունը կվնասի տվյալ կողմին, ում դեմ ուղղված է այդ ցուցմունքը»:

44. Երկրորդ դիմողի գործի դեպքում հիմք է հանդիսացել 116-րդ բաժինը, ըստ որի ցուցմունքն ընդունելի է վկայի բացակայության դեպքում: Գործի առնչությամբ 116-րդ բաժնում նշվում է.

“(1) Քրեական դատաքննության ժամանակ ցուցմունքը, որը բանավոր վկայությամբ չի տրվում դատաքննության ընթացքում, ընդունելի է որպես ապացույց, եթե

(a) ցուցմունք տված անձի ցուցմունքը դատաքննության ժամանակ բանավոր վկայությամբ տալու դեպքում ընդունելի լիներ որպես ապացույց,

(b) ցուցմունք տված անձը որպես գործի համար կարևոր անձ բավարարում է դատարանի պահանջները,

(c) (2) ենթաբաժնում նշված պայմանները բավարարված են:

(2) Պայմաններն են՝

a) գործին առնչվող անձը մահացել է,

(b) գործին առնչվող անձը ֆիզիկական կամ մտավոր խնդիրների պատճառով չի կարող ներկայանալ որպես վկա,

(c) գործին առնչվող անձը Միացյալ Թագավորությունում չի գտնվում, և գործնականում հնարավոր չէ ապահովել նրա մասնակցությունը,

(«դ») գործին առնչվող անձին հնարավոր չէ գտնել, չնայած այն բանի, որ ողջամտության սահմաններում ամեն քայլ ձեռնարկվել է նրան գտնելու համար,

(e) գործին առնչվող անձը վախից դրդված ընդհանրապես բանավոր վկայություն չի տալիս (կամ չի շարունակում վկայություն տալ) դատաքննության ժամանակ, կամ էլ՝ մասամբ կախված ցուցմունքի բովանդակությունից, և դատարանը թույլատրում է ցուցմունքը որպես ապացույց օգտագործել:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

(3) (2) ենթաբաժնի (e) կետի համաձայն մեծ տեղ է տրվում «վախին», որը (օրինակ) ներառում է մահվան վախ, որևէ անձի վնասելու վախ, կամ ֆինանսական կորուստ ունենալու վախ:

(4) (2) ենթաբաժնի (e) կետի համաձայն թույլատրություն կարող է տրվել միայն, եթե դատարանը որոշի, որ արդարադատության շահերից է բխում ընդունել ցուցմունքը՝ հաշվի առնելով

(a) ցուցմունքի բովանդակությունը,

(b) ցանկացած վտանգ, որ դրա ընդունումը կամ բացառումը կարող է առաջ բերել անարդարություն որևէ կողմի հանդեպ (հատկապես, հաշվի առնելով, թե ինչքանով հնարավոր կլինի ստուգել ցուցմունքի հավաստիությունը, եթե գործին առնչվող անձը բանավոր վկայություն չտա),

(c) համապատասխան դեպքերում այն փաստը, որ 1999թ-ի Երիտասարդ արդարադատության և Քրեական ապացույցի (c. 23) (վախեցած անձանց վկայություն տալու հատուկ միջոցներ և այլն) մասին ակտերով կարելի է առաջնորդվել գործին առնչվող անձի առնչությամբ, և

(«դ») ցանկացած այլ կարևոր հանգամանք:

(5) (2) ենթաբաժնի որևէ կետով նախատեսված պայման, որը գործնականորեն բավարարված է, պետք է համարվի ոչ բավարարված, եթե ցույց տրվի, որ այդ կետով նախատեսված հանգամանքները պատճառվել են.

(a) այն անձի կողմից, որի պաշտպանության համար տրվել է ցուցմունքը որպես ապացույց, կամ

(b) այն անձի կողմից, որը գործում է իր անունից,

որպեսզի կանխի գործին առնչվող անձի կողմից վկայություն տալը դատաքնության ժամանակ (ամբողջությամբ կամ մասամբ՝ հիմնվելով ցուցմունքի բովանդակության վրա)»

45. Ակտի 121-րդ բաժնի համաձայն Ակտի 116(2)(e)-րդ բաժնի վրա կարելի է հիմնվել միայն առաջին ասեկոսե ապացույցի դեպքում, հնարավոր չէ, միայն դրա վրա հիմնվելով, ընդունել մի քանի ասեկոսե ապացույց:

Բացի այդ 124-րդ բաժինը թույլ է տալիս ընդունել ապացույցը, որպեսզի ստուգի բացակա վկայի արժանահավատությունը. օրինակ՝ ընդունելով նրա վատ բնավորություն ունենալու մասին վկայությունը, ներառյալ նախկին դատապարտումները, սուտ խոսելու հակումը և այլն: Այն նաև հնարավորություն է տալիս ընդունել վկայի կողմից արված անհամատեղելի ցուցմունքներ: 124(2)-րդ բաժնով նախատեսված կարգով հնարավոր է ընդունել վկայությունը, որպեսզի ստուգվի բացակա վկայի արժանահավատությունը այն դեպքում, եթե այն ընդունելի չլինեք բանավոր վկայություն տալու դեպքում, օրինակ՝ եթե այն վերաբերում է ազգակցական հարցի:

Եթե գործը ամբողջությամբ կամ մասամբ հիմնված է ասեկոսե ապացույցի վրա, 125-րդ բաժնով նախատեսված կարգով գործը քննող դատավորը պետք է դադարեցնի գործը (և ուղղորդի դեպի արդարացում, կամ էլ՝ ցրի երդվյալ ատենակալներին), եթե,

[Type text]



հաշվի առնելով դրա կարևորությունը մեղադրյալի դեմ գործում, ասեկոսե ապացույցը այնքան անհիմն է, որ կարող է հանգեցնել անարդար դատապարտման: Մրանով գործի դրվեց Օրենսդրական հանձնաժողովի 47-րդ հանձնարարականը (տե՛ս ստորև՝ 42-րդ կետ):

126-րդ բաժնով պահպանվում են գործը քննող դատավորի՝ և՛ ընդհանուր իրավունքով, և՛ 78-րդ բաժնով նախատեսված հայեցողությունը բացառելու ասեկոսե ապացույցը (տե՛ս ստորև՝ 40-րդ կետ): Այն նախատեսում է նաև օրինական հայեցողություն բացառելու ասեկոսե ապացույցը, եթե գործը քննող դատավորը համարում է, որ ասեկոսե ապացույցի բացառումը ավելի ճիշտ է, հաշվի առնելով ժամանակի կորուստը, որ կարող էր առաջանալ դրա ընդունումից, քան դրա ընդունումը՝ հաշվի առնելով ապացույցի նշանակությունը:

3. 2009թ-ի Կորոններների և Արդարադատության մասին ակտը

46. Քրեական դատավարության ժամանակ վկայի կողմից անանուն վկայություն տալու պայմանները կարգավորվում են 2009թ-ի Կորոններների և Արդարադատության մասին ակտով: Նախկինում այն կարգավորվում էր 2008թ-ի Քրեական ապացույցի (Վկայի անանունություն) մասին ակտի նմանատիպ դրույթներով, որն ուժի մեջ էր մտել՝ հաջորդելով Լորդերի պալատի որոշումը *Ռ-ն ընդդեմ Դեյվիսի* գործի վերաբերյալ (տե՛ս ստորև՝ 49-րդ և 50-րդ կետեր): 2009թ-ի ակտի համաձայն, վկաները կարող են անանուն վկայություն տալ, եթե դատաքննության ընթացքում մեղադրող կողմի կամ պաշտպանության կողմից ներկայացված դիմումի համապատասխան գործը քննող դատավորը «անանուն վկայության» որոշում է կայացնում: 87-րդ բաժնի համաձայն պահանջվում է, որ գործը քննող դատավորը տեղեկացված լինի վկայի ինքնության մասին: 88(2)-(6) 89-րդ բաժիններով սահմանվում են անանուն վկայության որոշում կայացնելու պայմանները: Որոշելիս, թե աղյոք այդ պայմաններն առկա են, թե ոչ, դատավորը, նախ և առաջ, պետք է հաշվի առնի, որ վկայի կողմից տրված վկայությունը կարող է մեղադրյալի առնչությամբ միակ կամ որոշիչ ապացույցը լինել (բաժին 89(2)(c)).

4. 1998թ-ի Մարդու իրավունքների մասին ակտը

47. 1998թ-ի Մարդու իրավունքների մասին ակտի 2-րդ բաժնի համաձայն Կոնվենցիայի իրավունքի հետ առնչվող ցանկացած հարց որոշելիս դատարանները և տրիբունալները պետք է հաշվի առնեն այս դատարանի նախադեպերը այնքանով, ինչքանով դատաքննության համար կարևոր կհամարեն:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

6(1)-րդ բաժնի համաձայն հանրային մարմնի գործողությունները համարվում են անօրինական, եթե դրանք հակասում են Կոնվենցիայի իրավունքին:

C. Գործի հետ առնչվող Անգլիայի և Վելսի նախադեպերը

1. Ռ-ն ընդդեմ Սելիկի և Սելիկը

48. Այս Դատարանի *Լուկան ընդդեմ Իտալիայի* որոշումը (թիվ 33354/96, 40-րդ կետ, ՄԻԵԴ 2001-II) քննվել է Վերաքննիչ դատարանի կողմից *Ռ-ն ընդդեմ Սելիկի և Սելիկը* գործի առնչությամբ (2005թ, ՄԻԵԴ 651), որում ներգրավված էին երկու մեղադրյալ, որոնք պնդում էին, որ ունեին վախեցած վկաներ: Գործը քննող դատավորը թույլատրեց հրապարակել վկաների ցուցմունքները երդվյալ ատենակալների առջև: Մեղադրյալները բողոքարկեցին այն հիմքով, որ ցուցմունքների ընդունումը հակասում էր Կոնվենցիայի Հոդված 6 1-ին և 3 («դ»)-րդ կետերին: Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը: Գործին առնչվող նախադեպը դիտարկելիս Դատարանը որոշման 50-րդ կետում նշել է, որ օգտվել են այդ նախադեպի հետևյալ կետերից.

i) Ապացույցի ընդունումը, նախ և առաջ, ազգային իրավունքից է բխում;

ii) Ապացույցը, որպես կանոն, պետք է տրվի հանրային լսման ժամանակ վկայությամբ, և որպես կանոն 6(1) և (3)(«դ») հոդվածների համաձայն մեղադրյալին պետք է տալ համապատասխան հնարավորություն ստուգելու և հարցաքննելու վկաներին;

iii) Դեպոնացված ցուցմունքի կարդալը պարտադիր կերպով չի հակասում 6(1) and (3)(«դ») հոդվածներին, ինչպես նաև նույնիսկ այն դեպքում, եթե հնարավոր չի եղել հարցաքննել վկային դատաքննության որևէ փուլում: Հոդված 6(3)(«դ»)-ը պարզապես ի ցույց է դնում այն բոլոր հարցերը, որոնք պետք է հաշվի առնել որոշելու, թե արդյոք դատավարությունը արդար էր, թե ոչ: Դատարանը կարևորում է ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև այն գործընթացները, որոնք հակակշիռ են հանդիսանում պաշտպանության ցանկացած խոչընդոտի, որոնք կարևոր են հասկանալու համար, թե արդյոք ցուցմունքները կարդալու դեպքում դատավարությունը արդար է եղել, թե ոչ:

iv) Ապացույցի որակը և ներքին արժանահավատությունը, ինչպես նաև ապացույցի հավաստիության վերաբերյալ որոշակի զգուշությունը նույնպես կարևոր են որոշելու համար, թե արդյոք դատաքննությունը արդար էր, թե ոչ»:

Հետո Վերաքննիչ դատարանը ավելացրեց.

«Հարցը կայանում է նրանում, թե արդյոք կա ևս մեկ՝ հինգերորդ տարբերակ այն ազդեցության, որ կարող է առաջանալ այն դեպքում, երբ հանգամանքներն արդարացնում են ցուցմունքը հրապարակելը, որտեղ մեղադրյալը հնարավորություն չունի հարցաքննելու վկային դատաքննության որևէ փուլում, ցուցմունքը չպետք է հրապարակվի, եթե այն մեղադրյալի դեմ միակ և վճռորոշ ապացույցն է: Անշուշտ, առաջին հայացքից թվում է, որ Լուկայի 40-րդ կետի

[Type text]



համաձայն անկախ հանգամանքների և հակակշիռ գործոնների, ցուցմունքը հրապարակելը հակասում է 6-րդ հոդվածին, եթե ցուցմունքը հանդիսանում է միակ և վճռորոշ ապացույցը: Ավելին, դա էին վկայում նաև նախորդ աղբյուրները: Բայց ոչ՝ Լուկայի, ոչ՝ էլ այլ անձանց գործում ներգրավված չէին այնպիսի վկաներ, որոնք հայտնի էին մեղադրյալին, Բայց վախի պատճառով բացակայում էին, չնայած պետք է ընդունել, որ 40-րդ կետի համաձայն «Մաֆիա» տեսակի կազմակերպությունների և դատավարությունների վերաբերյալ հղումները ցույց են տալիս, որ դատարանը ի նկատի է ունեցել ծայրահեղ դեպքեր»:

2. Ռ-ն ընդդեմ Դեյվիսի

49. Ռ-ն ընդդեմ Դեյվիսի գործով ՄԹ-ի Լորդերի պալատի 2008թ-ի 36-րդ որոշմամբ քննվեց մեղադրյալի կողմից՝ դատապարտման դեմ ուղղված բողոքը, ըստ որի նա դատապարտվել էր հրաձգային սպանության երկու մեղադրանքով: Երեք վկա ցուցմունք են տվել դատաքննության ժամանակ՝ վկայելով, որ մեղադրյալն է կրակել: Նրանք անանուն են տվել վկայությունը էկրանի ետևում, այնպես որ միայն դատավորն ու երդվյալ ատենակալները կարող էին տեսել նրան, Բայց ոչ մեղադրյալը: Լորդերի պալատը միաձայն ընդունեց մեղադրյալի բողոքը:

Դատարանը վկաների ցուցմունքը անհամատեղելի համարեց երկարատև հաստատված անգլիական ընդհանուր իրավունքի սկզբունքի հետ, որը ենթակա է որոշ բացառությունների և օրենսդրական գնահատման. քրեական դատաքննության մեղադրյալը պետք է իրեն մեղադրողների հետ առերեսման հնարավորություն ունենա, որպեսզի կարողանա խաչաձև հարցաքննել նրանց և վիճարկել իրենց ցուցմունքի հավաստիությունը, սկզբունք, որ ձևավորվել է հին Հռոմում (Լորդ Բինգհամ, 5-րդ կետ):

Ավելին, այս դատարանը բացարձակապես դեմ հանդես չեկավ անանուն վկայությանը ամեն դեպքում: Այնուհանդերձ, նա նշել էր, որ վճիռը չպետք է ամբողջությամբ հիմնվի անանուն վկայության վրա, կամ էլ՝ անանուն վկայությունը չպետք է որոշիչ դեր ունենա վճիռը կայացնելիս: Ամեն դեպքում, հիմնվելով Դեյվիսի գործի փաստերի վրա, այս դատարանը 6-րդ հոդվածի խախտում կնկատեր. ոչ միայն վճիռն էր հիմնված անանուն վկայության վրա կամ անանուն վկայությունը որոշիչ դեր էր ունեցել վճիռը կայացնելիս, այլև արդյունավետ խաչաձև հարցաքննություն չէր իրականացվել:

50. Լորդ Մենսը, համամիտ լինելով վճռի հետ, ուսումնասիրեց այս դատարանի՝ 6-րդ հոդվածին առնչվող փաստական հիմքերը: Նա հանգեց այն եզրակացության, որ բացարձակ պահանջ կա, որ անանուն վկայությունը չի կարող լինել մեղադրյալի դեմ ուղղված միակ կամ որոշիչ ապացույցը: Իսկ այս ցուցմունքի որոշիչ լինելը կարող է հավասարակշռելու համար կարևոր գործոն հանդիսանալ: Ըստ նրա՝ Ռ-ն ընդդեմ [Type text]



Մեյիկի և Մեյիկ գործը (մյուս աղբյուրների հետ միասին) զգուշացում էր այն բանի դեմ, որ Կոնվենցիային կամ Դատարանի կողմից արված ընդհանուր պնդումներին չպետք է վերաբերվել որպես՝ բացարձակ կանոններ պարունակող աղբյուրներ:

3. Ռ-ն ընդդեմ Հորնքեյլի և այլոց

51. Առկա գործերի վերաբերյալ Պալատի 2009թ-ի հունվարի 20-ի որոշումը հաշվի է առնվել Վերաքննիչ դատարանի և ՄԹ-ի Գերագույն դատարանի կողմից Ռ-ն ընդդեմ Հորնքեյլի և այլոց գործը քննելիս: Գործն առնչվում էր չորս մեղադրյալների բողոքներին, որոնք դատապարտվել էին բացակա վկաների ցուցմունքների հիման վրա, որոնք հրապարակվել են դատավարության ժամանակ՝ համաձայն 2003թ-ի ակտի 116-րդ կետի: Երկու մեղադրյալների համար ցուցմունք տված անձը մահացել էր: Մյուս երկուսի դեպքում վկան վախից չէր ներկայացել դատավարությանը: Նրանց բողոքները քննվել են Քարթեր անունով հինգերորդ մեղադրյալի բողոքի հետ, որի դատապարտման համար հիմք էին հանդիսացել աշխատանքային գրառումները, որոնք ներկայացվել են դատավարությանը:

(a) Վերաքննիչ դատարանի որոշումը

52. 2009թ-ի մայիսի 22-ին Վերաքննիչ դատարանը միաձայն մերժեց 4 մեղադրյալների բողոքները ([2009] EWCA Crim 964): Վերջինս համաձայն էր, որ Հոդված 6-ի 3(«դ»)-րդ կետն իր ուրույն բովանդակությունն ուներ, բայց այն բացարձակ հնարավորություն չի տալիս հարցաքննելու ցանկացած վկայի. 2003թ-ի ակտով հաստատված հավասարակշռությունը օրինական է և Կոնվենցիային համապատասխան: Ասեկոսե ապացույցն ընդունելը կարող է լուրջ բացասական ազդեցություն ունենալ. այդ իսկ պատճառով պետք է զգուշությամբ մոտենալ այդ հարցին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով 2003թ-ի ակտով նախատեսված երաշխիքները, որոնք խստորեն կիրառվում էին, Հոդված 6-ի խախտում չէր լինի, եթե մեղադրանքը հիմնված լիներ միայն ասեկոսե ապացույցի վրա կամ եթե այն որոշիչ դեր ունենար:

Այն դեպքում, երբ ասեկոսե ապացույցն ակնհայտորեն հավաստի լիներ, կամ էլ հնարավոր լիներ պատշաճորեն ստուգել կամ գնահատել դրա հավաստիությունը, ապա պաշտպանության կողմի իրավունքները պաշտպանված կլինեին, բավարար հակակշիռ միջոցներ կլինեին, և դատավարությունը արդար կլիներ: Ճիշտ չէ ունենալ կանոն, ըստ որի հակակշիռ միջոցները երբեք չեն կարող բավարար լինել այն դեպքում, երբ ասեկոսե ապացույցը միակ կամ որոշիչ ապացույցն է: Սա քննարկվեց և մերժվեց Իրավունքի հանձնաժողովի և Պառլամենտի կողմից 2003թ-ի ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

53. Միակ կամ որոշիչ կանոնի հետ կապված կային նաև սկզբունքային և գործնական խնդիրներ: Առաջինը՝ որպես սկզբունքային խնդիր փորձը ցույց տվեց, որ բոլոր ասեկոսե ապացույցները հավաստի չէին բաց դատավարության ժամանակ դրանք վիճարկելու հնարավորության բացակայության դեպքում, և երկրորդը՝ փաստ փնտրողներին (ինչպես երդվյալ ատենակալներին) հնարավոր չէր լինի վստահել, որ նրանք ճիշտ կգնահատեին ապացույցը: Ոչ՝ առաջին, ոչ՝ էլ երկրորդ ենթադրությունն արդարացված չէին: Առաջինի համար վերաքննիչ դատարանը ասեկոսե ապացույցի օրինակներ բերեց, որոնց վրա կարելի է հիմնվել. օրինակ՝ տուժողի դեպքում, որը մահանալուց առաջ հայտնում է իրեն սպանողի անունը: Երկրորդի համար վերաքննիչ դատարանը գտավ, որ երդվյալ ատենակալները միանգամայն հասկանում էին գրավոր ցուցմունքի սահմանափակումները, և 2003թ-ի ակտի համաձայն ցուցմունք տվողի վերաբերյալ նրանց տեղեկություն կտրվեր (տե՛ս ստորև՝ 45 կետ): Միակ փաստը, որ վկայությունը կարևոր օղակ է մեղադրյալի դեմ ապացույցի շղթայում, չէր փոխում այդ եզրահանգումը: Օրինակ՝ դատաբժշկական ապացույցը կարող է ձեռք բերվել անհայտ լաբորատորիայի աշխատակիցների կողմից կատարված աշխատանքի միջոցով (նման ձևով էլ ասեկոսե ապացույցն էր): Այնուամենայնիվ, ապացույցի հավաստիությունը ստուգելու համար հարկ չկար կանչել լաբորատորիայի այն բոլոր աշխատակիցներին, ովքեր աշխատել էին ապացույցի վրա:

54. Դատարանը նաև գտավ, որ ապացույցի միակ կամ որոշիչ լինելու դեպքում կային գործնական խնդիրներ ապացույցի ընդունելիությունը ստուգելու համար: Դատարանը նշեց.

«Ալ-Քավայան ընդդեմ ՄԹ-ի գործի որոշման մեջ ակնհայտ է, որ ըստ ՄԻԵԴ-ի ասեկոսե ապացույցն **ընդունելը** սխալ է եղել (տե՛ս հատկապես 37,40,42 և 46 կետերը): Ցուցմունքի ընդունելիությունը պետք է ստուգվի մինչև այն վերցնելը՝ անկախ դատավարության արդյունքից: Ցուցմունքի ընդունելիության հերթական ստուգումը, որը կարելի է իրականացնել հետադարձ ձևով դատախոսից հետո, դատավարության ընթացքը փոքր-ինչ հայեցողական է դարձնում: Դատավորը, երդվյալ ատենակալները, վկաները և կողմերը կարող են անորոշ վիճակում հայտնվել՝ չիմանալով, թե արդյոք դատավարության արդյունքը կփոփոխվեր այն հիմքով, որ, ինչպես պարզվել է, ապացույցը չի բավարարել ընդունելիության չափանիշին: Եվ ոչ էլ մեղադրյալը կարող է կողմնորոշվել, թե ինչպես վարվել, և, իհարկե, խոստովանել մեղքը, թե ոչ, եթե չիմանա, թե որ ապացույցի վրա հնարավոր կլինի հիմնվել:

Անկասկած, շատ հաճախ հնարավոր կլինի տարբերակել այն գործը, որում ասեկոսե ապացույցը միակ ապացույցն է մեղադրյալի դեմ: Վառ օրինակ է մի այժ ունեցող վկայի գործը, որտեղ որևէ այլ աղբյուրից որևէ օժանդակ միջոց չկա: Բայց սա շատ հաճախ սկզբում կարող է պարզ չլինել. հնարավոր է, որ մեղադրանքի կողմը մտադրված լինի ներկայացնել մեկ այլ ապացույց, որը պարզվի, որ ամենևին էլ մեղադրյալի դեմ ուղղված չի, կամ էլ արդյունավետ կերպով հերքվի:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Հնարավոր է նաև հակառակը. սկզբում ներկայացված միակ ասեկոսե ապացույցին կարող են ավելանալ այլ օժանդակ նյութեր: Վկան կարող է ավելացնել շատ կարևոր տեղեկություն, որը նախապես չէր նշվել, կամ էլ տվյալ վկայությունը կարող է ակներև դառնալ դրա հետ չկապված մեկ այլ ապացույցի ի հայտ գալուց հետո: Ամեն դեպքում, այն դեպքերում, երբ մեկից ավելի մեղադրյալներ միասին են մեղադրվում, փորձը ցույց է տալիս, որ մեկի գործի հետ կապված ապացույցը կարող է մեծապես ազդել մյուսի արդարացման կամ դատապարտման վրա: Ուստի «միակ» ապացույց հասկացությունը բավարար չէ ստուգելու ընդունելիությունը:

Այնուամենայնիվ, առաջարկված թեստի երկրորդ մասն է, որ կարող է ամենամեծ խնդիրներն առաջացնել: Ոչ ոք չի կարող ասել, թե որ ապացույցն է որոշիչ, քանի դեռ որոշում կայացնելու գործընթացը չի ավարտվել: Ընդունելիության հարցը որոշելիս հնարավոր չէ կանխավ որոշել, թե ինչքանով է ապացույցը որոշիչ: Որոշիչ լինելն ստուգելն ավելի է դժվարանում, երբ «որոշիչ» բառի իմաստն այնքան է ընդլայնվում, որ իր մեջ ներառում է ցանկացած ապացույց, որի բացակայության դեպքում դատապարտման հեռանկարը կկրճատվեր՝ խթանելով արդարացումը (տե՛ս 21 կետ, Ալ-Քավայա): Անշուշտ, եթե դա է որոշիչ լինելն ստուգելու ձևը, տեսականորեն ցանկացած ապացույց կարող է լինել որոշիչ, իսկ այն ապացույցը, որը, ընդունվելով երդվյալ ատենակալների կողմից չի, խթանում դատապարտման հեռանկարը, սովորաբար կբացառվի որպես գործին չառնչվող»:

Վերաքննիչ դատարանը նշեց նաև, որ այդ թեստը դժվար կլինի կիրառել նաև այն դատավարության դեպքում, որտեղ երկու կամ ավելի մեղադրյալի գործ է քննվում, և որոնցից մեկը ցանկանում է ասեկոսե ապացույց ներկայացնել ի օգուտ իրեն: Այս դեպքում գործը քննող դատավորը պարտավոր կլինի թույլ տալ մեղադրյալին ներկայացնել ապացույցը նույնիսկ այն դեպքում, եթե այդ նույն ապացույցը մեղադրյալներից որևէ մեկի դեմ ուղղված լինի և որոշիչ ապացույց հանդիսանա այդ իսկ մեղադրյալի գործում:

55. Վերաքննիչ դատարանը նշեց նաև, որ 2003թ-ի ապրիլի 125-րդ բաժնով ներառված երաշխիքը (գործը քննող դատավորի լիազորությունը գործի քննությունը դադարեցնելու վերաբերյալ, եթե ասեկոսե ապացույցը համոզիչ չէ. տե՛ս 45 կետ), որը նախատեսված է ասեկոսե ապացույցի «հավաստիության համաչափ գնահատման համար», չի ծառայի հանուն արդարության, եթե պահանջվեր, որ այդ լիազորությունը կիրառվեր ցանկացած գործում, որտեղ ասեկոսե ապացույցը միակ կամ որոշիչ ապացույցն է: Միակ կամ որոշիչ ասեկոսե ապացույցը կարող էր ամբողջությամբ համոզիչ լինել, ինչպես նաև ապացույցը, որը միակ կամ որոշիչ ապացույց չէ, կարող է այնպիսի պոտենցիալ ազդեցություն ունենալ երդվյալ ատենակալների վրա, որ դատավորը դատապարտման հետ կապված վտանգ կզգա: Այն դեպքում, երբ օրինական փաստարկ է բերվում, որ ասեկոսե ապացույցը համոզիչ չէ, բայց կարևոր է գործի համար, գործը քննող դատավորը պարտավոր է որոշել, թե արդյոք դրանով դատապարտումը չի վտանգվի, իսկ դրա համար պետք է գնահատել ասեկոսե ապացույցի հավաստիությունը, դրա տեղը մյուս ապացույցների ամբողջության մեջ, [Type text]

գործի հետ կապված հարցերը և գործի հետ կապված մյուս բոլոր հանգամանքները: Ի վերջո, 2003թ-ի ակտով նախատեսված մնացած երաշխիքները խստորեն կիրառվում էին, և ասեկոսե ապացույցն ընդունելու դեպքում մեղադրյալների առջև ծառայած խնդիրները շատ լավ գիտակցվում էին դատարանների կողմից: Ակտը չի հավասարեցնում ասեկոսե ապացույցը ուղղակի ապացույցի հետ, ընդհակառակը՝ այն պահանջում է զգուշավոր վերաբերմունք:

56. Վերաքննիչ դատարանը նաև ուղղորդեց, ասելով, թե երբ է ավելի տեղին թույլ տալ ներկայացնել ասեկոսե ապացույցը, եթե վկան վախեցած է: Դատարանի նախադեպային իրավունքում որևէ պահանջ չկար, ըստ որի վախը պիտի վերագրվեր մեղադրյալին. հիմնական հարցը կայանում էր նրանում, թե արդյոք վկայի բացակայելու հիմնավոր պատճառ կար, և արդյոք ապացույցի հավաստիությունը ակնհայտ էր, կամ էլ արդյոք հնարավոր կլինի ստուգել կամ գնահատել ապացույցի հավաստիությունը: Վերաքննիչ դատարանն ավելացրեց.

«Այնուամենայնիվ շատ կարևոր է, որ հնարավոր ամեն ինչ արվի վկայի ներկայությունը դատարանում ապահովելու համար: Ինչպես գիտենք առերեսման իրավունքը ընդհանուր իրավունքի երկարատև պահանջն է, որը նախատեսված է նաև Հոդված 6(3)(«դ»)-ով: Վկայի բացակայությունը հնարավոր է միայն սահմանափակ դեպքերում, այն էլ՝ 2003թ-ի ակտով նախատեսված պայմանների առկայության դեպքում: Վկային պետք է տրվի ցանկացած աջակցություն, բայց պետք է նրան նաև հասկացնել քաղաքացու պարտականությունների կարևորությունը: Եվ իսկապես, բռնությունն ու ահաբեկչությունը կտարածվեն, եթե այդ պարտականությունը չիրականացվի, և ընդհակառակը՝ դրանք կնվազեն, մոտենալով իրենց վախճանին, պարտականությունն իրականացնելու դեպքում: Այդ իսկ պատճառով հնարավոր վկային չպետք է երբեք հավաստիացնել, որ նրա տված ցուցմունքը կիրապարակվի: Առանց մեղադրյալի համաձայնության միայն դատարանն է կիրառում 2003թ-ի ակտով նախատեսված պայմանները՝ հիմնվելով այն վկայության վրա, որը կարող է համապատասխանել այդ ցուցմունքին: Ցանկացած հիշատակում, հավաստիացում կարող է մեծացնել հավանականությունը, որ սա իսկապես կպատահի. եթե այդպես լինի, ապա ապացույցի ազդեցությունը կնվազի և մեղադրյալի համար այդ ցուցմունքի անբարենպաստ ազդեցությունը կարող է հանգեցնել դրա չիրապարակման:

Հնարավոր է նաև, որ ոստիկանության կողմից ծանր հանցագործության քննության վաղ փուլում քննիչներին անհրաժեշտ լինի գաղտնի կերպով տեղեկություն ձեռք բերել. դա գործնական խնդիր է և ոչ մեզ համար: Բայց ոչ մի անձի, որը ոչ թե պարզապես տեղեկության աղբյուր է, այլ վկա, չպետք է ասվի, որ նրա տված ցուցմունքը հրապարակվելու է, կամ էլ ոչ մի հիշատակում, որ դա հնարավոր է: Նրան կարելի է առավելագույնս ասել, որ ակնկալվում է, որ վկաները հանդես գան դատարանում, և որ ցանկացած շեղում այդ սկզբունքից միայն բացառիկ դեպքերում է հնարավոր, և որ դատավորը, այլ ոչ թե ոստիկանն է որոշում, թե երբ է հնարավոր այդ շեղումը: Մարկիս և Գրահամ գործում (բողոքարկողներից երկուսը), ինչպես տեսանք 127-րդ և 132-րդ կետերում, Դատավորը գտավ, որ գործը քննող ոստիկանության սպան մեծապես նպաստել է վկայի վախի

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

առաջացմանը՝ անընդհատ անդրադառնալով հայտնի տեղական օրինակին, երբ վկաներին նույնիսկ բնակչության վայրը փոխելուց հետո հետապնդում են և սպանում: Չնայած որ այդ դեպքը հայտնի էր, այնուամենայնիվ շատ ծայրահեղ էր և հազվադեպ պատահող: Այն, որ ոստիկանները պարտավոր են զգուշությամբ խորհուրդ տալ հնարավոր վկաներին, չպետք է վերածվի պաշտպանելու նպատակով վկաներին ահաբեկող տեղեկություն տալուն: Թեև 2003թ-ի ակտով պահանջվում է, որ վախի հասկացությունը լայն մեկնաբանվի, չպետք է ակնկալվի, որ ոստիկանների կողմից ոչ պատշաճ հավաստիացումների վրա հիմնված վախի պատճառով վկայի ցուցմունքը հրապարակվելու է և դրա հիման վրա գործի վարույթը ներկայացվելու է երդվյալ ատենակալների առջև: Եթե վկայությունը երդվյալ ատենակալների կողմից կարող է իրապես գնահատվել միայն վկային տեսնելով, ինչպես շատ հաճախ է արվում, ապա այդ վկայությունը կարող է չընդունվել: Եթե այն ընդունվել է և որոշիչ դեր ունի գործի համար, ապա մեծ է հավանականությունը, որ դատավարության վերջում Դատավորը որոշում կկայացնի 125-րդ բաժնին համապատասխան՝ ասելով, որ այդպիսի ցուցմունքի վրա հիմնված դատապարտումը վտանգավոր է»:

(b) Գերագույն դատարանի որոշումը

57. 2009թ-ի դեկտեմբերի 9-ին ՄԹ Գերագույն դատարանը միաձայն անփոփոխ թողեց Վերաքննիչ դատարանի որոշումը (2009 ՄԹ Գերագույն դատարան, 14): Լորդ Ֆիլիպսը Գերագույն դատարանի որոշումը ներկայացնելիս նշեց, որ չնայած Մարդու իրավունքների 1998թ-ի ակտով տեղական դատարանները պարտավոր էին հաշվի առնել Ստրասբուրգի դատական պրակտիկան սկզբունքները կիրառելիս, որոնք պարզ ձևով կարգավորված են, այնուամենայնիվ հազվադեպ դեպքերում, երբ դատարանը մտահոգված լինելով, որ Ստրասբուրգի դատարանի որոշումը բավականաչափ չի գնահատում կամ ընդունում անզլիական իրավունքի որոշ կողմեր, այն կարող է չհետևել այդ որոշմանը: Պալատի որոշումը նույնպես այսպիսի դեպք էր:

58. Ըստ Լորդ Ֆիլիպսի՝ մեղադրյալը չպետք է անձեռնմխելի լինի դատապարտումից, երբ վկան, տալով վճռորոշ և ակնհայտորեն հավաստի ցուցմունք, անկարող էր հանդես գալ դատարանում մահվան կամ այլ պատճառով: Հռոլված 6-ի 3(«դ»)-րդ կետի վերաբերյալ այս Դատարանի՝ գործին առնչվող նախադեպային իրավունքը վերլուծելիս Լորդ Ֆիլիպսը եզրակացրեց, որ չնայած այս Դատարանն ընդունել էր, որ Հռոլված 6-ի 3(«դ»)-րդ կետի խիստ կիրառության դեպքում բացառությունների կարիք կա, բայց այդ բացառությունները հաստատելու կարգը հանգեցրել է ոչ հստակ դատական պրակտիկայի: Միակ կամ որոշիչ ապացույց լինելու վերաբերյալ կանոնը ներկայացվեց Ստրասբուրգի նախադեպային իրավունքում 1996թ-ի մարտի 26-ի *Դորսոնն ընդդեմ Հոլանդիայի* գործում, (1996-II Որոշումներ) առանց քննարկելու առանցքային սկզբունքը, կամ էլ առանց հասկանալու, թե արդյոք ճիշտ էր այդ կանոնը դարձնել գերակայող սկզբունք և՛ մայրցամաքային, և՛ ընդհանուր իրավունքում: Թվում էր, թե այդ կանոնը ստեղծվել էր

[Type text]



այն պատճառով, որ ի տարբերություն ընդհանուր իրավունքի, մայրցամաքային համակարգում քրեական դատավարությունը չունի համապատասխան իրավական մարմին կամ կանոններ, որոնք կկարգավորեին ապացույցի ընդունելիությունը:

59. Լորդ Ֆիլիպսը, համաձայնելով Վերաքննիչ դատարանի հետ, գտել է, որ այդ կանոնը գործնական լուրջ դժվարություններ կառաջացներ, եթե կիրառվեր անգլիական քրեական դատավարությունում: Առաջինը՝ դժվար կլիներ կիրառել, որովհետև հստակ չէր՝ ինչ ի նկատի ունենք «որոշիչ» ասելով. անգլիական իրավունքի համաձայն ոչ մի ապացույց ընդունելի չի, եթե այն ապացուցողական նշանակություն չունի, իսկ տեսականորեն ապացուցողական նշանակություն ունեցող ցանկացած ապացույց կարող է ազդել և՛ դատապարտման, և՛ արդարացման վրա: Երկրորդը՝ բավականին դժվար կլիներ կիրառել այդ թեստը առաջին աստիճանի դատարանում, բայց տեղական վերաքննիչ դատարաններում կամ այս Դատարանում անհնար կլիներ որոշել, թե արդյոք տվյալ ցուցմունքը դատապարտման համար միակ կամ որոշիչ հիմքն է հանդիսանում, թե ոչ: Երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարությանը այդ կանոնը կիրառելու միակ ձևը անուղղակի ապացույցն ընդհանրապես բացառելն է:

60. Լորդ Ֆիլիպսը նշեց նաև.

«Միակ կամ որոշիչ ապացույցի թեստը պարադոքսի առջև է կանգնեցնում: Այն թույլատրում է դատարանին հաշվի առնել ապացույցը, եթե այն մեղադրանքի կողմին տրամադրում է ապացույց, որը երկրորդական նշանակություն ունի, բայց ոչ որոշիչ: Ինչքան համոզիչ է ապացույցը, այնքան ավելի քիչ կարելի է դրա վրա հիմնվել: Շատ դեպքեր կլինեն, երբ բացակա վկայի ցուցմունքը չի կարող դատապարտման համար լինել անվտանգ կամ բավարար հիմք: Այնուամենայնիվ կլինեն դեպքեր, երբ տվյալ ապացույցը ակնհայտորեն վստահելի է: Վերաքննիչ դատարանը մի շարք օրինակներ է բերել: Ես կխոսեմ նրանց բերած օրինակներից միայն մեկի մասին: Լոնդոն այցելած զբոսաշրջիկ վկայում է, որ ականատես է եղել վրաերթի, որի հետևանքով հեծանվորդը մահանում է: Նա մտապահել էր մեքենայի համարանիշը և վկայություն տվել ոստիկանությանը, որտեղ նշել էր ոչ միայն մեքենայի համարանիշը, այլև մակնիշը և գույնը, ինչպես նաև այն, որ վարորդը մորուքով տղամարդ էր: Հետո նա վերադարձել է իր երկիր, որտեղ ինքն էլ է սպանվել վթարի ժամանակ: Ոստիկանությունը պարզում է, որ այդ վկայի կողմից նշված համարանիշով մեքենան ուներ նույն մակնիշն ու գույնը, ինչպես որ նշվել էր ցուցմունքի մեջ, իսկ վարորդն էլ մորուքավոր տղամարդ էր: Մեքենայի սեփականատերը հրաժարվել է ասել, թե որտեղ է եղել պատահարի ժամանակ: Թվում է, թե դժվար է գտնել որևէ կանոն, որը կբացառի մահացած վկայի ցուցմունքի հիման վրա մեքենայի սեփականատիրոջ դատապարտումը, այնուհանդերձ, դա է միակ կամ որոշիչ թեստի հետևանքը»:

61. Փոխարենը Լորդ Ֆիլիպսը եզրակացրեց, որ 2003թ-ի ակտը այս կանոնն անպետք դարձրեց անգլիական քրեական դատավարության մեջ, քանզի եթե 2003թ-ի [Type text]



ակտը ուսումնասիրվեր, ապա կերևար, որ Հոդված 6-ի 3 «դ»-րդ կետի խախտում չկար, եթե նույնիսկ դատապարտումը հիմնված լիներ միակ կամ որոշիչ ասեկոսե ապացույցի վրա: Այս փաստը ցույց տալու համար, որոշման 4-րդ հավելվածում վերլուծվել են Կոնվենցիայի անդամ մյուս պետությունների դեմ մի շարք գործեր, որտեղ Դատարանը Հոդված 6-ի 1-ին կետի խախտում է գտել՝ համեմատելով Հոդված 6-ի 3 («դ») կետի հետ: Յուրաքանչյուր գործում եթե դատավարությունը տեղի ունենար Անգլիայում և Ուելսում, ապա վկաների ցուցմունքները չէին ընդունվի 2003թ-ի ակտի համաձայն, որովհետև կամ վկան անանուն էր և բացակա, կամ էլ գործը քննող դատարանը բավարար հարցում չէր արել, որպեսզի խելամիտ հիմնավորում ունենար վկայի բացակայության վերաբերյալ: Այլապես, եթե ապացույցն ընդունվեր, ապա ցանկացած դատապարտում կվերացվեր վերաքննիչ բողոքի դեպքում:

62. Միաժամանակ Լորդ Բրաունը որոշում կայացրեց, որտեղ նա նշեց.

«Այս բողոքները չափազանց կարևոր են: Եթե Ստրասբուրգի նախադեպային իրավունքը իսկապես ստեղծում է բացարձակ սկզբունք, որով ցանկացած դատապարտում, որը վկայի բացակայության կամ անանունության դեպքում հիմնված է միակ կամ որոշիչ ապացույցի վրա, պետք է համարվի անարդար և Կոնվենցիայի Հոդված 6-ի 1-ին և 3-րդ («դ») կետերին հակասող, ապա արդար դատավարություն ապահովելու ամբողջ ներքին համակարգը, որն ամրագրված է (ասեկոսե ապացույցի առումով) 2003թ-ի Քրեական արդարադատության ակտում և (անանուն վկայության առումով) 2008թ-ի Քրեական Ապացույցի (Վկայի անանունություն) ակտում (տե՛ս վերը, 46-րդ կետ), չի պահպանվի, և շատ մեղավոր ամբաստանյալներ էլ ազատ կարձակվեն: Դժվար է ենթադրել, որ Ստրասբուրգի Դատարանը այնքան բացարձակ է դարձրել այս սկզբունքը, և իսկապես, թվում է, թե այդ սկզբունքից առնվազն մեկ բացառություն ճանաչված է. ասեկոսե ապացույցը թույլատրելու արդարացում, որը տրվել է վկայի կողմից, ով չի ներկայացել մեղադրյալի կողմից ահաբեկվելու հետևանքով:

...

Ոչ էլ կարելի է հաստատակամորեն պնդել, որ Ստրասբուրգը ի նկատի է ունեցել Վերաքննիչ դատարանի (իր որոշման 61-63 և 68-71 կետեր) նշած գործնական խնդիրներն ու անոմալիաները, որոնք հատուկ են նմանատիպ ցանկացած բացարձակ սկզբունքի: Ակնհայտորեն, ինչքան կարևոր է ապացույցը մեղադրանքն ապացուցելու համար, այնքան ավելի ուշադիր պետք է լինի Դատարանը, որ այն պատշաճ ձևով ներկայացվի և հավաստի կլինի: Այս առումով ոչ մի խնդիր չի առաջանա «միակ կամ որոշիչ» հասկացությունը կիրառելու համար, քանի դեռ այն օգտագործվում է լայն իմաստով, ինչպես 2008թ-ի ակտում անանուն վկայության դեպքում, և իսկապես, այն համակարգված համատեքստում, որն ավելի շատ վերաբերում է կասկածյալի դեմ մեղադրանքներին, քան նրա օգտին ներկայացված ապացույցներին: Այնուամենայնիվ, եթե այդ հասկացությունը ընկալվեր և կիրառվեր բացարձակ ձևով, ապա դրա մանրամասն մեկնաբանության և կիրառման չլուծվող խնդիրներ կառաջանային:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Այդ իսկ պատճառով կարելի է եզրակացնել, որ *Ալ-Քավայան և Թահերին ընդդեմ ՄԹ-ի* գործով Ստրասբուրգի Դատարանի որոշման մեջ ոչ մի նմանատիպ բացարձակ սկզբունք չկա...»

III. Գործին առնչվող համեմատական իրավունք

1. Շոտլանդիա

63. Որոշ օրենսդրական բացառություններ ունեցող շոտլանդական քրեական իրավունքում անձը չի կարող դատապարտվել հանցանքի կամ օրենքով նախատեսված իրավախախտման համար՝ հիմնվելով մի վկայի չհաստատված ցուցմունքի վրա, ինչքան էլ այդ ցուցմունքն արժանահավատ լինի (տե՛ս 1938թ-ի *Մորթոնն ընդդեմ ՀՄ Ադվոքեյթի (այսուհետ՝ ՀՄ Ադվոքեյթ)* որոշման 52-րդ կետի հղումը 2004թ-ի *Քեմբելն ընդդեմ ՀՄ Ադվոքեյթի* գործով «Սքոց լոու թայմս» 135 թերթում)։

64. **Ասեկոսե** ապացույցը կարգավորվում է 1995թ-ի Քրեական դատավարության (Շոտլանդիա) ակտի 259-րդ բաժնով, որը թույլատրում է դրա ընդունելիությունը որոշակի պայմանների դեպքում, ներառյալ ցուցմունք տված անձի մահվան դեպքում։ 259 (4)-րդ բաժինը թույլատրում է ընդունել ապացույցը, եթե այն տված անձը վստահելի է որպես վկա։ «Սքոց լոու թայմս 761»-ում Ն-ն ընդդեմ ՀՄ Ադվոքեյթի 2003 գործով Գերագույն քրեական դատարանը, հանդես գալով որպես վերաքննիչ դատարան, դժկամորեն եզրահանգեց, որ 259-րդ բաժինը դատարանին զրկում է ոչ հավաստի ապացույցը բացառելու հայեցողությունից, որից նա օգտվում էր մինչ այդ ընդհանուր իրավունքում։ Շոտլանդիայի քաղաքացիական դատարանի (Court of Session) նախագահից հետո երկրորդ ամենաբարձր պաշտոն ունեցող դատավորը (The Lord Justice Clerk) նկատեց, որ, չնայած 259-րդ բաժնի, ասեկոսե ապացույցի երկար ժամանակ հայտնի վտանգները պահպանվել էին։ Նա ավելացրեց.

«259-րդ բաժնի նման ընդհանուր դրույթը կիրառելու դեպքում ասեկոսե ապացույցով գործերն այնքան կանխատեսելի են, որ միակ արդար և ճիշտ ձևը դրա բացառելն է։ Կարծում եմ՝ սա նմանատիպ գործ է։

«Ես տպավորված չեմ այն երեք երաշխիքներով, որոնց մասին խոսեց գործը քննող դատավորը (ՀՄ Ադվոքեյթն ընդդեմ Ն-ի, էջ 437 գ-ե)։ Հաստատելու պահանջը չեզոք նկատառում է։ Սա երաշխիք է, որ կիրառվում է մեղադրանքի ապացույցի դեպքում անկախ ձևից։ Ես չեմ կարող հասկանալ, թե ինչ արժեքավոր երաշխիք է տրամադրում հաստատման սկզբունքը, եթե հաստատման ենթակա հիմնական ապացույցը *պեք սե* անարդար է մեղադրյալի հանդեպ։ Ավելին, ասեկոսե ապացույցի հեղինակի վստահելիության վրա ապացույցը հիմնելը կարող է լինել ոչ ավելին, քան պարզապես վնասի սահմանափակում, որտեղ հստակորեն կանխորոշող ազդեցություն ունեցող ապացույց է ներկայացվել։ Ինչ վերաբերում է դատավորի ուղղորդման երաշխիքին, կարծում եմ՝ կլինեն դեպքեր, որտեղ ասեկոսե ապացույցն այնքան կանխորոշող

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ։

բնույթ ունի, որ ոչ մի ուղղորդում, անկախ իր ազդեցությունից, չէր կարող փոխհատուցել դրա ընդունման անարդարությունը:

Գրավոր ցուցմունքի ընդունելիության վերաբերյալ անգլիական դրույթներում Պառլամենտը դատարաններին օժտել է հայեցողությամբ՝ բացառելու այդպիսի ցուցմունքը, եթե դատարանը կարծում է, որ արդարադատության շահերից է բխում դրա չընդունումը: Մեկ այլ հատուկ նկատառում, որին դատարանը պետք է ուշադրություն դարձնի, վտանգն է, որ ցուցմունքի ընդունելը կարող է մեղադրյալի հանդեպ անարդարության պատճառ դառնալ (1988թ-ի Քրեական արդարադատության ակտ, 25(1), 25(2)(դ) and 26(ii) բաժիններ, համեմատի՝ ր Ռ-ն ընդդեմ Գոկլալի): Կարծում եմ՝ այս դրույթները խելամիտ են: Եթե նմանատիպ դրույթներ հասանելի լինեին այս գործը քննող դատավորին, ապա դրանք հնարավորություն կտային բացառել ասեկոսե ապացույցը սկզբում»:

65. Գերագույն քրեական դատարանը դիտարկեց նաև բացակա վկայի ցուցմունքի ներկայացման համատեղելիությունը Հոդված 6-ի 3-րդ («դ») կետի հետ Մքքենան ընդդեմ ՀՄ Ադվոքեյթի գործում: Սպանության վերաբերյալ այդ դատավարությունում մեղադրանքի կողմը փորձում էր ներկայացնել հնարավոր մյուս մեղադրյալի տված ցուցմունքները, որը մահացել էր: Իր նախորդ որոշման մեջ (Մքոց լոու թայմս 508, 2000) Գերագույն քրեական դատարանը, հանդես գալով որպես վերաքննիչ դատարան, գտել էր, որ ծայրահեղ դեպքերում է միայն, որ մեղադրյալը կարող է դատավարությունից առաջ պնդել, որ ասեկոսե ապացույցի ներկայացումը այնքան կանխակալ է դարձնում արդար դատավարությունը, որ դատարանը կկարողանար որոշում կայացնել նախապես: Այդ իսկ պատճառով դատարանը թույլատրեց, որ դատավարությունը շարունակվի: Ցուցմունքները հրապարակելուց ու մեղադրյալին դատապարտելուց հետո վերջինս բողոքարկեց վճիռը: Բողոքը մերժելու վերաբերյալ որոշման մեջ (Մքոց լոու թայմս 508, 2003) Գերագույն քրեական դատարանը նշեց, որ չնայած ցուցմունքները կարևոր էին, բայց հաշվի առնելով մնացած ապացույցները (ներառյալ մեղադրյալի վկայությունը և դատաբժշկական փորձաքննության արդյունքները), հնարավոր չէ ասել, որ դատապարտման համար որոշիչ են եղել հրապարակված ցուցմունքները: Երդվյալ ատենակալներին նաև պատշաճ կերպով ուղղորդել էին՝ ասելով, թե ինչպես վարվեն բացակա վկայի ցուցմունքի հետ: Այդ նույն Դատարանը նմանատիպ եզրահանգում էր արել ՀՄ Ադվոքեյթն ընդդեմ Մ-ի գործով (Մքոց լոու թայմս 1151, 2003):

66. Հոդված 6-ի 3 («դ») կետի համատեղելիությունը ասեկոսե ապացույցի ընդունելիության հետ Գերագույն քրեական դատարանը դիտարկվեց նաև *Քեմբելն ընդդեմ ՀՄ Ադվոքեյթի* գործում, որի վերաբերյալ խոսվել է վերևում: Դատարանը նկատեց, որ այս Դատարանի՝ գործին առնչվող նախադեպային իրավունքում Հոդված 6-ի 3 («դ») կետի շատ խախտումներ առաջացել էին այն իրավունքներում, որտեղ չեն

[Type text]



գործում շտախանդական իրավունքի՝ լրացուցիչ ապացույցով հաստատման վերաբերյալ կանոնը.

«Դեպքերի մեծ մասը, որտեղ դատարանի կողմից Հոդված 6-ի 1-ին և 3-րդ («դ») կետի խախտում է արձանագրվել, Շտախանդիայում չէր կարող տեղի ունենալ: Բոլոր կարևոր փաստերի վերաբերյալ լրացուցիչ ապացույցով հաստատման պահանջի դեպքում դատապարտումը չի կարող հիմնված լինել բացառապես մեկ վկայի ցուցմունքի վրա՝ անկախ առաջնային կամ երկրորդային լինելուց: Կոնվենցիայի իրավունքի խախտում արձանագրվել է այն դեպքերում, երբ մեղադրյալի դեմ հիմնական վկան չի ներկայացվել հարցաքննությանը, կամ էլ, երբ մի քանի հիմնական վկա է եղել, որոնցից ոչ մեկը ներկա չի եղել: Չկար հղում այնպիսի գործից, որտեղ խախտում արձանագրված լինեք այն դեպքերում, երբ մեղադրյալը հնարավորություն էր ունեցել հարցաքննել կամ հարցաքննել էր իր դեմ հիմնական բողոքարկողին կամ այլ անմիջական կարևոր վկաներին, իսկ մնացած օժանդակ բնույթ ունեցող ապացույցները ցուցմունքի տեսքով են ներկայացվել: «Որոշիչ» ասվածը, ինչպես եվրոպական գրավոր աղբյուրներում է նշվում, վերաբերում է ցուցմունքի կարևորությանը որպես ապացույց: Այն կապ չունի այն կանոնի հետ, որ դատապարտումը չի կարող հիմնված լինել բացառապես մի ապացույցի վրա: Այն, որ ասեկոսե ապացույցը նույնպես ենթակա է լրացուցիչ ապացույցով հաստատման վերաբերյալ կանոնին, դեռ չի նշանակում, որ դա նույն ձևով է մեկնաբանվում, ինչ որ «որոշիչը» եվրոպական աղբյուրներում:

Այս հանգամանքներում չենք կարող համոզված լինել, որ ցանկացած գործում, որտեղ ասեկոսե ապացույցը մեղադրանքի կողմի (Crown) լրացուցիչ ապացույցներով հաստատված ապացույցի կարևոր մաս է կազմում, ուրեմն Հոդված 6-ի 1-ին և 3-րդ («դ») կետերի խախտում կա: Այնուամենայնիվ, կարիք կլինի, որ գործը քննող դատավորը խոսի մեղադրանքի կողմից (Crown) ներկայացված յուրաքանչյուր ասեկոսե ապացույցի նշանակության մասին ընդհանուր ապացույցների համատեքստում և համապատասխան միջոցներ ձեռնարկի, որպեսզի մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքը չխախտվի»:

67. Դատարանն ավելացրեց, որ երդվյալ ատենակալներին ուղղորդելիս պետք է մտապահել Շտախանդիայի քաղաքացիական դատարանի (Court of Session) դատավորի (The Lord Justice Clerk)՝ *Ն-ն ընդդեմ ՀՄ Աղվորքեյթի* գործի վերաբերյալ տված ուղղորդումը: Գերագույն դատարանը թույլատրեց առաջին դիմումատուի բողոքի քննությունը Քեմբելում, որովհետև գործը քննող դատավորը երդվյալ ատենակալներին պատշաճ ուղղորդում չէր տվել: Իսկ երկրորդ դիմումատուի բողոքը մերժեց, քանի որ այն վերաբերում էր Կոնվենցիայի Հոդված 6-ին, համարելով, որ ասեկոսե ապացույցը որոշիչ չէր, իսկ նրա դեմ հիմնական վկայություն տվողը ներկայացել էր դատարան:

68. Քեմբելի գործը կիրառվել էր ՀՄ Աղվորքեյթն ընդդեմ Ջոնսթոնի գործում (Մքոց լոու թայմս 1005, 2004), որտեղ դատավարության ժամանակ կայացրած որոշմամբ դատավորը (Lord Ordinary) թույլատրել էր ընդունել այն վկայի՝ ոստիկանությանը տված ցուցմունքը, որը մահացել էր մինչև դատավարությունը. ցուցմունքն *ինտեր ալիա* ընդունելի էր, որովհետև այն «որոշիչ» չէր կարող լինել: *Համֆրին ընդդեմ ՀՄ*

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Աղվորքեյթի, 2008 ԳՔԴՎԴ 30 գործում Գերագույն քրեական դատարանը նշեց, որ «որոշիչ» բառի հետ կապված «մեծ դժվարություն» է ունեցել այն գործի համատեքստում, որը հիմնված է եղել անուղղակի ապացույցի վրա, բայց այդ գործում ոստիկանության կողմից ներկայացրած մահացած վկայի ցուցմունքն «ամեննին էլ որոշիչ» չէր, և առանց դրա էլ դատապարտման համար բավական ապացույց կար: Նմանատիպ արդյունքներ են եղել նաև *Ալիսոնն ընդդեմ ՀՄ Աղվորքեյթի (2008 ԳՔԴՎԴ 63)* և *Հարկինս ընդդեմ ՀՄ Աղվորքեյթի (2008 ԳՔԴՎԴ 69)* գործերում:

2. Իռլանդիա

69. 2010թ-ի մարտի քաղաքացիական և քրեական գործերով ասեկոսե ապացույցի վերաբերյալ խորհրդատվական փաստաթղթում Իռլանդիայի Իրավունքի բարեփոխման հանձնաժողովը նախնական առաջարկեց, որ ասեկոսե ապացույցի կիրառումը, ընդհանուր իրավունքի և օրենքով նախատեսված բացառություններով հանդերձ, պետք է շարունակաբար բացառվի քրեական դատավարությունում: Հանձնաժողովը նաև նախնական առաջարկեց, որ ասեկոսե ապացույցը թույլատրելու հայեցողության օրենսդրական ամրագրում չպետք է լինի, և հավաստիության և անհրաժեշտության հասկացությունները չպետք է ասեկոսե ապացույցի վերաբերյալ կանոնի բարեփոխման հիմք լինեն, քանի որ դրանք հստակ չեն:

70. Հանձնաժողովը նաև նշեց.

«Իռլանդիայի սահմանադրության հոդված 38.1-ը պաշտպանում է խաչաձև հարցաքննելու իրավունքը. քրեական դատավարության ժամանակ ասեկոսե ապացույցի ազատ ընդունումը կարող է խախտել սահմանադրությամբ պաշտպանված իրավունքը: Բացակա վկայի ցուցմունքի ընդունելիությունը վտանգավոր է. այն վտանգում է մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը և արդարադատության հնարավոր տապալման պատճառ կարող է դառնալ, եթե հետևյալ կարգի վկաների ցուցմունքներն են ընդունվում.

Երբ վկան մահացած է (բացառությամբ, երբ մահվան մասին հայտարարություն է արվում),

Երբ վկան ֆիզիկական կամ մտավոր անկայուն վիճակի պատճառով չի կարող վկայություն տալ,

Երբ վկայի նկատմամբ իրավասությունը չի տարածվում

Երբ վկային հնարավոր չէ գտնել»:

71. Հանձնաժողովը խորհուրդ չտվեց Իռլանդիայում ընդունել Անգլիայում և Ուելսում գործող օրենսդրական համակարգը, մասնավորապես 2003թ-ի ակտի 114-րդ բաժինը: Նա նշեց, որ.

«Բարեփոխման այս մոդելը թուլացնում է կանոնը՝ այն դարձնելով անօգուտ որպես ասեկոսե ապացույցի դեմ կանոն: Ընդունելի ասեկոսե ապացույցների տեսակները այս մոդելի դեպքում զգալիորեն շատանում են, և հաշվի առնելով սահմանադրությամբ պաշտպանվող խաչաձև

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

հարցաքննության իրավունքը՝ Հանձնաժողովն այն նախնական կարծիքին է, որ վախեցած կամ բացակա վկայի տված վկայությունը կիրառելը, որի հավաստիությունը ստուգված չէ, կխախտի այդ իրավունքը: Հանձնաժողովը նշեց, որ այն նախապես առաջարկել է, որ դատարաններին անհրաժեշտության դեպքում պետք է տրվի ասեկոսե ապացույցի կանոնը զարգացնելու հայեցողություն»:

Հանձնաժողովը նաև նշեց, որ (այս գործերի վերջնական արդյունքների հետ կապված որոշ վերապահումներով հանդերձ) այս Դատարանի նախադեպային իրավունքում առկա մոտեցումները հիմնականում համապատասխանում են իռլանդական իրավունքին բնորոշ մոտեցումներին:

3. Ավստրալիա

72. Ավստրալիայի դատարանները միշտ դրսևորել են խիստ մոտեցում դատարանից դուրս վերցրած ցուցմունքների բացառման հարցում (տե՛ս, օրինակ՝ Բենոն ընդդեմ Թագուհու (1995) 185 CLR 1).

73. Ավստրալիայում դաշնային քրեական դատավարությունում ասեկոսե ապացույցի ընդունելիությունը կարգավորվում է 1995թ-ի Ապացույցի մասին ակտով: Ակտի 65-րդ բաժնով թույլատրվում է ասեկոսե ապացույցի ընդունումը, ինչպես նախորդ ներկայացրածները (օրինակ՝ ցուցմունքները), երբ վկան չի կարող վկայություն տալ «հաստատած փաստի վերաբերյալ»: Այսպիսի վկայությունն *ինտեր ալիա* ընդունելի կլինի, երբ՝ (i) ցուցմունքը ներկայացվում է այն ժամանակ, երբ հայտնվում է հաստատված փաստը, կամ էլ՝ դրանից ոչ շատ անց այնպիսի հանգամանքներում, երբ անհավանական է, որ այն հորինված լինի (բաժին 65(2)«բ»), կամ՝ (ii) ցուցմունքը ներկայացվում է այնպիսի հանգամանքներում, որոնց դեպքում դրա հավաստիության հավանականությունը շատ մեծ է (բաժին 65(2)«գ»):

74. Դատավարությունից առաջ մահացած վկայի տված ցուցմունքն ընդունելու վերաբերյալ այս դրույթների կիրառումը քննարկվեց Ավստրալիայի Դաշնային դատարանի կողմից *Ուիլյամսն ընդդեմ Թագուհու (2000) 119 A Crim R 490* գործում: Դատարանը գտավ, որ այդ գործի հանգամանքներում ոստիկանությանը տված ցուցմունքը բավարար վստահելի չէր, հատկապես, երբ վկան պատճառ ուներ ոստիկաններին ասելու այն, ինչ նրանք ուզում էին լսել: Համապատասխան օրենսդրական դրույթներ քննարկվել են նաև Նյու Սաութ Ուելսի Գերագույն դատարանի կողմից Հարիսն ընդդեմ Թագուհու գործում (2005) 158 (A Crim R 454), որտեղ հիվանդ հայցվորի ցուցմունքը բավականին արժանահավատ թվաց թույլատրելու համար պայմանով, որ բողոք ներկայացնողը գիտեր, որ ոստիկանությունը *ինտեր ալիա* հարցաքննելու էր նաև գործում առկա մյուս վկաներին:

[Type text]



4. Կանադա

75. Կանադայում ասեկոսե ապացույցի մասին կանոնը բարեփոխվել է Կանադայի Գերագույն դատարանի երեք հիմնական որոշումներից հետո, որի արդյունքում ստեղծվեց ասեկոսե ապացույցի ընդունելիության վերաբերյալ «սկզբունքային մոտեցում»:

76. Առաջին՝ *Ռ-ն ընդդեմ Խանի (1990) 2 S.C.R. 531* գործով Գերագույն դատարանը նշեց, որ գործը քննող դատավորը սխալվել էր, թույլ չտալով առանց երդման վկայություն տալու գոհին՝ երեք ու կես տարեկան աղջկան, ըստ որի իրեն սեռական ոտնձգության էին ենթարկել, ինչպես նաև այն, որ նա թույլ չէր տվել մեղադրանքի կողմին ներկայացնելու սեռական ոտնձգության ենթարկվելուց 15 րոպե հետո երեխայի՝ իր մայրիկին տված վկայությունը: Եթե առանց երդման վկայությունը չէր կարող տրվել, ապա վտանգ կլիներ, որ այդ բոլոր հանցանքները փոքր երեխաների հանդեպ երբեք չէին հետապնդվի: Այդ երեխայի մոր ցուցմունքի առնչությամբ Գերագույն դատարանը գտավ, որ կարելի է դրսևորել ասեկոսե ապացույցի վերաբերյալ ավելի ճկուն, բայց «սկզբունքային» մոտեցում: Անկախ զգուշության կարիքից, ասեկոսե ապացույցը կարող էր ընդունվել, երբ երկու հիմնական պահանջները՝ անհրաժեշտությունը և արժանահավատությունը, բավարարված էին: Ընդունելիության հարցը որոշելիս գործը քննող դատավորը պետք է հաշվի առներ մեղադրյալի շահերի պաշտպանության անհրաժեշտությունը: Վկայության արժանահավատությունը որոշվելու էր դրա կարևորությամբ և ցանկացած լրացուցիչ հաստատող ապացույցի որակով:

77. Երկրորդ, *Ռ.-ն ընդդեմ Սմիթի* գործում ([1992] 2 S.C.R. 915) Դատարանը հավանություն է տվել Խանի գործում կիրառված «սկզբունքային մոտեցմանը» և հանգուցյալի կողմից մահվանից անմիջապես առաջ իր մորն արված հեռախոսազանգը ընդունելի համարել: Սակայն երրորդ հեռախոսազանգի բովանդակության վերաբերյալ մոր վկայությունը չպետք է ընդունվեր, քանի որ պայմանները, որոնցում արվել էր զանգը, չի ապահովել արժանահավատության հանգամանքային երաշխիքը, որը կարդարացներ դրա ընդունումը առանց խաչաձև հարցաքննության հնարավորության:

78. *Խան և Սմիթ* գործին հաջորդել են *Ռ.-ն ընդդեմ Ռոքիի* գործում ([1996] 3 S.C.R. 829): Գերագույն դատարանն այն համոզմունքն ուներ, որ գործը քննող ցանկացած խելամիտ դատավոր անհրաժեշտ կգտներ ընդունել հինգ տարեկան երեխայի մինչդատական ցուցմունքները, որոնցում նա գանգատվում է, որ ենթարկվել է

[Type text]



սեռական ոտնձգության: Մաքլաչլին Ջ.-ն (որոշմանը հանդես եկող) գտել է, որ բողոքարկողի դեմ հարուցված գործը ծանրակշիռ է. երեխայի ցուցմունքներն ամբողջությամբ կայուն էին և հաստատված էին ինտեր ալիա բժշկական հետազոտությամբ, հարձակումից հետո երեխայի մոտ ի հայտ եկած վարքագծային փոփոխություններով և բողոքարկողի կողմից հանցանքը կատարելը հերքող որևէ ճշմարտանման բացատրության բացակայությամբ:

79. Գերագույն դատարանի նախադեպային իրավունքում երրորդ և ամենանշանակալի վճիռը *Ռ.-ն ընդդեմ Քեվալոնի* գործով վճիռն է ([2006] 2 S.C.R. 787), որն ավելի խիստ մոտեցում է ցուցաբերել արժանահավատությանը: Գործն առնչվում էր ծերանոցում տարեց բնակչի կողմից այդ ծերանոցի աշխատակիցներից մեկի նկատմամբ կատարված ոտնձգության վերաբերյալ բողոքին: Հիվանդը՝ Ս.-ն ուստիկանությանը տվել է տեսաձայնագրված ցուցմունք. ցուցմունքը տրվել էր առանց երդման: Ս.-ի ցուցմունքից հետո մյուս բնակիչներն էլ են ցուցմունք տվել, ըստ որոնց նրանք նույնպես ոտնձգության են ենթարկվել մեղադրյալի կողմից: Մինչ դատավարությունը բոլոր նրանք, ովքեր վկայություն էին տվել, այդ թվում և Ս.-ն, կամ մահացել էին կամ էլ այլևս ի վիճակի չէին վկայություն տալ: Որոշ ցուցմունքներ ընդունվել են գործը քննող դատավորի կողմից դրանց միջև առկա ապշեցուցիչ նմանությունների պատճառով: Օնտարիոյի Վերաքննիչ դատարանը բացառել է բոլոր ցուցմունքները և արդարացրել մեղադրյալին: Գերագույն դատարանը մերժել է որոշման հետ կապված մեղադրանքի կողմի դիմումը և հաստատել է արդարացումը: Գերագույն դատարանը պարզաբանել է արժանահավատության վերաբերյալ իր նախորդ նախադեպային իրավունքը և նշել է, որ արժանահավատության պահանջը ընդհանուր առմամբ կբավարարվեր՝ ցույց տալով. (i) որ վկայության վերաբերյալ մտահոգվելու հարկ չկա՝ ելնելով այն հանգամանքներից, որոնցում այն արվել է. (ii) կամ որ ոչ մի իրական մտահոգություն չի առաջանում, քանի որ վկայության ճմարտացիությունն ու ճշտությունը կարող են, այնուամենայնիվ, բավարար կերպով ստուգվել խաչաձև հարցաքննությունից բացի այլ միջոցներով: Գործը քննող դատավորը պետք է անցկացներ վկայության արժանահավատության նախնական գնահատում և դրա կարևորության վերջնական որոշումը թողներ երդվյալ ատենակալների վրա: Գործին առնչվող բոլոր գործոնները, այդ թվում, համապատասխան գործերում, հաստատող կամ հակասող վկայության ներկայությունը, պետք է քննվեին գործը քննող դատավորի կողմից: Շարուն Ջ.-ն դատարանի միաձայն վճիռը հրապարակելիս նշել է (վճռի 49-րդ կետ).

«Որոշ դեպքերում կախված այն բանից, թե ինչպիսի հանգամանքներում է ապացույցն առաջացել, ասեկոսե ապացույցի բովանդակությունը կարող է այնքան արժանահավատ լինել, որ համաժամանակյա խաչաձև հարցաքննությունն առանձնապես ոչինչ էլ չավելացնի: Մնացած [Type text]



դեպքերում հնարավոր է, որ ապացույցն այնքան էլ համոզիչ չլինի, բայց այդ ապացույցի ձեռք բերման պայմանները թույլ տան ստուգել ապացույցը համաժամանակյա խաչաձև հարցաքննությունից տարբեր այլ միջոցով: Այս դեպքում ապացույցի ընդունումը հազվադեպ կարող է ազդել արդար դատավարության վրա: Այնուամենայնիվ, քանի որ արդար դատավարության համար անհրաժեշտության և արժանահավատության գործոններից բացի անհրաժեշտ կլինեն նաև այլ գործոններ, եթե նույնիսկ այդ երկու գործոններն առկա լինեն, ապա գործը քննող դատավորը ասեկոսե ապացույցը բացառելու հայեցողության հնարավորություն ունի, եթե այդ ապացույցի կանխակալ ազդեցությունն ավելի մեծ է, քան ապացուցողական նշանակությունը»:

77. Դատարանը եզրակացրեց, որ Ս.-ի ցուցմունքներն անընդունելի են: Նա նկատեց, որ Ս.-ի կողմից Խելավոնին ուղղված մեղադրանքներն «ամբողջությամբ հիմնված էին» Ս.-ի ցուցմունքներում պարունակվող մեղադրանքների ճշմարտացիության վրա (որոշման 101-րդ կետ): Նրան խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը ազդում էր հավաստիության վրա, բացի այդ էլ ցուցմունքն ստուգելու համարժեք փոխարինող միջոցներ էլ չկային: Ասեկոսե ապացույցի մասին կանոնի սկզբունքային բացառություններն էլ հնարավորություն չէին տալիս դատապարտելու՝ հիմնվելով տեսագրված կամ այլ տարբերակով ոստիկանությանը տված ցուցմունքի վրա (որոշման 106-րդ կետ): Ոչ էլ հնարավոր կլինեք ցուցմունքի ներքին հավաստիությամբ բավարարել արժանահավատության պահանջը, քանի որ այս գործը նման չէր Խանի գործին, որտեղ ցուցմունքն այնքան համոզիչ էր, որ մանրախնդրություն կլինեք՝ պնդել, որ խաչաձև հարցաքննությամբ ստուգվեք: Ս.-ն ծեր էր և տկար, նրա մտավոր կարողությունը քննության առարկա էր դարձել, բացի այդ էլ բժշկական փորձաքննությունը ցույց էր տվել, որ մարմնական վնասները կարող էին առաջացած լինել նաև ընկնելու պատճառով: Նաև պարզ չէր, թե նա արդյոք հասկացել էր, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ իր ցուցմունքը մեղադրյալի համար: Այս իրավիճակում Ս.-ին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը մեծապես սահմանափակում էր թե՛ մեղադրյալի կողմից ապացույցը ստուգելու, թե՛ դրա կարևորությունը գնահատելու հնարավորությունը:

5. Հոնկոնգ

78. 2009թ-ի զեկույցում Հոնկոնգի Իրավական բարեփոխումների հանձնաժողովը քրեական դատավորությունում ասեկոսե ապացույցի ընդունման վերաբերյալ էական բարեփոխումներ առաջարկեց: Այն առաջարկեց պահպանել ասեկոսե ապացույցի ընդունման դեմ Հոնկոնգի գործող կանոնը, բայց միաժամանակ մեծացնել ասեկոսե ապացույցի ընդունման բացառիկ դեպքերի շրջանակը: Հանձնաժողովը մերժեց 2003թ-ի ակտում նախատեսված անգլիական օրենսդրական կարգավորումը՝ նկատի

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

ունենալով, որ Անգլիայում և Ուելսում գործող ասեկոսե ապացույցը բացառող օրենսդրական մեխանիզմներից ոչ մեկ չի գործում Հոնկոնգում, ինչպես օրինակ՝ 2003թ-ի ակտի 126(1)-րդ բաժինը կամ Քրեական ապացույցների ակտի (PACE) 78-րդ բաժինը (տե՛ս վերը, 40-րդ և 45-րդ կետեր): Հանձնաժողովը նաև նկատեց, որ 2003թ-ի ակտի 116-րդ բաժնի համաձայն ասեկոսե ապացույցի ընդունման հիմքերը, չնայած որ որոշում կայացնելիս որոշակի վստահություն և կայունություն են առաջարկում, այնուամենայնիվ, չափից ավել ընդգրկուն ազդեցություն ունեն՝ ընդունելով ցանկացած տեսակի կարևոր ասեկոսե ապացույց, ներառյալ «ոչ վստահելի ասեկոսե ապացույցը» (գեկույցի 8.25-րդ կետ):

Հանձնաժողովը փոխարենը բարեփոխման այլ տարբերակ առաջարկեց, որի համար հիմք էին հանդիսացել Նոր Զելանդիայի Իրավական հանձնաժողովի (տե՛ս ստորև՝ 81-րդ կետ) և Կանադական դատարանների մոտեցումը Խելավոնի գործից հետո: Հանձնաժողովն առաջարկեց, որ ասեկոսե ապացույցն ընդունելի լինի *ինտեր ալիա*, եթե գործը քննող դատավորը համոզված լինե, որ անհրաժեշտություն կար ասեկոսե ապացույցն ընդունելու, և որ այն հավաստի էր: Ասեկոսե ապացույցը գնահատելիս գործը քննող դատավորը պետք է նաև հաշվի առնի, թե արդյոք ասեկոսե ապացույցը հաստատող այլ ապացույցներ կան, թե ոչ: Հանձնաժողովը նաև առաջարկեց, որ ասեկոսե ապացույցն ընդունելուց հետո քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանը պետք է լիազորված լինի արդարացնելու մեղադրյալին, եթե գործը քննող դատավորը որոշի, որ հիմնավորված չի լինի դատապարտելը: Այդ որոշման հանգելիս դատարանը *ինտեր ալիա* պետք է հաշվի առնի մեղադրյալի դեմ գործում այդպիսի ապացույցի նշանակությունը: Հանձնաժողովը գտավ, որ նմանատիպ առաջարկներով բարեփոխման իր տարբերակը կհամապատասխաներ քննվող գործերի առնչությամբ Պալատի որոշմանը:

6. Նոր Զելանդիա

79. 1999թ-ի Ապացույցի մասին գեկույցում Նոր Զելանդիայի Իրավական հանձնաժողովը առաջարկեց, որ ասեկոսե ապացույցի ընդունելիությունը պետք է հիմնված լինի երկու գործոնների՝ անհրաժեշտության և արժանահավատության վրա: Այդ առաջարկը իր ամրագրումն ստացավ 2006թ-ի Ապացույցի մասին ակտով, որն օրինական ուժի մեջ մտավ 2007թ-ին: Ակտի 18(1)-րդ բաժինը սահմանում է.

«Ասեկոսե ապացույցն ընդունելի է ցանկացած վարույթում, եթե

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

(a) ցուցմունքին առնչվող հանգամանքների հիման վրա հնարավոր լինի համոզվել, որ ցուցմունքը հավաստի է, և

(b) կամ

(i) ցուցմունք տված անձը չկարողանա ներկայանալ որպես վկա, կամ

(ii) Դատավորը գտնի, որ ցուցմունք տված անձի ներկայանալու դեպքում անտեղի ծախսեր կամ ժամանակի կորուստ կառաջանա»:

80. «Հանգամանքներն» այս նպատակով սահմանվում են 16(1)-րդ բաժնում, ներառյալ՝ (ա) ցուցմունքի էությունը, (բ) ցուցմունքի բովանդակությունը, (գ) հանգամանքները, որոնց պայմաններում տրվել է ցուցմունքը, (դ) ցանկացած հանգամանք, որ առնչվում է անձի ճշտախոսությանը, և (ե) ցանկացած հանգամանք, որն առնչվում է այդ անձի դիտարկման ճշգրտությանը:

81. Ակտի 8(1)-րդ բաժնում նշվում է, որ ապացույցը պետք է բացառվի, եթե դրա ապացուցողական նշանակությունն ավելի փոքր է, քան վտանգը, որ ապացույցը կարող է (ա) անարդար կանխակալ ազդեցություն ունենալ քրեական գործով վարույթի վրա, կամ (բ) անիմաստ երկարացնել վարույթը: 8(2)-րդ բաժինը սահմանում է, որ որոշելիս, թե արդյոք ցուցմունքի ապացուցողական նշանակությունը ավելի փոքր է, քան վտանգը, որ ապացույցը կարող է անարդար կանխակալ ազդեցություն ունենալ քրեական գործով վարույթի վրա, դատավորը պետք է հաշվի առնի մեղադրյալի արդյունավետ պաշտպանության իրավունքը:

7. Հարավային Աֆրիկա

82. Չնայած Հարավային Աֆրիկայում երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարություններ այլևս չեն անցկացվում, այնուամենայնիվ, այն նույնպես էապես բարեփոխել է ասեկոսե ապացույցի մասին օրենքը: 1988թ-ի Ապացույցի մասին օրենքի փոփոխման ակտի 3(4)-րդ բաժնում ասեկոսեն սահմանում է որպես ապացույց՝ գրավոր կամ բանավոր, որի ապացուցողական նշանակությունը կախված է ցուցմունք տված անձից տարբեր այլ ցանկացած անձի վստահելիության վրա: 3(1)-րդ բաժնի համաձայն ասեկոսե ապացույցն ընդունելի չէ՝ բացառությամբ այն դեպքերի եթե (i) այն ընդունվել է համաձայնությամբ, (ii) անձը, որի վրա հիմնված է ապացույցի հավաստիությունը, ցուցմունք է տալիս, կամ (iii) դատարանը որոշում է, որ արդարադատության շահերից է բխում, որ ապացույցն ընդունվի: 3(1)(գ)-րդ բաժնում նշվում է, որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի՝ (i) վարույթի բնույթը, (ii) ապացույցի բնույթը, (iii) ցուցմունք տալու նպատակը, (iv) ցուցմունքի ապացուցողական նշանակությունը (v) պատճառը, թե ինչու անձը, որի վստահելիությունից է կախված ցուցմունքի ապացուցողական նշանակությունը,

[Type text]



անձամբ չի տալիս վկայություն, (vi) որևէ կողմին ուղղված ցանկացած կանխակալ կարծիք, որ կարող է առաջանալ այսպիսի ապացույցի ընդունման դեպքում, և (vii) ցանկացած գործոն, որը դատարանի կարծիքով պետք է հաշվի առնվի:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

83. Պետությունն ընդդեմ Ռամավիեյի (1996) (ZAU.CA) 14 գործով Գերագույն դատարանը նշեց, որ չնայած 3(1)-րդ բաժնի ձևակերպմանը, դեռևս «քրեական գործում մեղադրյալի դեմ չստուգված ապացույցը թույլ տալու ինտուիտիվ դժկամություն» կար: Նա նույնպես հաստատեց նախորդ կարգավորումը, ըստ որի դատարանը չպետք է շտապի ընդունել կամ հիմնվել ասեկոսե ապացույցի վրա, որը որոշիչ կամ նույնիսկ կարևոր դեր ունի մեղադրյալի դատապարտման համար, եթե այդպես վարվելու հիմնավոր պատճառներ չկան: Չնայած 3(1)-րդ բաժնով նախատեսված բարեփոխումների, Գերագույն դատարանը գտավ, որ արժանահավաստության գործոնը պետք է շարունակվի հաշվի առնվել ասեկոսե ապացույցի ընդունելիությունը որոշելիս: Բացի այդ, այդ գործում որոշելիս, թե ասեկոսե ապացույցն ընդունելու դեպքում մեղադրյալի դեմ ինչ կանխակալ կարծիք կարող էր առաջանալ, գործը քննող դատավորը սխալվել էր՝ հիմնվելով այն փաստի վրա, որ մեղադրյալն այդ ապացույցի դեմ հակազդելու այլ միջոցներ ուներ, որոնցից մեկն անձամբ վկայությամբ հանդես գալն էր, այս մոտեցման տրամաբանական եզրահանգումն այն է, որ պետությունը, ներկայացնելով «թույլ» ասեկոսե ապացույց, կարող էր ստիպել մեղադրյալին վկայություն տալ մի գործում, որտեղ ուղղակի ապացույցի բացակայության պատճառով վերջինիս իրավունք ուներ վկայություն չտալ:

Չնայած ասեկոսե ապացույցը որոշիչ է եղել, այնուամենայնիվ դրա ընդունման հիմնավոր պատճառներ գտել են *Պետությունն ընդդեմ Նդիլովուի և մյուսների* (2002) գործում ZAU.CA 70, որովհետև ապացույցի արժանահավաստության երաշխիքները բարձր էին, իսկ ասեկոսե ապացույցը սերտորեն կապված էր գործի մյուս ապացույցների հետ: Ռամավիեյի գործում առկա ասեկոսե ապացույցն ընդունելու և դրա վրա հիմնվելու մտահոգությունները, երբ ասեկոսեն մեղադրյալին դատապարտելու համար որոշիչ կամ կարևոր ապացույց է, առկա էին Գերագույն դատարանի մոտ նաև հետևյալ գործերում՝ *Պետությունն ընդդեմ Լիբազի և մյուսների* (2010) ZAU.CA 91, *Պետությունն ընդդեմ Մփունգոզի և մյուսը* (2011) ZAU.CA 60 և *Պետությունն ընդդեմ Մամուշի* (2007) (ZAU.CA 58): Վերջին գործում Գերագույն դատարանը նկատել էր, որ այն դեպքում, երբ ասեկոսե ապացույցը ուղղակի լրացնում էր «խճանկարը», ավելի հեշտ էր ընդունվել, քան այն մեկը, որը կոչված էր դառնալու Պետության գործի խիստ կարևոր մասը:

8. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

84. ԱՄՆ-ի սահմանադրության 6-րդ փոփոխությամբ մեղադրյալը երաշխավորվում է իր դեմ ցուցմունք տվող անձանց հետ առերեսման

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

հնարավորություն ունենալ ցանկացած քրեական գործում («առերեսման մասին հոդված»): *Օհայոն ընդդեմ Ռոբերտսի* 448 ՏՏ. 56 (1980) գործով ԱՄՆ-ի Գերագույն դատարանը գտնում էր, որ «վստահելիության հատուկ երաշխիքներն» ընդունելի էին առանց առերեսման: *Քրուֆորդն ընդդեմ Վաշինգտոնի* 541 ԱՄՆ 36 գործում կանոնն ավելի քան խիստ էր կիրառվել. դատարանի որոշմամբ ցանկացած ցուցմունքի դեպքում պետք է առերեսում իրականացվեր, իսկ Վեցերորդ փոփոխության մեջ էլ վստահելիության հիման վրա ապացույցն ընդունելու հիմքեր չկային: Ցուցմունքների հարցում Սահմանադրությամբ նախատեսված վստահելիության միակ ցուցանիշը, որ կարող էր բավարար համարվել, առերեսումն էր: Հետևաբար, ցուցմունքն անընդունելի էր առանց վկայի ներկայության դատարանում, կամ եթե վկան ներկա չէր, ապա մեղադրյալը նախապես այդ վկայի առերեսման հնարավորություն պետք է ունենար: (տե՛ս նաև *Մելենդեզ-Դիագն ընդդեմ Մասաչուսեթս* 129 Տ.Շ. 2527 (2009) և *Բալքամինգն ընդդեմ Նյու Մեքսիկոյի* 131 Տ.Շ. 2705 (2011)).

Վկաների առերեսման հնարավորություն ունենալու իրավունքը կարող է չեղյալ համարվել, միայն եթե ցույց տրվի, որ մեղադրյալը ահաբեկել է վկային, որպեսզի վերջինս վկայություն չտա (*Դեյվիսն ընդդեմ Վաշինգտոնի* 547 ԱՄՆ 813 (2006) և *Ջիլեսն ընդդեմ Կալիֆորնիայի* 554 ԱՄՆ 353 (2008)).

Օրենսդրությունը

I. Կոնվենցիայի Հոդված 6-ի 1-ին և 3 (դ)-րդ կետերի ենթադրյալ խախտում

85. Կոնվենցիայի Հոդված 6-ի 1-ին և 3 (դ)-րդ կետերում նշվում է.

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:...

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

(դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները»:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

A. Պալատի եզրակացությունները

86. Պալատի համար Հոդված 6-ի 3(դ)-րդ կետի դրույթները, ինչպես նաև Հոդված 6-ի 3-րդ կետի մնացած տարրերը ապահովում էին նվազագույն իրավունքներ ցանկացած անձի համար, որը մեղադրվում էր քրեական հանցանքի մեջ: Պալատը նշեց նաև, որ որպես նվազագույն իրավունքներ, Հոդված 6-ի 3-րդ կետի դրույթները հստակ երաշխիքներ էին, որոնք չպետք է մեկնաբանվեն որպես դեպքերի օրինակներ, երբ որոշվում է, թե արդյոք դատավարությունը արդար էր, թե ոչ:

87. Պալատը հետո նշեց, որ եթե մեղադրյալը հնարավորություն չէր ունեցել հարցաքննելու վկային նրա բացակայության կամ անանունության կամ այդ երկուսի պատճառով, ապա որպեսզի Դատարանը որոշելի, թե արդյոք եղել էր Հոդված 6-ի 3(դ)-րդ և 1-ին կետերի խախտում, թե ոչ, պետք է սկսի Լուկայի գործից, որին հղում է արված վերը՝ 40-րդ կետում:

«Եթե մեղադրյալին հնարավորություն տրվեր ստուգել դեպոնացված ապացույցների հավաստիությունը դրանք վերցնելիս կամ ավելի ուշ, ապա դրանց ընդունումը որպես ապացույց չէր հակասի Հոդված 6-ի 1-ին և 3(դ) կետերին: Ասվածից հետևում է, որ այն դեպքերում, երբ ցուցմունքը տրվում է այն անձի կողմից, ում մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննել, լինի դա նախաքննության կամ դատական քննության ժամանակ, ապա պաշտպանության կողմի իրավունքներն այնքան են սահմանափակվում, որն անհամատեղելի է Հոդված 6-ով սահմանված երաշխիքների հետ (հղումները բաց են թողնված)»:

88. Պալատը նշեց նաև, որ երկու կողմն էլ համաձայն էին այդ հարցին մոտենալ հիմք ընդունելով, որ յուրաքանչյուր դատապարտումը միայն կամ վճռորոշ չափով հիմնված էր գործին առնչվող երկու վկաների վրա, և Դատարանն էլ նույն կերպ վարվեց: Հետո Պալատը դիտարկեց հակակշռող գործոնները, որոնց վրա յուրաքանչյուր գործում հիմնվել էր Կառավարությունը: Առաջինը՝ նա դիտարկեց այն հակակշռող գործոնները, որ յուրաքանչյուր գործում գործը քննող դատավորը ճշգրտորեն կիրառել էր համապատասխան օրենսդրական թեստ, և որ Վերաքննիչ դատարանը վերանայել էր յուրաքանչյուր դատապարտման ապահովությունը: Պալատը գտավ, որ այս գործոնները ունեին սահմանափակ կարևորություն, քանի որ յուրաքանչյուր գործի հիմնական շեշտը դրված էր այն փաստի վրա, թե արդյոք գործը քննող դատավորները և Վերաքննիչ դատարանը Կոնվենցիայի Հոդված 6-ի 1-ին և 3(դ)-րդ կետերին համապատասխան էին գործել, թե ոչ:

89. Ալ-Քավայայի առնչությամբ Պալատը շարունակեց.

“41. Պրն. Ալ-Քավայայի գործի փաստերն ուսումնասիրելիս Դատարանը նկատել է, որ հակակշռող գործոնները, որոնց վրա հիմնվել է Կառավարությունը, հետևյալ փաստերն են՝ այն, որ Ս.Թ-ի ցուցմունքը առանձին վերցրած չի հարկադրել դիմումատուին վկայություն տալ, և որ բողոքարկողների միջև զաղտնի դավադրության ենթադրություն չի եղել, որոշ

[Type text]



անհամապատասխանություններ են եղել Ս.Թ-ի և մյուս վկաների տված վկայությունների միջև, որը հնարավոր կլիներ քննել խաչաձև հարցաքննության ժամանակ, այն փաստը, որ Ս.Թ-ի վստահելիությունը կարող էր ստուգվել պաշտպանության կողմից, ինչպես նաև երդվյալ ատենակալներին ուղղված զգուշացումը, որ վերջիններս ոչ տեսել էին, ո՛չ լսել Ս.Թ-ի ցուցմունքը, և ո՛չ էլ այն ստուգվել էր խաչաձև հարցաքննությամբ:

42. Այս գործոնները դիտարկելիս Դատարանն այն կարծիքին էր, որ դրանցից ոչ մեկը, առանձին կամ համակցության մեջ վերցրած, Ս.Թ-ի ցուցմունքն ընդունելու դեպքում չի հանդիսանում պաշտպանության կողմին ուղղված կանխակալ կարծիքին հակակշռող գործոն: Ճիշտ է, որ նույնիսկ առանց Ս.Թ-ի ցուցմունքի, միննույնն է դիմումատուն երկրորդ մեղադրանքի առնչությամբ պաշտպանվելիս պետք է վկայություն տար: Բայց եթե Ս.Թ-ի ցուցմունքը չընդունվեր, հավանական է, որ դիմումատուի դեմ կքննվեր միայն երկրորդ մեղադրանքով գործը և նա վկայություն կտար միայն երկրորդ մեղադրանքի առնչությամբ: Ինչ վերաբերում է Ս.Թ-ի և մյուս վկաների տված վկայությունների անհամապատասխանություններին, Դատարանը գտավ, որ դրանք առանձնապես կշիռ չունենին: Պաշտպանության կողմը հիմնվել էր միայն մեկ անհամապատասխանության վրա, մասնավորապես այն փաստի, որ ենթադրյալ ոսնձգության ժամանակ Ս.Թ-ի պնդմամբ դիմումատուն դիպել էր նրա դեմքին և բերանին, մինչդեռ վկաներից մեկը պնդում էր, որ Ս.Թ-ն իրեն հայտնել էր, որ դիմումատուի դրդմամբ ինքն է դիպել իր դեմքին: Չնայած պաշտպանության կողմը, անշուշտ, կարող էր փորձել ստուգել Ս.Թ-ի ցուցմունքի հավաստիությունը, այնուամենայնիվ, դժվար է հասկանալ, թե ինչ հիմքով էր դա արվելու, հատկապես, որ Ս.Թ-ի ցուցմունքը հիմնականում համապատասխանում էր մյուս բողոքարկողի վկայությանը, որի հետ գործը քննող դատավորը ոչ մի գաղտնի պայմանավորվածություն չէր նկատել: Գաղտնի պայմանավորվածության բացակայությունը ներքին օրենսդրության մեջ կարող է դրական ազդել ցուցմունքի ընդունելիության վրա, բայց այս գործում այն չի կարող դիտվել որպես հակակշռող գործոն Հոդված 6-ի 1-ին և 3(դ)-րդ կետերի առնչությամբ: Գաղտնի պայմանավորվածության բացակայության փաստը ոչինչ չէր փոխում Դատարանի որոշման մեջ, ըստ որի, ընդունելով ցուցմունքի բովանդակությունը, այն դառնում է առաջին մեղադրանքի վերաբերյալ ապացույց, որի հավաստիությունը դիմումատուն չէր կարող արդյունավետորեն ստուգել: Ինչ վերաբերում է դատավորի՝ երդվյալ ատենակալներին ուղղված զգուշացմանը, Վերաքննիչ դատարանն այն անբավարար համարեց: Եթե նույնիսկ դա այդպես չէր, Դատարանը չի կարող համոզված լինել, որ հավելյալ համապատասխան ուղղորդումը կարող էր արդյունավետորեն հակակշռել չստուգված ցուցմունքի ազդեցությանը, որը դիմումատուի դեմ միակ ապացույցն էր»:

Այդ իսկ պատճառով Պալատը պրն. Ալ-Քավայայի գործում Կոնվենցիայի Հոդված 6-ի 1-ին և 3(դ) կետերի խախտում գտավ:

90. Պրն. Թահերիի գործի առնչությամբ Պալատը նշեց.

“45. Այս գործում Կառավարությունը հիմնվել էր հետևյալ հիմնական հակակշռող գործոնների վրա՝ գործը քննող դատավորի կողմից այլընտրանքային միջոցներ են դիտարկվել, դիմումատուն կարող էր իր իսկ վկայությամբ կամ նոր վկաներ հրավիրելով հերքել ցուցմունքը, գործը քննող դատավորը դիմել էր երդվյալ ատենակալներին զգուշությամբ դիտարկել բացակա վկայի տված ցուցմունքը, ինչպես նաև այն, որ դատավորը երդվյալ ատենակալներին տեղյակ էր պահել, որ դիմումատուն պատասխանատու չէր Թ-ի վախի համար:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

46. Ըստ Դատարանի՝ այս գործոնները, առանձին վերցրած կամ համակցության մեջ, չէին կարող ապահովել արդար դատավարություն կամ հակակշռել Թ-ի ցուցմունքի ընդունմամբ պաշտպանության կողմին հասցված վնասը: Ճիշտ կլինի, որ ներպետական դատարանները բացակա կամ անանուն վկայի հետ կապված խնդիրներին առնչվելիս դիտարկեն այլընտրանքային միջոցներ, որոնք ավելի քիչ են սահմանափակում մեղադրյալի իրավունքները, քան վկայի ցուցմունքը որպես վկայություն ընդունելու դեպքում: Այնուամենայնիվ, այն, որ այլընտրանքային միջոցներն անհամապատասխան էին, դեռ չի նշանակում, որ ներպետական դատարանները չպետք է հոգային, որ Հոդված 6-ի 1-ին և 3(«դ») կետերի խախտում չլինի, եթե նրանք թույլ են տալիս հրապարակել վկաների ցուցմունքները: Իսկապես, պակաս սահմանափակող միջոցներից հրաժարվելը ավելի է մեծացնում պատասխանատվությունը երաշխավորելու պաշտպանության կողմի իրավունքները հարգելը: Ինչ վերաբերում է դիմումատուի՝ վկաներ կանչելու միջոցով ցուցմունքը հերքելու կարողությանը, այս դեպքում վկա չկար, բացառությամբ Թ-ի, որն ակնհայտորեն կարող էր և ցանկություն ուներ պատմելու իր տեսածի մասին: Այս պայմաններում, ըստ Դատարանի Թ-ի ցուցմունքը չէր կարող արդյունավետորեն հերքվել: Դատարանն ընդունում է, որ դիմումատուն վկայություն է տվել՝ հերքելով իր դեմ ուղղված մեղադրանքը, չնայած այսպես վարվելու պատճառը Թ-ի ցուցմունքն ընդունելն էր: Մեղադրյալի՝ ի պաշտպանություն իրեն վկայություն տալու իրավունքը չի կարող համարվել որպես հակակշիռ մեղադրանքի կողմի միակ ակնառեսին տեսնելու, հարցաքննելու կամ խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայության համար:

47. Ի վերջո, ինչ վերաբերում է գործը քննող դատավորի՝ երդվյալ ատենակալներին ուղղված զգուշացմանը, Դատարանն ընդունում է, որ այն և՛ ամբողջական էր, և՛ ճիշտ ձևակերպված: Ճիշտ է նաև, որ Դորսոնի գործով անանուն վկաների համատեքստում, որի մասին հղում է արված վերը՝ 76-րդ կետում, Դատարանը զգուշացրել էր, որ «չափազանց զգույշ պետք է վարվել այն ապացույցի հետ, որը ձեռք է բերվում այնպիսի հանգամանքներում, որտեղ պաշտպանության կողմի իրավունքները չեն կարող ապահովվել Կոնվենցիայով սահմանված կարգով»: Այս դեպքում, ըստ Վերաքննիչ դատարանի, բոլոր համարժեք քայլերը ձեռնարկվել են, և բոլոր կարևոր հայտարարություններն արվել են «անհրաժեշտ զգուշությամբ և շրջահայեցությամբ»: Այնուամենայնիվ, այս գործում, որտեղ կա բացակա վկա՝ Թ-ն, ըստ Դատարանի, այսպիսի զգուշացումը, ինչպես նաև հիշեցումը, որ դիմումատուն պատասխանատու չէ վկայի բացակայության համար, ինչքան էլ պարզ ներկայացված լինեն, այնուհանդերձ, բավարար հակակշիռ չեն, եթե վկայի չստուգված ցուցմունքը մեղադրյալի դեմ միակ ուղղակի ապացույցն է»:

Այդ իսկ պատճառով Պալատը պրն. Թահերիի գործի առնչությամբ էլ Կոնվենցիայի Հոդված 6-ի 1-ին և 3(դ) կետերի խախտում գտավ:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

B. Կողմերի դիտարկումները:

1. Կառավարությունը

(a) Պալատի որոշումը

91. Կառավարությունը Հոդված 6-ի 3(դ)-րդ կետը դիտարկել էր որպես հստակ երաշխիք, բայց ոչ բացարձակ կանոն, որից որոշակի շեղում հնարավոր չլիներ. ուշադրությունը հիմնականում կենտրոնացվել էր դատաքննության ընդհանուր ընթացքի, մեղադրյալին հասանելի երաշխիքների, ապացույցի արժանահավատության և համապատասխան գործերում վկաների կամ տուժածների շահերի վրա: Միակ կամ որոշիչ բացարձակ կանոնը անհամատեղելի էր Դատարանի՝ Հոդված 6-ի 3(«դ»)-րդ կետի նկատմամբ մոտեցման հետ:

92. Կառավարությունը նշեց, որ Դատարանը մի շարք առիթներով թեստը հստակ չէր կիրառել և զարգացրել. կանոնի համար հիմք հանդիսացող սկզբունքի վերաբերյալ պատշաճ քննարկում չի եղել, չի դիտարկվել նաև այն հարցը, թե արդյոք այդ կանոնը կարող էր հավասարապես կիրառվել և՛ քաղաքացիական, և՛ ընդհանուր իրավունքի համակարգերում, *Ա.Մ. ընդդեմ Իտալիայի*, № 37019/97, ECHR 1999-IX գործով որոշումից առաջ Դատարանի նախադեպային իրավունքում բացակա վկայի առնչությամբ թեստ չէր կիրառվում, որի ինքնությունը հայտնի է պաշտպանության կողմին, ինչպես նաև Դատարանի նախադեպային իրավունքում ապացույցի որոշիչ լինելու կանոնի վերաբերյալ կայունություն չկար:

93. Կառավարությունը նշեց նաև, որ Պալատի կողմից կիրառված միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը, հիմնված էր այն թյուր ենթադրության վրա, որ բոլոր ասեկոսե ապացույցները, որոնք որոշիչ դեր էին խաղում գործում, կամ վստահելի չէին, կամ էլ խաչաձև հարցաքննության բացակայության դեպքում հնարավոր չէր լինի դրանք պատշաճ ձևով գնահատել: Իրականում, միակ կամ որոշիչ ասեկոսե ապացույցը կարող է միանգամայն հավաստի լինել, իսկ խաչաձև հարցաքննությունը շատ քիչ կամ ոչինչ չավելացնի դրա հավաստիության գնահատման համար: Կանոնը կարող էր ունենալ կամայական արդյունքներ. Այն կարող էր բացառել ապացույցը զուտ այն պատճառով, որ այն կարևոր էր առանց հաշվի առնելու ապացույցի հավաստիությունն ու անժխտելիությունը: Պալատը չէր բացատրել, թե արդյոք և ինչքանով է հավաստիությունը կարևոր այս կանոնի կիրառման համար: Այն ամբողջությամբ չէր ուսումնասիրել Անգլիայում և Ուելսում գործող երաշխիքները, և ոչ էլ կարևորել էր ընդհանուր իրավունքի և Կոնվենցիայի անդամ երկրների դատական վարույթի տարբերությունները: Այն ճշգրտորեն չբացատրեց, թե երբ է ապացույցը որոշիչ, որպեսզի դատարանը կարողանար կիրառել միակ կամ որոշիչ

[Type text]



ապացույցի մասին կանոնը, և ոչ էլ պատշաճ կերպով դիտարկել է գործնական խնդիրները, որոնք կարող էին առաջանալ այդ կանոնը Անգլիայում և Ուելսում կիրառելու դեպքում:

94. Թեստը նույնպես կարող է վկայի վախի պատճառ դառնալ, հատկապես եթե միայն մեկ վկա է բավականաչափ քաջ գտնվել ցուցմունք տալու համար: Դա մեծապես կազդեր սեռական բռնության գործերում, երբ հանցանքը կատարվում է գաղտնի և ուստի հավանական է, որ վկայի ցուցմունքը «միակ կամ որոշիչն է»:

95. Այդ պատճառով Կառավարությունն առաջարկեց Դատարանին հետևել Գերագույն դատարանի մոտեցմանը *Հորնքեսլը և այլոց* գործով: Գերագույն դատարանի որոշումը ցույց տվեց, որ այս Դատարանի նախադեպային իրավունքն ավելի ճկուն մոտեցման հնարավորություն էր տալիս, քան Պալատն իր միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնով բարդ մոտեցմամբ: Ելնելով *Հորնքեսլը և այլոց* գործով Գերագույն դատարանի եզրակացությունից, ըստ որի միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը մի շարք գործնական դժվարություններ կառաջացներ Անգլիայում և Ուելսում, Կառավարությունն առաջարկեց հստակեցնել, որ չստուգված ապացույցի կարևորությունն ավելի շատ հաշվի առնվեր՝ որպես մյուս գործոնների համակցության բաղկացուցիչ, որը պետք է հաշվի առնվեր որոշելիս, թե արդյոք ընդհանուր դատավարությունն արդար էր, թե ոչ: Որպես այլընտրանք Կառավարությունն առաջարկեց, որ միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը չկիրառվի, երբ վկայի բացակայության լուրջ պատճառներ կան, ինչպես օրինակ 1988թ-ի ակտի 23-րդ բաժնով և 2003թ-ի ակտի 116(2)-րդ բաժնով սահմանված դեպքերը:

(b) Ներպետական օրենսդրությունը և դրա կիրառումը

96. Կառավարությունն ընդգծեց, որ հիմնական երաշխիքները պաշտպանում էին մեղադրյալին անարդարությունից, որը կարող էր առաջանալ ասեկոսե ապացույցն ընդունելու դեպքում:

Գործը քննող դատավորը գործել էր որպես «դարպասապահ». ընդհանուր իրավունքով և 1984թ-ի Ոստիկանական և քրեական ապացույցի մասին ակտի 78-րդ բաժնի համաձայն նա պարտավոր էր կանխել այնպիսի ասեկոսե ապացույցի հրապարակումը երդվյալ ատենակալների առջև, որը կարող էր հակառակ ազդեցություն ունենալ դատավարության վրա, որ այդ ապացույցը չպետք է ընդունվեր: Գործը քննող դատավորը պետք է համոզված լիներ, որ մեղադրանքի կողմը չէր կարող ապացույցը ներկայացնել՝ կանչելով վկային. դատավորը պարտավոր է տեղեկացնել երդվյալ ատենակալներին, թե ինչ հետևանքներ կարող են առաջանալ ասեկոսե ապացույցն ընդունելու դեպքում: Երդվյալ ատենակալները [Type text]



պետք է առանց ողջամիտ կասկածի համոզված լինեին մեղադրյալի մեղավոր լինելու մեջ, և բացի այդ Վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորություն կար, որը կընդունվեր, եթե դատապարտումն հիմնավոր չլիներ:

97. 1988թ-ի ակտի 23-րդ բաժնի համաձայն որոշ նշված դեպքերում ասեկոսե ապացույցն ընդունելի է անկախ այն փաստից, թե որ կողմն է ներկայացնում այն՝ մեղադրանքը, թե պաշտպանությունը: Գործը քննող դատավորը պարտավոր էր ամենայն խստությամբ ստուգել, թե արդյոք կարիք կար ընդունել ապացույցը: 25-րդ բաժնի համաձայն դատավորը կարող էր չընդունել ցուցմունքը, եթե, ըստ նրա, արդարադատության շահերից ելնելով, պետք չէր ընդունել այն (հավաստիության և պատշաճ դատավարության երաշխիք): 26-րդ բաժնի համաձայն, որը վերաբերում էր քրեական վարույթի համար ցուցմունքներ ստանալուն, դատավորը պարտավոր էր հաշվի առնել ցուցմունքի բնույթը, աղբյուրը և բովանդակությունը, այլ ապացույցների առկայությունը, ապացույցի կարևորությունը, և թե ինչպես դրա ընդունումը կարող է անարդար լինել մեղադրյալի համար: Ակտի երկրորդ հավելվածի համաձայն թույլատրվում է ընդունել ապացույցներ, որոնք վերաբերում են ցուցմունք տվող անձի վստահելիությանը և հետևողականությանը:

98. 2003թ-ի ակտի առնչությամբ Կառավարությունը նշեց, որ այն օրինական ուժի մեջ է մտել Իրավական հանձնաժողովի կողմից ասեկոսե ապացույցի մասին կանոնի մանրագնին վերանայումից հետո, որը եզրակացրել էր, որ ասեկոսե ապացույցը բացառելու համար հիմք հանդիսացող ենթադրություններից շատերը հիմնավորված չէին. օրինակ, ըստ հանձնաժողովի, ասեկոսե ապացույցը միշտ չէ, որ ոչ ճիշտ կամ ոչ հավաստի էր, և որ շատ հաճախ կանոնի պատճառով անվիճարկելի ապացույցը կարող է կամայականորեն բացառվել:

99. Ինչպես 1989թ-ի ակտի, այնպես էլ 2003թ-ի ակտի համաձայն և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմը իրավունք ունեին ներկայացնել ասեկոսե ապացույցը: 116(2)(e)-րդ բաժինը ներառվել էր 2003թ-ի ակտի մեջ, որպեսզի հանցանքը բացահայտվի՝ հատուկ միջոցներ ապահովելով վկաներին պաշտպանելու համար, որոնք վախենում էին, որ կահաբեկվեն և հետհարված կստանան: Եթե այն կիրառվում էր վկայի վախի դեպքում, գործը քննող դատավորը կարող էր թույլատրել, եթե դրա ընդունումը բխում է արդարադատության շահերից: Բացի այդ, ի տարբերություն Եվրոպայի խորհրդի մյուս անդամ երկրների այս Ակտը թույլ չէր տալիս ընդունել անանուն ասեկոսե ապացույցը. վկան չէր կարող և՛ անանուն լինել, և՛ բացակա: Ի վերջո, Կառավարությունը նշեց Ակտի 124-126 բաժիններով նախատեսված պաշտպանության մյուս ձևերը (տե՛ս վերը, 45-րդ կետ):

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

(c) Յուրաքանչյուր գործի փաստերը:

100. Պրն. Ալ-Քավայայի գործի առնչությամբ Կառավարությունը որպես կարևոր գործոն նշեց այն, որ Ս.Թ.-ի բացակայության համար հիմնավորված պատճառ կար (նրա մահը): Գործը քննող դատավորն ընդունեց նրա ցուցմունքը՝ արդարադատության շահերից ելնելով, և այդ որոշումը կայացնելիս հաշվի է առել այն բացասական հետևանքները, որոնք կարող էին առաջանալ առաջին դիմումատուի համար:

101. Ս.Թ.-ի ցուցմունքը միակը կամ որոշիչ չէր: Այն լրացնող այլ ապացույցներ էլ կային, ներառյալ ժամանակին բողոքարկելը, նրա վարքագիծը բողոքարկման ժամանակ, ինչպես նաև այն, որ չափազանց նման ենթադրյալ մեղադրանք են ներկայացրել նաև այլ կանայք: Առաջին դիմումատուն հնարավորություն է ունեցել խաչաձև հարցաքննել մյուս վկաներին, վկայություն տալ ի պաշտպանություն իրեն և դիմել երդվյալ ատենակալներին իրեն ուղղված մեղադրանքի առնչությամբ: Երդվյալ ատենակալներին մանրամասն ուղղորդել էին և՛ Ս.Թ.-ի ցուցմունքի, և՛ գործում ապացույցման բեռի վերաբերյալ: 1988թ-ի Ակտը պատշաճ կերպով կիրառվել էր, և հիմք չկար հակառակելու գործը քննող դատավորի և Վերաքննիչ դատարանի որոշմանը, ըստ որի ասեկոսե ապացույցի ընդունումն արդար էր:

102. Թահերիի գործում Թ-ի վախը հիմնավոր պատճառ էր նրան հարցաքննության չկանչելու համար: Ինչպես առաջին դիմումատուի գործում, գործը քննող դատավորը եզրակացրել էր, որ արդարադատության շահերից է բխում ապացույցի ընդունումը, և այդ որոշումը կայացնելիս հաշվի էր առել այն բացասական հետևանքները, որոնք կարող էին առաջանալ պաշտպանության կողմի համար: Թ-ի ցուցմունքը միակ կամ որոշիչ չէր: Այն լրացնող այլ ապացույցներ էլ կային, ներառյալ այն, որ երկրորդ դիմումատուն ընդունել էր, որ ականատես է եղել հանցանքին, վերցրել է դանակը, որով տուժածին հարվածել էին, մասնակցել է Ս.-ի վեճին և որ ստել է ոստիկանությանը: Երկրորդ դիմումատուն հնարավորություն է ունեցել խաչաձև հարցաքննել մյուս վկաներին, վկայություն տալ ի պաշտպանություն իրեն և դիմել երդվյալ ատենակալներին իրեն ուղղված մեղադրանքի առնչությամբ: Երդվյալ ատենակալներին մանրամասն ուղղորդել էին և՛ Թ-ի ցուցմունքի, և՛ գործում ապացույցման բեռի վերաբերյալ: 2003թ-ի Ակտը պատշաճ կերպով կիրառվել էր, և հիմք չկար հակառակելու գործը քննող դատավորի և Վերաքննիչ դատարանի որոշմանը, ըստ որի ասեկոսե ապացույցի ընդունումն արդար էր:

2. Դիմումատուները

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

(a) Պալատի որոշումը

103. Դիմումատուները նշեցին, որ Հոդված 6-ի 3(դ)-րդ կետի առնչությամբ երեք հնարավոր մոտեցում կար: Առաջինը Միացյալ Նահանգների Գերագույն դատարանից վերցրած խիստ և ճշգրիտ մոտեցումն է Վեցերորդ փոփոխության նմանատիպ դրույթների վերաբերյալ. դիմումատուները չէին առաջարկում Դատարանին ընդունել այս մոտեցումը: Երկրորդ՝ Դատարանից կողմից դրսևորված մոտեցմամբ Հոդված 6-ի 3(դ)-րդ կետը չէր համարվում բացարձակ, այլ մեկնաբանվում էր որպես արդարության նվազագույն անկրճատելի հիմք: Այս մոտեցումը հիմնված է միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնի վրա և ճիշտ մոտեցումն է: Երրորդ մոտեցումը ՄԹ-ի կառավարության և *Հորնքեսլը և այլոց* գործով Գերագույն դատարանի մոտեցումն է, որը դիմումատուների պնդմամբ կրճատում էր Հոդված 6-ի 3(դ)-րդ կետով նախատեսված երաշխիքները, թողնելով քննարկվող միայն մեկ հարց՝ արդյոք մեղադրյալի համար դատավարությունն արդար էր, թե ոչ:

Այդ պատճառով դիմումատուները պնդում էին, որ ներպետական դատարանները և Կառավարությունը ճիշտ չէին գնահատել մեղադրյալի՝ վկաներին հարցաքննելու իրավունքը: Այդ իրավունքը չէր կարելի անտեսել՝ համարելով ձևական կամ պատմական. մի շարք հիմնավորումներ կան, թե ինչու մեղադրյալի դատապարտումը չհիմնավորված և անարդար կլինի, եթե հիմնված լինի միայն և որոշիչ մասով բացակա վկայի տված ցուցմունքի վրա: Օրինակ՝ հնարավոր կլինե՞ր հետևել տվյալ անձի վարքագծին դատարանում, վկայի ընկալման, հիշողության կամ անկեղծության վերաբերյալ հարցեր կլինե՞ին, առանց որի հնարավոր չէր լինի նկատել սխալները, չափազանցումները կամ կանխամտածված սուտը: Նաև մեկ բան է վնասող ազդեցություն ունեցող ցուցմունք տալը գաղտնի և մեկ այլ բան՝ այդ ցուցմունքը կրկնել դատաքննության ժամանակ:

104. Բացի այդ, կանոնի տրամաբանությունը պարզ է. որոշելիս, թե երբ պետք է ընդունել ասեկոսե ապացույցը, դրան հաջորդող գործողությունները պետք է բավարար հակակշիռ լինե՞ին պաշտպանության կողմին հասցված վնասին, ինչպես նաև պատշաճ կերպով պետք էր որոշել, թե ինչքանով է ապացույցը որոշիչ դիմումատուի դատապարտման համար: Եթե ապացույցը որոշիչ չէր, ապա պաշտպանության կողմին հասցված վնասն ավելի քիչ էր, իսկ եթե ապացույցը որոշիչ էր, ապա վնասը շատ ավելի մեծ էր: Դիմումատուները պնդում էին, որ կանոնը *Հուկան ընդդեմ Իտալիայի* N° 33354/96, 40-րդ կետ, ՄԻԵԴ 2001-II գործում ներկայացվել էր պարզ և հասարակ ձևով, Դատարանի նախադեպային իրավունքում՝ լավ հիմնավորված, իսկ Հոդված 6-ի 3(դ)-րդ կետով՝ սկզբունքային, գործնական և խելամիտ մեկնաբանությամբ:

[Type text]



105. Դիմումատուները պնդում էին, որ Գերագույն դատարանը սխալ ընտրություն էր արել՝ ընտրելով *Հորնքեսլը և այլոց* գործով կիրառած մոտեցումը: Այն սխալվել էր մտածելով, որ Պալատի մոտեցումն ընտրելու դեպքում անվիճարկելի և ակնհայտորեն հավաստի ապացույցը կբացառվեր: Չստուգված ապացույցը, որն ակնհայտորեն հավաստի էր երևում, ընդունելու դեպքում ուներ ներքին վտանգներ. իրավունքում կային բազմաթիվ գործեր, որտեղ ապացույցը ճնշող էր համարվել ուշ ներկայացվելու պատճառով, բայց սա այդ դեպքը չէր:

106. Լորդ Ֆիլիպսն առաջարկել էր, որ Հոդված 6-ի 3(դ)-րդ կետն ուղղված էր քաղաքացիական իրավունքում առկա թուլությանը՝ ի հակադրություն ընդհանուր իրավունքի համակարգերին: Այնուամենայնիվ, դիմումատուները պնդում էին, որ ինչպիսին էլ որ լինեն այդ Հոդվածի պատմական հիմքերը, այնուհանդերձ, անգլիական իրավունքը հեռացել էր ասեկոսե ապացույցի դեմ ավանդական կանոնից: Անկարելի էր թույլ տալ, որ տարբեր իրավական համակարգերում տարբեր չափանիշներ կիրառվեին. դա կթուլացներ Կոնվենցիայի համակարգի բնույթը:

107. Դիմումատուները նաև համարում էին, որ Գերագույն դատարանը սխալվել էր՝ գտնելով, որ միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը Անգլիայում և Ուելսում կիրառելու դեպքում գործնական խնդիրներ կառաջանային: «Որոշիչ» հստակ նշանակում էր ապացույց, որը գործի համար հիմնական նշանակություն ունի, և կանոնը կիրառելիս Դատարանն իր հերթին ցույց տվեց, որ հնարավոր է որոշել, թե որ ապացույցն է միակը կամ որոշիչ: Մինչև Պալատը Կառավարությունը առանց դժվարության ընդունեց, որ յուրաքանչյուր բացակա վկայի տված ցուցմունքը միակ կամ որոշիչ էր: ՄԹ-ում գործը քննող դատավորները կանոնավոր կերպով գնահատել են գործին առնչվող բարդ հանգամանքները և որոշել, թե արդյոք իրավական թեստերը, ինչպես օրինակ «արդարություն» կամ «բավարար ապացույց» իրականացվել են, թե ոչ: Բացի այդ, այդ թեստն ընդգրկվել է 2009թ-ի Կորոներների և Արդարադատության ակտում անանուն վկայության առնչությամբ (տե՛ս վերը, 46-րդ կետ): Դիմումատուները նշել են նաև, որ Գերագույն դատարանը ուշադրությունը կենտրոնացրել է, որպեսզի ցույց տա, որ այս Դատարանի բոլոր գործերի ելքերը նույնը կլինեին, եթե առաջնորդվեին 2003թ-ի և 1988թ-ի ակտերով: Այս առաջարկից հետևում էր, որ միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը կիրառելու դեպքում ներպետական դատարանները շատ գործերում կհանգեին նույն արդյունքին :

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

(b) Ներպետական օրենսդրությունը և պրակտիկան

108. Դիմումատուները պնդեցին նաև, որ հակառակ Կառավարության պնդումներին և Գերագույն դատարանի՝ *Հորնքեսլը և այլոց* գործով նկատառումներին, Պալատը հասկացել էր 1988թ-ի և 2003թ-ի ակտերով նախատեսված ընթացակարգային երաշխիքները: Այդ ընթացակարգերը համապատասխան պաշտպանություն կարող էին ապահովել միայն այն դեպքում, եթե դրանք գործեին որպես մեխանիզմի մի մաս, որտեղ Հոդված 6-ի հիմնական արժեքներն էին գերակշռում, բայց դա հնարավոր չէ, քանի դեռ ներպետական դատարանները պատշաճ կերպով հաշվի չեն առնում մեղադրյալի՝ իր դեմ վկայություն տվող անձանց հարցաքննելու իրավունքը:

(c) Յուրաքանչյուր գործի փաստերը

109. Ըստ դիմումատուների՝ չստուգված ապացույցի միակ կամ որոշիչ բնույթը նշանակում էր, որ ոչ մի ընթացակարգ չի կարող ապահովել արդար դատավարություն, եթե կարևոր վկաներին հարցաքննելու հնարավորություն չկա: Առաջին դիմումատուի գործի առնչությամբ Մ.Թ.-ին ուղղված շատ կարևոր հարցեր կային, օրինակ՝ արդյոք նա տեղյակ էր ՎՅ-ի ենթադրյալ մեղադրանքներից մինչև ցուցմունք տալը և ինչու էր չորս ամիս սպասել մինչև ցուցմունք տալը: Երկրորդ դիմումատուի գործով ակնհայտ հարցերը, որ կարող էին տրվել Թ-ին, հետևյալն է. ինչու՞ նա չէր գնացել ոստիկանություն միջադեպի օրը, ի՞նչ կարծիքի էր արագ տեղի ունեցած միջադեպի մասին, արդյո՞ք ճանաչում էր միջադեպին ներկա մյուս անձանց և արդյո՞ք ուներ որևէ պատճառ նրանց պաշտպանելու: Այդ իսկ պատճառով խաչաձև հարցաքննության բացակայության պատճառով 1988թ-ի և 2003թ-ի ակտերով նախատեսված ընթացակարգային երաշխիքները բավարար չէին: Այն, որ գործը քննող դատավորը յուրաքանչյուր գործում գործել է՝ «արդարադատության շահերից» ելնելով, այլ հարցերի տեղ չէր թողնում. այդ թեստը պետք է կիրառվեր Հոդված 6-ին համապատասխան, և թե արդյոք գործը քննող դատավորները ճիշտ որոշում էին կայացրել, որոշելով, որ ցուցմունքի ընդունումը արդարադատության շահերից է բխում, որն, իրականում, Դատարանի որոշելու հարցն էր:

110. Ոչ էլ կարևոր էր դիմումատուների՝ բացակա վկաների ցուցմունքների հավաստիությունը ստուգելու իրավունքը, քանի որ յուրաքանչյուր վկայի դեպքում համապատասխան նյութեր չկային, և օրենսդրությամբ նախատեսված չէր որևէ հնարավորություն ստուգելու վկաների արժանահավատությունը և վստահելիությունը յուրաքանչյուր գործի ենթադրյալ մեղադրանքների առնչությամբ: Դիմումատուները պնդում էին, որ գործը քննող դատավորի կողմից ոչ մի զգուշացում

[Type text]



չի կարող ծառայել որպես վկաներին տեսնելու և լսելու երդվյալ աստենակալների հնարավորության բացակայության փոխհատուցում, և ոչ էլ կարող է կանխել այն վտանգը, որ ապացույցը կարող է ստանալ այնպիսի ապացուցողական նշանակություն, որը նրան չպետք է տրվեր: Դատապարտման դեմ բողոքարկելու իրավունքը արդյունավետ չէր, քանի որ Վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր գործում հրաժարվել էր միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը կիրառել, ինչպես Լուկայի գործում, որի մասին վերը հղում է արված:

3. Գործի երրորդ կողմը

111. Արդարադատությունը (տե՛ս վերը, 7-րդ կետ) պնդում էր, որ վկաներին հարցաքննելու իրավունքը հին է: Այն սկիզբ է առել հռոմեական և պատմական ընդհանուր իրավունքի առերեսման իրավունքից: Ընդհանուր իրավունքը ընդունում էր ասեկոսե ապացույցի ընդունման վտանգավորությունը, ներառյալ դրանից անբաժանելի անարժանահավատությունը: Այն էլ իր հերթին ձևավորել է արդար դատաքննության երաշխիքները, որոնք ամրագրված են ԱՄՆ-ի սահմանադրության վեցերորդ փոփոխության մեջ, ընդհանուր իրավունքի երկրների քրեական դատավարությունում և մարդու իրավունքների միջազգային իրավական համակարգում: Չնայած ասեկոսե ապացույցի մասին կանոնը շատ է խստացվել անգլիական իրավունքում, սխալ կլիներ պնդել, ինչպես Գերագույն դատարանը Հորնքեյլը և այլոց գործով, որ Իրավական հանձնաժողովի բարեփոխումները «մեծապես կիրարկվել են» 2003թ-ի ակտում: Օրինակ՝ 2003թ-ի ակտի 114-րդ բաժնի համաձայն ասեկոսե ապացույցն ընդունելու ավելի մեծ հայեցողություն կար, եթե դա արվում էր՝ «արդարադատության շահերից ելնելով», քան Իրավական հանձնաժողովի կողմից նախատեսվածի համաձայն (տե՛ս վերը, 42-րդ և 43-րդ կետեր): Բացի այդ, եթե նույնիսկ կարիք կար ասեկոսե ապացույցի մասին կանոնը բարեփոխելու, ապա նույնը չենք կարող ասել ընդհանուր իրավունքով նախատեսված առերեսման իրավունքի մասին. այդ իրավունքով ամրագրվում այն սկզբունքը, որ անձը չէր կարող ցուցմունք տալ քրեական գործով մեղադրյալի դեմ, եթե նա երդում չէր տվել, չէր տալիս մեղադրյալի առջև, և եթե չկար խաչաձև հարցաքննելու հնարավորություն:

112. Գերագույն դատարանը սխալվել էր նաև ասելով, որ միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը արդարացի չէ պարտադրել և՛ մայրցամաքային իրավունքի, և՛ ընդհանուր իրավունքի համակարգերում: Գերագույն դատարանը չափազանց շատ էր ապավինել հակակշռող միջոցների վրա որպես չստուգված ցուցմունքի վրա ամբողջությամբ կամ մասամբ հիմնվելու դեպքում անարդար դատապարտման հաղթահարման միջոց: Ընդհանուր իրավունքի առերեսման

[Type text]



իրավունքի հիմքում ընկած էր այն ընմբոնումը, որ խաչաձև հարցաքննությունը վկայի ցուցմունքի հանդեպ վստահության ձևավորման ամենաարդյունավետ միջոցն է:

Ճիշտ կլինի հիշել Մեգարի Ջ-ի զգուշացումը (Ջոնն ընդդեմ Ռիսի (1970) Շհ 345), որ «օրենքի արահետը լի էր բաց և փակ գործերի օրինակներով, որոնք ինչ-որ ձևով անվիճարկելի մեղադրանքներ չէին, ինչպես նաև լի էր պատասխանի ոչ ենթակա մեղադրանքներով, որոնց պատասխանը ամբողջությամբ տրվում էր»: Բացի այդ Արդարադատությունը պնդում էր, որ, ինչպես Սեդլի ԼՋ-ն էր նշել Ներքին գործերի նախարարությունը ընդդեմ ԱՖ-ի և մյուսների (*Ներքին գործերի նախարարն ընդդեմ ԱՖ-ի և մյուսների* [2008] EWCA Civ 1148) գործում, «անչափ հեշտ է եզրակացնել, որ հնարավոր չէ պատասխան ակնկալել մի գործից, որի միայն մեկ կողմին էք լսել»: Այդ պատճառով է, որ Լորդ Ֆիլիփսի կողմից մատնանշված պարադոքսը ամեննին էլ պարադոքս չէ: Ասեկոսե ապացույցը չի դառնում անվիճարկելի զուտ այն պատճառով, որ այն կարող է լինել անձի մեղադրանքին առնչվող միակ կամ հիմնական ապացույցը: «Որոշիչ» ասեկոսե ապացույցը բացառելու կարիքը արդարացվում է ընդհանուր իրավունքի համակարգում աշխատող դատավորների երկարատև վախով, որ երդվյալ ատենակալները կարող էին դրան անհարկի կարևորություն տալ:

113. Անգլիական քրեական դատավարությունում դժվար չէր կիրառել միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը, քանի որ դատավորները պետք է դիտարկեին ասեկոսե ապացույցն ընդունելու հետևանքները տարբեր օրենսդրական կարգավորումների տեսանկյունից, ներառյալ 2003թ-ի ակտը: Օրինակ՝ 125-րդ բաժնի համաձայն գործը քննող դատավորը պետք է ուղղորդեր դեպի արդարացում այն դեպքում, երբ գործը «ամբողջությամբ կամ մասամբ» հիմնված էր ոչ համոզիչ ասեկոսե ապացույցի վրա: Արդարադատությունն ընդունեց, որ կարիք կար պարզաբանելու, թե ինչ ի նկատի ունեին ասելով «որոշիչ», բայց կարծում էր, որ թեստն, այնուամենայնիվ, կարող էր աշխատել և, իսկապես, կիրառվել էր Անգլիայում և Ուելսում վկաների անանունության առնչությամբ (տե՛ս վերը, 2009թ-ի Կորոներների և արդարադատության ակտի 46-րդ կետ): Քրեական դատավարության համատեքստում «որոշիչը» նեղ իմաստով պետք է հասկանալ. այն չպետք է նշանակի «փոփոխություն անելու ընդունակ», այլ՝ «վճռորոշ կամ եզրափակիչ լինելու հավանականություն ունեցող»:

114. Վերջապես Գերագույն դատարանի՝ համեմատական իրավունքի վերլուծությունը լավագույն դեպքում մասնակի էր արվել: Առկա ապացույցի հիման վրա (տե՛ս վերը ինտեր ալիա, 63-87-րդ կետեր) անհնար էր եզրակացնել, ինչպես Գերագույն դատարանն արեց, որ ընդհանուր իրավունքի մյուս համակարգերում միայն կամ հիմնականում ասեկոսե ապացույցի վրա հիմնված քրեական

[Type text]



դատապարտումը համատեղելի կհամարվի արդար դատաքննության իրավունքի
հետ:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

C. Մեծ պալատի գնահատականը

1. Ընդհանուր սկզբունքները

118. Դատարանը նշում է, որ 6-րդ հոդվածի 3 (դ) կետում առկա երաշխիքները այս դրույթի 1-ին կետում ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքի հատուկ կողմերն են, և որ արդար դատաքննության ցանկացած գնահատական տալիս պետք է հաշվի առնել այս դրույթը: Բացի այդ, Դատարանի՝ 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հիմնական խնդիրը քրեական դատաքննության ընդհանուր արդարության գնահատումն է (տե՛ս Թասքեթն ընդդեմ Բելգիայի գործով վճիռը [GC], թիվ 926/05, կետ 84, 2010թ, նոյեմբերի 16, այլ հղումների համար տե՛ս այստեղ): Այս գնահատականը կազմելիս Դատարանը կդիտի դատաքննությունը որպես ամբողջություն՝ հաշվի առնելով պաշտպանության կողմի իրավունքները, ինչպես նաև հանրության և զոհերի շահերը՝ ապահովելու հանցանքի պատշաճ հետապնդում (տե՛ս Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը [GC], թիվ 22978/05, կետ 175, ՄԻԵԴ 2010- ...) և անհրաժեշտության դեպքում վկաների իրավունքները (տե՛ս Դորսոնը, մեջբերված վերևում, կետ 70): Այս համատեքստով նշվում է նաև, որ ապացույցի թույլատրելիության հարցը պետք է կարգավորվի ազգային օրենսդրության և ազգային դատարանների կողմից, իսկ Դատարանի միակ խնդիրը քննելն է՝ արդյոք դատավարությունը արդար է ընթացել, թե ոչ (տե՛ս Գաֆգենը, մեջբերված վերևում, կետ 162, հղումների համար տե՛ս այստեղ):

6-րդ հոդվածի 3 (դ) կետում ամրագրված սկզբունքին համաձայն մինչ ամբաստանյալին դատապարտելը նրա դեմ ուղղված բոլոր ապացույցները պետք է իր ներկայությամբ պատշաճ կերպով ներկայացվեն բաց դատալսման ընթացքում, որտեղ ամբաստանյալը ունենա հակառակ փաստարկներ ներկայացնելու հնարավորություն: Բացառություններ այս սկզբունքից հնարավոր են, բայց դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները, համաձայն որոնց, որպես կանոն, ամբաստանյալին պետք է տրվի վկայի՝ իր դեմ ուղղված վկայությանը վիճարկելու և վկային հարցաքննելու պատշաճ հնարավորություն թե՛ այն ժամանակ, երբ վկան տալիս է իր վկայությունը և թե՛ դատաքննության հետագա փուլում (տե՛ս Լուկան, մեջբերված վերևում, կետ 39. Սոլակովն ընդդեմ «Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության» գործով վճիռը, թիվ 47023/99, կետ 57, ՄԻԵԴ 2001-X):

Վաղուց ի վեր հաստատված նման մի սկզբունք կա Անգլիայի և Ուելսի ընդհանուր իրավունքում (տե՛ս 5-րդ կետում Լորդ Բինգամի՝ Ռ-ն ընդդեմ Դեյվիսի վճռի վերաբերյալ դիտարկումները՝ ամփոփված 49-րդ կետում):

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

119. Դատարանի նախադեպային իրավունքի առնչությամբ վերոհիշյալ ընդհանուր սկզբունքից բխում են երկու պահանջներ: Նախ՝ վկայի չներկայանալու համար պետք է լինի հիմնավոր պատճառ: Երկրորդ, երբ դատապարտումը բացառապես կամ որոշիչ աստիճանով հիմնված է ցուցմունքների վրա, որոնք տրվել են անձի կողմից, որին ամբաստանյալը քննելու հնարավորություն չի ունեցել թե՛ նախաքննության ընթացքում և թե՛ դատաքննության ժամանակ, պաշտպանության կողմի իրավունքները կարող են սահմանափակվել մի աստիճանի, որն անհամատեղելի է 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (այսպես կոչված «միակ կամ որոշիչ կանոն»): Դատարանը ստորև կքննի՝ արդյոք այդ կանոնը պետք է համարել բացարձակ, որի խախտումը ինքնաբերաբար կհանգեցնի այն եզրակացության, որ դատաքննությունը արդար չի եղել, քանի որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

2. Արդյոք կա վկայի չներկայանալու հիմնավոր պատճառ

120. Բացակա վկայի վկայությունն ընդունելու հիմնավոր պատճառի անհրաժեշտությունը առաջնային հարց է, որը պետք է քննել մինչ որոշելը, թե արդյոք այդ վկայությունը միակն է և որոշիչ: Նույնիսկ այն դեպքում, երբ բացակա վկայի վկայությունը չի եղել միակ և որոշիչ, դատարանը նորից գտել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին և 3 (դ) կետերի խախտում, երբ վկային քննել չկարողանալու հիմնավոր պատճառ չի եղել (տե՛ս, օրինակ, *Լուդին ընդդեմ Շվեյցարիայի* գործով վճռում, հունիսի 15, 1992թ, շարք Ա թիվ 238, *Միլդր և Միրտանեն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով վճիռը, թիվ 39481/98 և 40227/98, հուլիսի 26, 2005թ. *Բոննն ընդդեմ Բուլղարիայի* գործով վճիռը, թիվ 60018/00, հունիսի 8, 2006թ. և *Պելոն ընդդեմ Էստոնիայի*, թիվ 11423/03, ապրիլի 12, 2007թ): Սրա պատճառն այն է, որ, որպես կանոն, վկաները պետք է վկայություն տան դատավարության ընթացքում և, որ ողջամիտ ջանքեր պետք է ներդրվեն երաշխավորելու նրանց ներկայությունը: Ուստի, երբ վկաները չեն ներկայանում տալու կենդանի վկայություն, անհրաժեշտ է տեղեկանալ՝ արդյոք այդ բացակայությունն արդարացված է, թե ոչ: Վկայի չներկայանալու մի շարք պատճառներ կարող են լինել, բայց սույն դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել միայն մահվան կամ վախի պատճառով բացակայությունը:

121. Պարզ է, որ այն դեպքում, երբ վկան մահանում է, որպեսզի հաշվի առնեն իր վկայությունը, անհրաժեշտ կլինի ներկայացնել նրա վկայությունը (տե՛ս, օրինակ, Ֆերանտելին և Սանտանգելոն ընդդեմ Իտալիայի գործով վճիռը, օգոստոսի 7, 1996թ, կետ 52, վճիռների և որոշումների զեկույցները 1996-III. *Միկան ընդդեմ Շվեդիայի* (որոշում), կետ 37, թիվ 31243/06 հունվարի 27, 2009թ):

[Type text]



122. Վախի պատճառով բացակայությունը պահանջում է ավելի խորը քննություն: Պետք է տարբերել երկու տեսակի վախ. Վախ, որը վերագրելի է ամբաստանյալի կամ նրա անունից գործող այլ անձանց կողմից կատարված սպառնալիքներին կամ այլ գործողություններին և վախ, որը վերագրելի է այն ավելի ընդհանուր վախին, թե ինչ կպատահի, երբ վկան վկայություն տա դատավարության ժամանակ:

123. Երբ վկայի վախը վերագրելի է ամբաստանյալին կամ նրա անունից գործող անձանց, ապա ճիշտ է թույլ տալ, որ այդ վկայի վկայությունը ներկայացվի դատավարությանը առանց վկայի կողմից կենդանի վկայություն տալու կամ ամբաստանյալի կամ նրա ներկայացուցիչների կողմից քննվելու անհրաժեշտության, եթե նույնիսկ այդ վկայությունը ամբաստանյալի դեմ ներկայացված միակ և որոշիչ վկայությունն է: Թույլ տալը, որ ամբաստանյալն օգտվի վկաների մեջ առաջացրած վախից, անհամատեղելի է տուժող և վկաների իրավունքների հետ: Ոչ մի դատարան չպետք է թույլ տա, որ իր դատաքննության արդարությունը խաթարվի նման կերպ: Հետևաբար, ամբաստանյալին, որը նման կերպ է վարվել, պետք է դիտարկել որպես անձ, ով հրաժարվել է վկային քննելու՝ 6-րդ հոդվածի 3(դ) կետով սահմանված իր իրավունքից: Նույն եզրակացությունը պետք է կիրառել, երբ սպառնալիքները կամ գործողությունները, որոնք հանգեցնում են նրան, որ վկան վախենա վկայություն տալ, կատարվում են անձանց կողմից, ովքեր գործում են ամբաստանյալի անունից կամ նրա իմացությամբ և հավանությամբ:

Հորնքեալը և այլոց գործում Գերագույն դատարանը գտել է, որ ցանկացած դատարանի համար դժվար է համոզված լինել, որ ամբաստանյալը սպառնացել է վկային: Դատարանը չի թերագնահատում այն դժվարությունները, որոնք կարող են առաջ գալ որոշելիս՝ արդյոք որոշակի գործում ամբաստանյալը կամ նրա գործընկերները պատասխանատու են սպառնալու կամ վկայի մեջ ուղղակիորեն վախ սերմանելու համար: Սակայն Թահերիի գործն ինքնին ցույց է տալիս, որ արդյունավետ քննության շնորհիվ այդպիսի դժվարությունները հաղթահարելի են:

124. Դատարանի նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ վկաները հիմնականում ունենում են վկայություն տալու ընդհանուր վախ և ոչ թե վախ, որը ուղղակիորեն վերագրելի է սպառնալիքներին, որոնք արվում են ամբաստանյալի կամ նրա գործակալների կողմից: Օրինակ, շատ գործերում վախը վերագրվել է ամբաստանյալի կամ իր համախոհների վատ համբավին (տե՛ս, օրինակ, *Ձելլիին ընդդեմ Գերմանիայի* գործով վճիռը (որոշում), թիվ 15065/05, սեպտեմբերի 29, 2009թ): Ուստի կարիք չկա, որ վկայի վախը ուղղակիորեն վերագրելի լինի ամբաստանյալի կողմից արված սպառնալիքներին որպեսզի վկան ազատվի դատավարության ընթացքում վկայություն տալուց: Ավելին, մեկ այլ անձի մահվան կամ մարմնական

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

վնասվածքի կամ ֆինանսական կորստի վախը տեղին նկատառումներ են որոշելիս՝ արդյոք վկայից պետք է պահանջել տալ բանավոր վկայություն: Մակայն սա չի նշանակում, որ վկայի ցանկացած սուբյեկտիվ վախ կբավականացնի: Գործը քննող դատավորը պետք է իրականացնի պատշաճ հարցում նախ պարզելու՝ արդյոք այդ վախն ունի օբյեկտիվ հիմքեր և հետո որոշելու՝ արդյոք կան այդ օբյեկտիվ հիմքերի մասին վկայող ապացույցներ (տե՛ս, օրինակ, *Կրասնիկին ընդդեմ Չեխիայի Հանրապետության* գործով վճիռը, թիվ 51277/99, կետեր 80–83, փետրվարի 28, 2006թ, որտեղ Դատարանը գոհ չէր այն փաստից, որ ներպետական դատարանները իրականացրել էին վկաների վախի պատճառների քննություն մինչ նրանց անանունություն շնորհելը):

125. Նշելով, թե ինչպես է վկայի բացակայությունը բացասաբար ազդում պաշտպանության կողմի իրավունքների վրա՝ Դատարանը կշեշտեր, որ երբ վկան չի քննվել դատաքննության ցանկացած առաջնային փուլում, վկայի գրավոր ցուցմունքը դատավարության ժամանակ կենդանի վկայության փոխարեն թույլատրելը պետք է լինի որպես վերջին աղբյուրի միջոց: Մինչ վկան կազատվի վկայություն տալուց վախի հիմքով գործը քննող դատավորը պետք է համոզվի, որ բոլոր առկա այլընտրանքները, ինչպիսիք են վկայի անանունությունը և այլ հատուկ միջոցառումներ, անհարմար են կամ անարդյունավետ:

3. Միակ կամ որոշիչ կանոն

(ա) Ընդհանուր նկատառումներ

126. Դատարանը նշում է, որ սույն գործերն առնչվում են միայն բացակա վկաներին, որոնց գրավոր վկայությունները հրապարակվել են դատաքննության ժամանակ: Դատարանի խնդիրը չէ ին արտարակտ քննելը ընդհանուր իրավունքի՝ ասեկոսեների դեմ ուղղված կանոնը, ոչ էլ ընդհանուր ձևով քննելը՝ արդյոք Անգլիայի քրեական օրենքում այժմ գործող այդ կանոնի բացառությունները համատեղելի են Կոնվենցիայի հետ: Ինչպես Դատարանն է շեշտել (կետ 118), 6–րդ հոդվածը, որպես այդպիսին չի սահմանում, ապացույցի թույլատրելիության վերաբերյալ որևէ կանոն, որը հիմնականում ազգային օրենսդրության կարգավորման հարց է:

127. Դատարանը նաև նշում է, որ սույն գործերում մտահոգված չէ վկայությամբ, որը արվել է դատավարության ժամանակ վկաների կողմից, որոնց ինքնությունն անհայտ է ամբաստանյալին (անանուն վկայություն): Չնայած անանուն և բացակա վկաների կողմից բարձրացված խնդիրները նույնը չեն, երկու իրավիճակները սկզբունքորեն տարբեր չեն, քանի որ, ինչպես գտել է Գերագույն դատարանը, դրանցից յուրաքանչյուրը հանգեցնում է պաշտպանյալի համար հնարավոր վտանգի:

[Type text]



Հիմնական սկզբունքն այն է, որ պաշտպանյալը պետք է քրեական դատավարության ժամանակ ունենա իր դեմ ուղղված վկայությունը վիճարկելու արդյունավետ հնարավորություն: Այս սկզբունքը ոչ միայն պահանջում է, որ պաշտպանյալը պարզապես իմանա իրեն մեղադրողների ինքնությունը, որպեսզի կարողանա վիճարկել նրանց անաչառությունը և արժանահավատությունը, այլև պահանջում է, որ պաշտպանյալը կարողանա ստուգել նրանց վկայության ճշմարտացիությունը և վստահելիությունը, իր ներկայությամբ նրանց բանավոր քննելով վկայի՝ վկայություն տալու ժամանակ կամ էլ դատավարության հետագա այլ փուլերում:

128. Միակ և որոշիչ կանոնի սերմերը գտնվում են Անտերպերտինջերն ընդդեմ Ավստրիայի գործով վճռում (նոյեմբերի 24, 1986թ, կետ 33, շարք Ա, թիվ 110), որը նույնպես հիմնավորում է առաջարկում թեստի կիրառման համար. եթե ամբաստանյալի դատապարտումը միայն կամ հիմնականում հիմնված է վկայության վրա, որն արվել է վկայի կողմից, ում ամբաստանյալը չի կարող հարցաքննել դատավարության որևէ փուլում, նրա պաշտպանության իրավունքները անհարկի սահմանափակվում են: Ինչպես նշվել է Գերագույն դատարանի կողմից Դատարանի ավելի վաղ նախադեպային իրավունքում, որտեղ կանոնի վերաբերյալ ընդհանուր պատկերացում է տրվել բացակա կամ անանուն վկաների դեպքերում, 6-րդ հոդվածի 3 (դ) կետի արձանագրված խախտումը առնվազն մասամբ հիմնված է եղել այն փաստի վրա, որ հիմնավորում չի եղել համապատասխան վկային չկանչելու կամ ինքնությունը չբացահայտելու համար: Դորսոնի գործով վճռում, որը մեջբերված է վերևում, դատարանն առաջին անգամ որոշեց, որ նույնիսկ այն գործերում, որոնց դեպքում վկային չկանչելու հիմնավորում է եղել, դատապարտումը, որը բացառապես կամ որոշիչ աստիճանով հիմնված է այդ վկայի վկայության վրա, անարդար կլիներ:

(բ) Առարկություններ միակ կամ որոշիչ կանոնի վերաբերյալ

129. Ինչ վերաբերում է Հորնքեսլը և այլոց գործով Գերագույն դատարանի վճռին, Կառավարությունը վիճարկում է միակ կամ որոշիչ կանոնը կամ Պալատի կողմից դրա կիրառումը սույն գործերում չորս հիմնական հիմքերով:

Առաջինը, վիճարկում են, որ ընդհանուր իրավունքը ապացույցի վերաբերյալ՝ Կոնվենցիայի՝ ուժի մեջ մտնելուց շատ ավելի առաջ ստեղծված կանոններով, որոնք անօրինական են համարում ասեկոսեի ընդունումը, պաշտպանում էին արդար դատաքննության այն կողմը, որը նախատեսված է երաշխավորել 6-րդ հոդվածի 3 (դ) կետով առանց միակ կամ որոշիչ կանոնի կիրառման անհրաժեշտության: Հակառակ դրան քաղաքացիական իրավունքի երկրները չունենին ապացույցի վերաբերյալ այդպիսի կանոններ: Ուստի 6-րդ հոդվածի 3 (դ) կետը հիմնականում ազդում էր վարույթների վրա, որոնք տեղի էին ունենում մայրցամաքային համակարգերում,

[Type text]



որոնք էլ նախկինում թույլ էին տալիս, որ ամբաստանյալը դատապարտվի՝ վկայի կողմից արված վկայության հիմքով, որը վիճարկելու հնարավորություն ամբաստանյալը չի ունեցել:

Երկրորդ, ասում են, որ դրա կիրառումը առաջ է բերում գործնական խնդիրներ. Պալատը բավարար ճշգրտությամբ չի բացատրել, թե երբ է ապացույցը համարվում որոշիչ, որպեսզի գործը քննող դատավորը կարողանա միակ կամ որոշիչ կանոնը կիրառել գործնականում: Հավասարապես պատշաճորեն չեն քննվել այն գործնական խնդիրները, որոնք առաջ կգային ընդհանուր իրավունքի համակարգում այդ կանոնի կիրառման արդյունքում, ինչպես օրինակ Անգլիայի և Ուելսի ընդհանուր իրավունքի համակարգերում:

Երրորդ, ասում են, որ պատշաճորեն չի քննարկվել կանոնի հիմքում ընկած սկզբունքը, որն էլ հիմնված է այլ թյուր ենթադրության վրա, որ գործի համար մեծ կարևորություն ներկայացնող բոլոր գրավոր վկայությունները կամ անվստահելի են կամ էլ վկային խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայության դեպքում չեն կարող պատշաճորեն գնահատվել:

Եվ վերջապես, նշվում է, որ Պալատը կիրառել է կանոնը ավելորդ խստությամբ և, որ այն ամբողջությամբ չի վերլուծել Անգլիայում և Ուելսում առկա երաշխիքները, ինչպես նաև հաշվի չի առել ընդհանուր իրավունքի երկրների և Կոնվենցիայի անդամ մյուս պետությունների դատավարությունների միջև առկա տարբերությունները:

Դատարանը հերթականությամբ կանդորադառնա այս փաստարկներից յուրաքանչյուրին:

130. Ինչ վերաբերում է առաջին փաստարկին՝ Դատարանն ընդունում է, որ միակ կամ որոշիչ կանոնը միգուցե առաջացել է այնպիսի իրավական համակարգերի համատեքստում, որոնք թույլ են տալիս, որ ամբաստանյալը դատապարտվի վկայության հիմքով, որն արվել է վկայի կողմից, որի վկայությունը վիճարկելու հնարավորություն ամբաստանյալը չի ունեցել. իրավիճակ, որը չէր առաջանա, եթե կիրառվեր ընդհանուր իրավունքի՝ ասեկոսե ապացույցի դեմ ուղղված խիստ կանոնը: Սակայն Դատարանը նշում է, որ սույն գործերն առաջացել են հենց այն պատճառով, որ Անգլիայի և Ուելսի իրավական համակարգերը հրաժարվել են ընդհանուր իրավունքի՝ գրավոր վկայության դեմ ուղղված խիստ կանոնից: Կանոնի բացառություններ են ստեղծվել, հատկապես 1988 և 2003թթ կնքված ակտերում, որոնք թույլ էին տալիս Ալ-Քավայայի գործում Ս.Թ.-ի գրավոր վկայության և Թահերիի գործում Թ-ի գրավոր վկայությունների ընդունումը (տե՛ս վերը կետեր 41 և 44): Դատարանը ընդունում է, որ գրավոր վկայության դեմ ուղղված խիստ կանոնի մեղմացումը ուղեկցվել է օրենքով սահմանված երաշխիքներով, ուստի սույն գործում

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

գլխավոր հարցն այն է, թե արդյոք այս երաշխիքների կիրառումը բավական է դիմումատուների՝ 6-րդ հոդվածի 1-ին և 3(դ) կետերով սահմանված իրավունքները երաշխավորելու համար: Սրանից հետևում է, որ, չնայած Դատարանի համար կարևոր է հարգել իրավական համակարգերի և ընթացակարգերի էական տարբերությունները՝ այդ թվում քրեական դատավարություններում ապացույցների թույլատրելիության վերաբերյալ տարբեր մոտեցումները, ի վերջո այն պետք է կիրառի 6-րդ հոդվածի 1-ին և 3(դ) կետերով սահմանված քննման նույն չափանիշները՝ անկախ այն իրավական համակարգից, որից առաջացել է գործը:

131. Երկրորդ, ինչ վերաբերում է կանոնի ճշգրտության ենթադրյալ պակասին, դատարանը նշում է, որ «միակ» բառը ամբաստանյալի դեմ ուղղված միակ վկայության իմաստով (տես, օրինակ, Սաիդին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռը, 1993 թ. սեպտեմբերի 20, A no. 261-C), ըստ էության, դժվարություններ առաջ չի բերում: Գլխավոր քննադատությունը ուղղված է «որոշիչ» բառին: «Որոշիչ»-ը (կամ դետերմինանտ) այս համատեքստում նշանակում է ավելին, քան «ապացուցողական նշանակություն ունեցող»: Այն նաև նշանակում է ավելին քան, որ առանց տվյալ ապացույցի դատապարտման հնարավորությունները կնվազեին, իսկ արդարացմանը մեծանան. թեստ, որը, ինչպես Վերաքննիչ դատարանն է նշում Հորնքեսլը և այլոց գործում, կնշանակեր, որ իրականում բոլոր վկայություններն ընդունելի են (տե՛ս կետ 54): Փոխարենը «որոշիչ» բառը պետք է նեղ իմաստով հասկանալ որպես այնպիսի նշանակության կամ կարևորության ապացույց, որը հավանական է, որ որոշիչ լինի գործի արդյունքի համար: Այն դեպքում, երբ վկայի չստուգված վկայությանը օժանդակում է այլ հաստատող ապացույց, գնահատումն առ այն՝ արդյոք այն որոշիչ է, կախված կլինի օժանդակող վկայության ուժից. որքան ուժեղ է հաստատող ապացույցը, այնքան քիչ հավանական է, որ բացակա վկայի վկայությունը համարվի որոշիչ:

132. Նաև վիճարկվում է, որ միակ կամ որոշիչ կանոնը չի կարող կիրառվել առանց ընդհանուր իրավունքի համակարգում ավելորդ գործնական դժվարությունների: Հորնքեսլը և այլոց գործում Գերագույն դատարանը գտել է, որ որոշակի վկայություն որոշիչ չհամարելու պարտականությունը կատարելը բավականին դժվար է հմուտ դատավորի համար, բայց եթե կանոնը կիրառվեր երդվյալ աստենակալների մասնակցությամբ անցկացվող դատավարության համատեքստում, այն կիրառելու միակ գործնական ձևը կլիներ այն որպես թույլատրելիության կանոն կիրառելը. դատավորի համար դժվար խնդիր կլիներ ստիպված լինել անթույլատրելի համարել վկայի կողմից արված ցանկացած որոշիչ վկայություն. գործը քննող դատավորը պետք է որոշում կայացնեի չթույլատրելու ցանկացած ապացույց, որը կարող էր դառնալ

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

որոշիչ, ինչը դժվար կլիներ իրականացնել: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանին կամ Եվրոպական դատարանին կարծիք կար, որ հաճախ անհնար էր որոշել՝ արդյոք որոշակի գրավոր վկայությունը դատապարտման միակ և որոշիչ հիմքն էր այն դեպքում, երբ երդվյալ ատենակալների վճռի համար հիմնավորումներ չէին ներկայացվում:

133. Դատարանն ընդունում է, որ դատավորի համար կարող է դժվար լինել մինչ դատավարությունը որոշել՝ արդյոք վկայությունը որոշիչ կլիներ առանց հնարավորություն ունենալու ամբողջությամբ քննել և ծանր ու թեթև անել դատավարության ժամանակ ներկայացված բոլոր ապացույցները :

134. Սակայն այն բանից հետո, երբ մեղադրող կողմը եզրափակում է գործը, գործը քննող դատավորը կարող է գնահատել չստուգված վկայության նշանակալիությունը և կարևորությունը՝ համեմատելով այն մեղադրյալի դեմ մյուս ապացույցների հետ: Ընդհանուր իրավունքի համակարգերում դատավարության ավարտին հաճախ գործը քննող դատավորը պետք է հաշվի առնի՝ արդյոք բավականին փաստեր կան ամբաստանյալին դատապարտելու համար: Որպես այդ գործընթացի մի մաս նրանց խնդրում են գնահատել մեղադրող կողմի ներկայացրած ապացույցների ուժն ու արժանահավատությունը: Եվ իսկպես, Դատարանը նշում է, որ 2003 թ-ի ապրիլի 125-րդ կետը հստակ պահանջում է գործը քննող դատավորից կանգնեցնել գործը, եթե քննելով ամբաստանյալի դեմ ուղղված գործի կարևորությունը, դատավորը գտել է, որ գրավոր վկայությունն այնքան անհամոզիչ է, որ դատապարտումն անապահով կլիներ:

135. Դատարանը նաև վստահ չէ, որ վերաքննիչ դատարանը ընդհանուր իրավունքի համակարգում, որտեղ երդվյալ ատենակալները իրենց վճիռը չեն հիմնավորում, չի կարողանա որոշել՝ արդյոք չստուգված վկայությունը եղել է ամբաստանյալի դատապարտման միակ կամ որոշիչ վկայությունը: Վերաքննիչ դատարանի դատավորներից սովորաբար պահանջվում է ստուգել՝ արդյոք ապացույցը ոչ պատշաճ ձևով է ընդունվել դատավարության ժամանակ և, եթե այդպես է, արդյոք դատապարտումը դեռևս ապահով է: Այդպես անելով՝ նրանք պետք է քննեն, ինտեր ալիա, գործում վիճարկվող վկայության նշանակալիությունը և պաշտպանության կողմի իրավունքները վնասելու աստիճանը: Այսպիսով՝ վերաքննիչ դատարանն ապահովված է ամեն ինչով քննելու՝ արդյոք չստուգված վկայությունը կարող է համարվել ամբաստանյալի դեմ ուղղված միակ կամ որոշիչ վկայությունը և թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել:

136. Դատարանը գտնում է, որ իր առջև եղած համեմատական նյութերը հաստատում են այս եզրակացությունը ընդհանուր իրավունքի տարբեր համակարգերում կանոնի

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

կիրառման առնչությամբ (տե՛ս վերը՝ կետ 63-87 և հատկապես Շոտլանդիայի գերագույն քրեական դատարանի մոտեցումը):

137. Դատարանը նաև նշում է այս համատեքստում, որ *Ռ.-ն ընդդեմ Դեյվիսի* գործում (տե՛ս վերը՝ կետեր 49 և 50) Լորդերի պալատը միակ կամ որոշիչ կանոնի կիրառման ոչ մի ակնհայտ դժվարություն չի նկատել անանուն վկաների համատեքստում : Լորդ Բինգեմը նշել է, որ դատապարտումը, որը բացառապես կամ որոշիչ լինելու աստիճանով հիմնվել է անանուն վկաների գրավոր վկայության կամ ցուցմունքի վրա, արվել է դատավարության ժամանակ, որը չի կարող համարվել արդար, և որ «ավանդաբար այս տեսակետին է հանգել Անգլիայի ընդհանուր իրավունքը» (տե՛ս Դեյվիսի գործով վճռի 25-րդ կետը): Լորդերի պալատն այն եզրակացության է եկել, որ Դեյվիսի գործում անանուն վկայի վկայությունը ոչ միայն եղել է միակ կամ որոշիչ հիմքը, որի վրա հիմնված ամբաստանյալը կարող էր դատապարտվել, այլ նաև որ արդյունավետ խաչաձև հարցաքննության իրավունքն է խաթարվել: Դեյվիսի գործով որոշումը հանգեցրել է 2009թ-ի Կորոններների և արդարադատության մասին ակտում այն պահանջի ամրագրմանը, համաձայն որի որոշելիս՝ արդյոք անանուն վկայի վկայությունը թույլատրելի համարել, թե ոչ, դատավորը, ինտեր ալիա, պետք է հաշվի առնի՝ արդյոք վկայի տված ցուցմունքը կարող է լինել ամբաստանյալի դեմ ուղղված միակ կամ որոշիչ վկայությունը (տե՛ս վերը՝ կետ 46):

138. Այս առնչությամբ Դատարանը նաև նշում է, որ ամբաստանյալի լռությունն իր դեմ օգտագործելու համատեքստում Դատարանը կիրառել է կանոն, համաձայն որի լռելու իրավունքի հետ անհամատեղելի կլինեք բացառապես կամ հիմնականում հիմնել դատապարտումը ամբաստանյալի լռության կամ հարցերին պատասխանելուց կամ էլ վկայություն տալուց հրաժարվելու վրա (տե՛ս *Ջոն Մուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճիռը, 1996թ փետրվարի 8, կետ 47, վճիռների և որոշումների զեկույցներ 1996-I. *Քոնդրոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճիռը, թիվ 35718/97, կետ 56, ՄԻԵԴ 2000-V):

139. Դատարանը նմանապես չի կարող ընդունել երրորդ փաստարկն առ այն, որ միակ կամ որոշիչ կանոնը հիմնված է այն ենթադրության վրա, որ բոլոր գրավոր վկայությունները, որոնք խիստ կարևոր են գործի համար, անվստահելի են կամ չեն կարող պատշաճ ձևով գնահատվել, եթե չեն ստուգվել խաչաձև հարցաքննության միջոցով: Այն ավելի շատ հիմնված է այն սկզբունքի վրա, որ որքան մեծ է վկայության կարևորությունը, այնքան մեծ է ամբաստանյալի նկատմամբ անարդարության հավանականությունը թույլ տալիս, որ վկան մնա անանուն կամ չներկայանա դատավարությանը և այնքան ավելի մեծ պահանջ է զգացվում ներկայացնելու

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

երաշխիքներ երաշխավորելու, որ վկայությունն ակնհայտորեն վստահելի է կամ, որ դրա վստահելիությունը կարող է պատշաճ ձևով ստուգվել և գնահատվել:

140. Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների գործով վճռում, 1989թ նոյեմբերի 20, (Series A, no. 166), որտեղ ընդունվել է, որ դիմումատուի դատապարտումը որոշիչ լինելու աստիճանով հիմնվել է և՛ անանուն, և՛ բացակա վկաների վկայության վրա, դատարանը շեշտել է (վճռի 42-րդ կետում)։

«Ամբաստանյալին մեղադրող վկայությունը կամ այլ հայտարարություններ կարող են միտումնավոր անճշմարտացի կամ պարզապես սխալ լինել և պաշտպանության կողմը դժվար թե կարողանա դա ցույց տալ, եթե վերջինս չունի տեղեկություն, որով կարելի կլիներ ստուգել հեղինակի վստահելիությունը կամ կասկածի տակ դնել նրա արժանահավատությունը: Այսպիսի իրավիճակներում առկա վտանգներն ակնհայտ են»:

Դատարանը նաև գտել է, որ չնայած գործը քննող դատարանները զգուշություն են ցուցաբերել գնահատելիս վիճարկվող գրավոր վկայությունները, սա դժվար թե համարվեր ուղղակի գնման պատշաճ փոխարինում: Այսպիսով՝ այն եզրակացրել է, որ վկայության օգտագործումը ներառում է պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակումներ, որոնք անհամատեղելի են 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների հետ:

141. Հաջորդող՝ Դորսոնի գործում, մեջբերված վերևում, Դատարանը գտել է, որ գործում երկու վկաների անանունությունը պաշտպանության կողմի համար «դժվարություններ է ստեղծել», որոնք քրեական դատավարությունը չպետք է ներառի, բայց նաև նշել է, որ խախտում չի կարող արձանագրվել, եթե պաշտպանության կողմի վնասները բավարար կերպով հավասարակշռվել են հետագա վարույթների ժամանակ (վճռի 72-րդ կետը): Հետո այն գտել է, որ ի տարբերություն Կոստովսկու գործի, պաշտպանության կողմը կարողացել է վիճարկել անանուն վկաների վստահելիությունը (կետեր 73 և 75): Ավելին, իր այն հայտարարությունից հետո, որ դատապարտումը չպետք է բացառապես կամ որոշիչ լինելու աստիճանի հիմնվի անանուն վկաների վրա, Դատարանը ընդգծել է, որ «վկայությանը, որը ձեռք է բերվել վկաներից այնպիսի պայմաններում, որոնց դեպքում պաշտպանության կողմի իրավունքները չեն կարող պաշտպանվել այն աստիճանի, որը սովորաբար պահանջվում է Կոնվենցիայով, պետք է վերաբերվել մեծ խնամքով» (կետ 76):

142. Հարգելով Կառավարության վերջնական փաստարկը՝ Դատարանն այն կարծիքի է, որ միակ կամ որոշիչ կանոնը հիմնավորող երկու փաստարկները, որոնք բերվել են Դորսոնի գործով վճռում, մնում են վավեր: Նախ՝ Դատարանը պատճառ չի տեսնում հեռանալու Կոստովսկու գործով վճռի եզրակացությունից, համաձայն որի ամբաստանյալի դեմ ուղղված մեղադրական վկայությունը կարող է լինել «միտումնավոր անճշմարտացի կամ պարզապես սխալ»: Ավելին, երդման ներքո

[Type text]



չտրված վկայությունները, որոնք արվել են վկաների կողմից, որոնք չեն կարող հարցաքննվել, հաճախ նրանց անատարկելի կամ համոզիչ են թվում և, ինչպես դատավոր Սեդլին է նշել, որ «գայթակղիչ լինելու աստիճանի հեշտ» է եզրակացնել, որ ամբաստանյալը չի կարող դատապարտվել (տե՛ս վերը՝ կետ 115): Փորձը ցույց է տալիս, որ վկայության վստահելիությունը, այդ թվում վկայությունը, որը կարող է անատարկելի կամ համոզիչ թվալ, կարող է բոլորովին այլ կերպ երևա, երբ որ ենթարկվի մանրամասն քննման: Վտանգները, որոնք առկա են չստուգված ասեկոսե ապացույց ներկայացնելը թույլ տալու մեջ, շատ ավելի են մեծանում, եթե այդ ապացույցը ամբաստանյալի դեմ ներկայացված միակ կամ որոշիչ ապացույցն է: Ինչ վերաբերում է երկրորդ փաստարկին, ամբաստանյալը չպետք է դրվի այնպիսի իրավիճակում, որտեղ նա գրկվում է իրեն պաշտպանելու իրական հնարավորությունից՝ չկարողանալով վիճարկել իր դեմ հարուցված գործը: Դատաքննությունը պետք է երաշխավորի, որ ամբաստանյալի՝ 6-րդ հոդվածով ամրագրված իրավունքները անընդունելիորեն չսահմանափակվեն և որ նա կարողանա արդյունավետորեն մասնակցել դատավարությանը (տե՛ս Թ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, թիվ 24724/94, կետ 83, 1999թ դեկտեմբերի 16. Ստանֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, 1994թ փետրվարի 23, կետ 26, (Series A no. 282-A)): Դատարանի գնահատականն առ այն, թե արդյոք քրեական դատավարությունը արդար է եղել, չի կարող կախված լինել միայն այն բանից, թե արդյոք ամբաստանյալի դեմ ներկայացված վկայությունը պրիմա ֆացի թվում է վստահելի, եթե վկայությունն ընդունելուց հետո այն վիճարկելու միջոցներ չկան:

143. Այս իսկ պատճառներով դատարանը հետևողականորեն գնահատել է ամբաստանյալի՝ վկային քննելու հնարավորության բացակայության ազդեցությունը իր դատավարության ընդհանուր արդարության վրա: Այն միշտ անհրաժեշտ է համարել չստուգված վկայության կարևորության քննումը, որը նպատակ ունի որոշել՝ արդյոք ամբաստանյալի իրավունքները անընդունելիորեն սահմանափակվել են (տե՛ս, ինչպես նախորդ օրինակներում, Անտերպերտինժերի գործով վճիռը, մեջբերված վերևում, և Բրիկմոնսոն ընդդեմ Բելգիայի գործով վճիռը, հուլիսի 7, 1989թ (Series A no. 158 և, ավելի վերջերս, Կորնսը և Կարպենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով վճիռը, թիվ 17444/04, կետեր 54–57, հոկտեմբերի 21, 2010թ. Կական ընդդեմ Ալբանիայի գործով վճիռը, թիվ 44023/02, կետեր 112–116, դեկտեմբերի 8, 2009թ. Գույուրին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռը, թիվ 62236/00, կետեր 57–62, հունիսի 22, 2006թ. և Ա.Մ.–ի, Կրասնիկի, Լուկայի և Սաիդի գործով վճիռը, բոլորը մեջբերված վերևում):

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Հանձնաժողովը նույն մոտեցումն է դրսևորել իր նախադեպային իրավունքում (տե՛ս, Հանձնաժողովի ավելի վաղ գործերի թվում, X.-ն ընդդեմ Ավստրիայի, թիվ 4428/70, 1972թ-ի հունիսի 1-ի որոշում, հավաքածու 40, էջ 1. X.-ն ընդդեմ Բելգիայի, թիվ 8417/78, 1979թ-ի մայիսի 4-ի որոշում, Դ.Ռ. էջ 16, էջ 205. X.-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության, թիվ 8414/78, 1979թ-ի հուլիսի 4-ի որոշում, Դ.Ռ. 17, էջ 231. և Ս-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության, թիվ 8945/80, 1983թ-ի դեկտեմբերի 13-ի որոշում, Դ.Ռ. 39, էջ 43):

Մինևույն ժամանակ Դատարանը միշտ մեկնաբանել է 6-րդ հոդվածի 3-րդ կետը վարույթի արդարության ընդհանուր քննման համատեքստում (տե՛ս Սալդուսն ընդդեմ Թուրքիայի գործով վճիռը, թիվ 36391/02, կետ 50, նոյեմբերի 27, 2008թ):

144. Ավանդաբար քննելիս 6-րդ հոդվածի 3-րդ կետի հետ կապված բողոքները Դատարանը քննել է, թե արդյոք ընդհանուր դատավարությունն արդար է եղել՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով սահմանված երաշխիքների կիրառումը, պաշտպանության կողմին տրված դատավարական հնարավորությունները՝ ուղղված առաջացած վնասների հավասարակշռմանը, և ձևը, որով գործը քննող դատավորը ընդհանուր առմամբ վարել է գործի քննությունը (տե՛ս, օրինակ, Ջոն Մուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, մեջբերված վերևում):

145. Նաև գործերում, որոնք առնչվում էին պաշտպանության կողմից ապացույցը թաքցնելուն՝ ոստիկանական աղբյուրները պաշտպանելու նպատակով, Դատարանը ներպետական դատարաններին է թողել որոշելու այն հարցը, թե արդյոք պաշտպանության կողմի իրավունքները պետք է զոհաբերվեն հանուն հանրային շահի, և սահմանափակվել է ճշտելով՝ արդյոք դատական մարմինների համար նախատեսված ընթացակարգերը պատշաճ երաշխիքներով բավարար կերպով հավասարակշռում են պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակումները: Այն փաստը, որ որոշակի ապացույց հասանելի չէր դարձել պաշտպանության կողմի համար, չէր դիտվում, որ ինքնաբերաբար հանգեցնում է 6-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման (տե՛ս, օրինակ, Ռոուր և Դեյվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, թիվ 28901/95, ՄԻԵԴ 2000- II): Նմանապես Սալդուզի գործում, մեջբերված վերևում, կետ 50, Դատարանն ընդգծել է, որ 6-րդ հոդվածի 3 (գ) կետով սահմանված՝ իրավական օժանդակության իրավունքը 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված քրեական վարույթում արդար դատաքննության հասկացության տարրերից մեկն է:

146. Դատարանն այն կարծիքի է, որ միակ կամ որոշիչ կանոնը նույնպես պետք է այս կերպ կիրառվի: Միսալ կլինեի արդարության հարցերը քննելիս այս կանոնը կիրառել

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

ոչ ճկուն կերպով: Միսալ կլիներ նաև, եթե Դատարանն ամբողջությամբ անտեսեր գործին առնչվող իրավական համակարգի առանձնահատկությունները և, մասնավորապես, այդ համակարգում գործող ապացուցման կանոնները, նույնիսկ եթե դատավորի մեկնաբանություններն այլ բան են առաջարկում (տե՛ս, օրինակ, Լուկայի գործով վճիռը, մեջբերված վերևում, կետ 40): Այս կերպ վարվելը կվերածեր կանոնը մի բուր ու տձև գործիքի, որը դեմ է այն ավանդական ձևին, որով Դատարանը մոտենում է դատավարության ընդհանուր արդարության հարցին, որպեսզի արդյունավետ արդարադատություն իրականացնելիս հավասարակշռել ամբաստանյալի, տուժողի, վկաների և հանրային շահերը:

(c) Միակ կամ որոշիչ կանոնի վերաբերյալ ընդհանուր եզրակացություններ

147. Ուստի Դատարանը եզրակացնում է, որ այն դեպքում, երբ ասեկոսե ապացույցը հանդիսանում է ամբաստանյալի դեմ ներկայացված միակ կամ որոշիչ վկայությունը, դրա ընդունումը որպես վկայություն ինքնաբերաբար չի հանգեցնում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Մինևույն ժամանակ այն դեպքում, երբ դատապարտումը բացառապես կամ որոշիչ աստիճանի հիմնված է բացակա վկաների վկայության վրա, Դատարանը պետք է գործը լավագույնս մանրակրկիտ վերլուծության ենթարկի: Այսպիսի վկայության ընդունման հետ կապված վտանգի պատճառով այդ մանրակրկիտ վերլուծությունը ուժեղ դատավարական երաշխիքների համակցությամբ կդառնա հավասարակշռող կարևոր գործոն է, ինչպես Լորդ Մանսն է նշել Ռ.-ն ընդդեմ Դեյվիսի գործում(տես վերը, կետ 50): Յուրաքանչյուր գործում կարևորագույն հարցը բավարար կերպով հավասարակշռող գործոնների առկայությունն է, այդ թվում միջոցների, որոնք թույլ կտան այդ ապացույցի վստահելիության արդար և պատշաճ գնահատում: Սա թույլ կտար, որ դատապարտումը հիմնվի այսպիսի վկայության վրա միայն այն դեպքում, երբ այն բավարար կերպով վստահելի է՝ հաշվի առնելով դրա կարևորությունը գործում:

(«դ») 1988 և 2003թթ ակտերում առկա դատավարական երաշխիքները

148. Ուստի Դատարանը տեղում կքննի հավասարակշռող միջոցները Անգլիայի օրենսդրության մեջ՝ հաշվի առնելով ժամանակային գործոնը: Դատարանը գտնում է, որ ըստ 1988 և 2003թթ ակտերով նախատեսված պայմանների վկաների բացակայությունը պետք է արդարացվի և մտնի սահմանված կատեգորիաներից մեկի մեջ (տե՛ս 1988թ-ի ակտի 23-րդ և 2003թ-ի ակտի 116-րդ բաժինները, վերը՝ 41-րդ և 44-րդ կետերում): Ինչ պատճառով էլ վկան բացակայած լինի, նրա գրավոր վկայությունն անընդունելի է, եթե վկան ոչ միայն չի ներկայացել, այլև անանուն է:

Ավելին, այն դեպքում, երբ բացակայության պատճառը վախն է, համաձայն 2003թ-ի ակտի, գործը քննող դատավորը կարող է թույլ տալ, եթե նա գտնում է, որ վկայության

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

ընդունումը բխում է արդարադատության շահերից և նա պետք է որոշի՝ արդյոք կարող են հատուկ միջոցներ ձեռք առնվել թույլ տալու, որ վկան կենդանի վկայություն տա: Այսպիսի դեպքերում գործը քննող դատավորը պետք է հաշվի առնի դժվարությունները, որոնց առջև կարող է կանգնել ամբաստանյալը, երբ վիճարկի չներկայացած վկայի գրավոր վկայությունը:

149. 2003թ-ի ակտում նաև սահմանված է, որ ինչ պատճառով էլ որ լինի վկայի բացակայությունը, վկայությունը տվողի արժանահավատությանն ու հետևողականությանն առնչվող ապացույց կարող է ընդունվել նույնիսկ այն դեպքում, երբ այն անընդունելի կլիներ, երբ վկան վկայություն տված լինելու անձամբ: Գործը քննող դատավորն իր հատուկ հայեցողությամբ կարող է մերժել ընդունել ասեկոսե ապացույցը, եթե համոզվում է, որ դրա բացառումը ավելի տեղին է, քան դրա ընդունումը: Առանձնակի նշանակություն ունի 2003թ-ի ակտի պահանջը, համաձայն որի գործը քննող դատավորը պետք է դադարեցնի գործի քննությունը, եթե համոզված է, որ ամբաստանյալի դեմ հարուցված գործը «մասամբ կամ ամբողջությամբ» հիմնված է ասեկոսե ապացույցի վրա, որն ընդունվել է համաձայն 2003թ-ի ակտի, այն պայմանով, որ դատավորը նաև վստահ լինի, որ վիճարկվող վկայությունը այնքան անհամոզիչ է, որ գնահատելով դրա կարևորությունը ամբաստանյալի դեմ հարուցված գործում, դատապարտումը կլիներ անապահով:

150. Դատարանը նշում է նաև, որ բացի յուրաքանչյուր ակտում առկա երաշխիքներից, Ոստիկանության և քրեական ապացույցի մասին 1984թ-ի ակտի 78-րդ բաժինը նախատեսում է ընդհանուր հայեցողություն՝ բացառելու ապացույցը, եթե դրա ընդունումը դատավարության արդարության վրա կունենար այնպիսի վնասակար ազդեցություն, որը չպետք է թույլ տրվեր: Եվ վերջապես, ընդհանուր իրավունքը պահանջում է գործը քննող դատավորից երդվյալ ատենակալների տալ ապացուցման բեռի վերաբերյալ ավանդական ուղղորդումը և նրանց տեղեկացնել ասեկոսե ապացույցի վրա հիմնվելու վտանգների մասին:

151. Դատարանը գտնում է, որ երաշխիքները, որոնք ամրագրված են 1988 և 2003թթ-ի ակտերում, ինչպես նաև Ոստիկանության և քրեական ապացույցի մասին ակտի 78-րդ բաժնով և ընդհանուր իրավունք, սկզբունքորեն ուժեղ երաշխիքներ են՝ նախատեսված երաշխավորելու արդարությունը: Մնում է քննել, թե ինչպես են այս երաշխիքները կիրառվել սույն գործերում:

4. Քննվող գործերը

152. Անդրադառնալով քննվող գործերին՝ Դատարանը սկսում է՝ նշելով, որ Մեծ պալատի առջև լսման ընթացքում հարց էր առաջադրվել կողմերին, թե արդյոք

[Type text]



ընդունվել է, որ Ս.Թ.-ի ցուցմունքը միակ կամ որոշիչ վկայությունն է եղել պրն Ալ-Քավայայի առնչությամբ և Թ.-ի ցուցմունքը պրն Թահերիի առնչությամբ: Ի պատասխան այդ հարցի՝ Կառավարությունը հրաժարվել է Պալատի առջև ցուցաբերած իր նախկին մոտեցումից և նշել է, որ ո՛չ Ս.Թ.-ի, ո՛չ էլ Թ.-ի ցուցմունքները միակ կամ որոշիչ չեն (տե՛ս վերը՝ կետեր 104 և 105): Ուստի Դատարանն այս գործերից յուրաքանչյուրում կքննի երեք հարց. առաջին՝ արդյոք անհրաժեշտ էր ընդունել Ս.Թ.-ի և Թ.-ի գրավոր վկայությունները. երկրորդ՝ արդյոք նրանց չստուգված վկայությունները յուրաքանչյուր դիմումատուի դատապարտման միակ կամ որոշիչ հիմքն էր. երրորդ՝ արդյոք կային բավարար կերպով հավասարակշռող գործոններ, այդ թվում ուժեղ դատավարական երաշխիքներ երաշխավորելու, որ յուրաքանչյուր դատավարություն ընդհանուր առմամբ արդար լինի 6-րդ հոդվածի 1-ին և 3(դ) կետերի իմաստով:

(ա) Ալ-Քավայայի գործը

153. Դատարանը գտնում է, որ վիճելի չէ այն փաստը, որ Ս.Թ.-ի մահն անհրաժեշտ է դարձրել ընդունել նրա վկայությունը:

154. Չնայած Կառավարության այն կարծիքին, որ Ս.Թ.-ի գրավոր վկայությունը միակ կամ որոշիչ չէր, քանի որ դրան օժանդակող այլ ապացույց կար՝ Դատարանը նշում է, որ դատավորին, որն ընդունել է Ս.Թ.-ի վկայությունը, հնարավորություն էր տրվել գնահատել դրա կարևորությունը: Նա բավականին հստակ նշեց. «Չլինել վկայությունը, չի լինի նաև առաջին մեղադրանքը» (տե՛ս վերը՝ կետ 13): Դատավարական վարույթից հեռացված Դատարանը չէ, որ պետք է վիճարկի այս գնահատականը: Ուստի Դատարանը ստիպված է եզրակացնել, որ Ս.Թ.-ի վկայությունը որոշիչ էր:

155. Այնուամենայնիվ, ինչպես Դատարանն է նշել (տե՛ս վերը՝ կետ 147), գրավոր վկայության ընդունումը չի կարող համարվել որոշիչ դատավարության անարդարության առումով, այն պետք է համարել որպես շատ կարևոր գործոն, որը պետք է հավասարակշռել վերոհիշյալ դատավարական երաշխիքների և գործում առկա այլ հավասարակշռող գործոնների հետ:

156. Ակնհայտորեն արդարադատության շահերից էր բխում Ս.Թ.-ի վկայությունն ընդունելը, որը պատշաճ ձևով ձայնագրվել էր ոստիկանության կողմից: Վկայության վստահելիությունը հաստատվում է այն փաստով, որ Ս.Թ.-ն իր բողոքը ներկայացրել է երկու ընկերների՝ Բ.Ֆ.-ին և Ս.Հ.-ին տեղի ունեցածից անմիջապես հետո, և որ շատ չնչին անհամապատասխանություններ կային իր վկայության և իր ընկերների ասածի միջև, որոնք երկուսն էլ վկայություն են տվել դատարանում: Ամենակարևորն այն է, որ էական նմանություններ կային ենթադրյալ ոսնձգության

[Type text]



նկարագրությունների միջև, որոնք արվել էին Ս.Թ.-ի և մյուս բողոքարկող Վ. Ու.-ի կողմից: Վերջինիս հետ գաղտնի համագործակցության վերաբերյալ որևէ վկայություն չի եղել: Բժշկի կողմից իր հիվանդի նկատմամբ սեռական ոտնձգության դեպքում, որը տեղի է ունեցել բժշկի հետ առանձին խորհրդակցության ժամանակ, որտեղ ներկա են եղել միայն նա և հիվանդը, դժվար կլիներ գտնել ավելի ուժեղ հաստատող վկայություն, հատկապես այն դեպքում, երբ վկաներից յուրաքանչյուրին դատարան են կանչել ցուցմունք տալու նպատակով և նրանց վստահելիությունը ճշտվել է խաչաձև հարցաքննության միջոցով:

157. Ճիշտ է, որ դատավորի կողմից երդվյալ ատենակալներին ուղղորդելը անբավարար է ճանաչվել Վերաքննիչ դատարանի կողմից: Սակայն Վերաքննիչ դատարանը նաև նշել է, որ ուղղորդումից պետք է, որ երդվյալ ատենակալների համար պարզ դարձած լիներ, որ այն դեպքում, երբ դիմումատուն չի կարողանում խաչաձև հարցաքննել Ս.Թ.-ին, և երդվյալ ատենակալները չեն կարողանում տեսնել և լսել վկային, վերջինիս վկայությունը ավելի քիչ կարևորություն է ստանում (տե՛ս վերը՝ կետ 22): Հաշվի առնելով այս ուղղորդումը և մեղադրող կողմի ներկայացրած ապացույցը, որը հաստատում է Ս.Թ.-ի վկայությունը, Դատարանը գտնում է, որ երդվյալ ատենակալները կարողացել են արդար և պատշաճ ձևով գնահատել առաջին դիմումատուի դեմ Ս.Թ.-ի կողմից ներկայացված մեղադրանքների վստահելիությունը:

158. Այս հիմքով և, հաշվի առնելով դատավարության ընդհանուր արդարությունը, Դատարանը գտնում է, որ, չնայած դժվարություններին և վտանգներին, որոնք առաջացել են պաշտպանության կողմի համար՝ ընդունելով վկայությունը, բավարար հավասարակշռող գործոններ կան եզրակացնելու, որ Ս.Թ.-ի վկայության ընդունումը չի հանգեցրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և դրա հետ մեկտեղ 6-րդ հոդվածի 3-րդ կետի խախտմանը:

(b) Թահերիի գործը

159. Դատարանը գտնում է, որ պատշաճ քննություն է անցկացվել՝ որոշելու, թե արդյոք օբյեկտիվ հիմքեր են եղել Թ.-ի վախի համար: Գործը քննող դատավորը լսել է թե Թ.-ի և թե ոստիկանության սպայի վկայություններն այդ վախի վերաբերյալ: Դատավորը նաև համոզվել է, որ հատուկ միջոցառումները, ինչպիսիք են օրինակ Էկրանի ետևում վկայություն տալը, չէին մեղմացնի Թ.-ի վախը: Նույնիսկ չնայած այն փաստին, որ Թ.-ի ինքնությունը որպես մեղադրական վկայության հեղինակ հայտնի է դարձել հանրությանը՝ գործը քննող դատավորի եզրակացությունն առ այն, որ Թ.-ն իսկապես վախենում է բանավոր վկայություն տալ և պատրաստ չէ դա անել, նույնիսկ

[Type text]



եթե հատուկ միջոցառումներ ձեռք առնվեն վարույթի ընթացքում, բավարար հիմք է ծառայում Թ.-ի վկայությունն ընդունելու համար:

160. Դատարանը նշում է, որ երբ նրանց, ովքեր դանակով հարված հասցնելու պահին գտնվել էին դեպքի վայրում, սկզբնապես հարցաքննել են, ոչ ոք չի պնդել, որ տեսել է, թե ինչպես է դիմումատուն հարվածում Ս.-ին: Ս.-ը նույնպես չի տեսել, թե ով է իրեն դանակով հարվածել, չնայած սկզբնապես ենթադրել է, որ դա երկրորդ դիմումատուն է եղել: Թ.-ն դիմումատուին մեղադրող վկայությունն արել է դեպքից երկու օր հետո: Նա միակ վկան է, որ պնդել է, որ տեսել է, թե ինչպես է հարվածը հասցվել: Նրա չհաստատված վկայությունը եթե ոչ միակ, ապա առնվազն որոշիչ վկայությունն էր դիմումատուի դեմ հենց այդ պատճառով: Այն ակնհայտորեն ծանրակշիռ վկայություն էր, և առանց դրա դատապարտման հնարավորությունները զգալիորեն կփոքրանային: Չնայած վկայությունը կարող էր կապակցված և համոզիչ թվալ՝ այն չի կարող դասվել վկայության այն կատեգորիային, որը կարող է նկարագրվել որպես «ակնհայտորեն վստահելի», ինչպիսիք են, օրինակ, մահանալու պահին կատարված հայտարարությունները և Հորնքեսլը և այլոց գործով իրենց վճռում Վերաքննիչ և Գերագույն դատարանների կողմից բերված մյուս օրինակները (տե՛ս վերը՝ կետեր 53 և 60):

161. Այսպիսի չստուգված վկայությունը իր ծանրությամբ խախտում է հավասարակշռությունը և անհրաժեշտ են բավարար կերպով հակակշռող գործոններ փոխհատուցելու վկայության ընդունման արդյունքում պաշտպանության կողմի համար առաջացած դժվարությունները: Կռաավարությունը ապավինում է երկու հիմնական հավասարակշռող գործոնների վրա. փաստը, որ գործը քննող դատավորը եզրակացրել է, որ Թ.-ի վկայության ընդունումը չէր առաջացնի անարդարություն, քանի որ դիմումատուին տրված է եղել հնարավորություն վիճարկելու կամ հերքելու այդ վկայությունը՝ վկայությունը տալով կամ կանչելով այլ վկաների, ովքեր ներկա են եղել և որոնցից մեկը եղել է իր հորեղբայրը, և դատավորի նախազգուշացումը երդվյալ ատենակալներին առ այն, որ անհրաժեշտ է բացակա վկայի կողմից տրված վկայությանը զգուշությամբ մոտենալ:

162. Սակայն Դատարանը գտնում է, որ այս գործոններից ոչ մեկը, առանձին, թե ընդհանուր վերցրած, չէր կարող բավարար կերպով հակակշռել պաշտպանության առջև ծառայած դժվարությունները: Նույնիսկ եթե նա մեղադրանքը հերքող վկայություն տար, դիմումատուն, իհարկե, չէր կարողանա ստուգել Թ.-ի վկայության ճշմարտացիությունը և վստահելիությունը խաչաձև հարցաքննության միջոցով: Փաստն այն է, որ Թ.-ն միակ վկան էր, ով, ըստ երևույթին, պատրաստակամություն է

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

հայտնել կամ կարողացել է ասել, թե ինչ է տեսել: Պաշտպանության կողմը չի կարողացել կանչել որևէ վկայի՝ հակառակելու ասեկոսե ապացույցին:

163. Մյուս վկայությունը տրվել էր տուժող Ս.-ի կողմից, ով չգիտեր, թե ով է իրեն դանակով հարված հասցրել՝ չնայած նա ի սկզբանե ենթադրել է, որ դա դիմումատուն է եղել: Նրա վկայությունն անուղղակի է եղել իր բնույթով և հիմնականում չի վիճարկվել դիմումատուի կողմից: Նա վկայություն է տվել կովի և դանակի հարվածը հասցնելուց հետո դիմումատուի գործողությունների մասին (տե՛ս վերը՝ կետ 32): Չնայած այս վկայությունը հաստատել է Թ.-ի տված ցուցմունքի որոշ մանրամասներ, այն լավագույն դեպքում կարող էր միայն անուղղակիորեն օժանդակել Թ.-ի այն պնդմանը, որ դիմումատուն է հարվածել Ս.-ին:

164. Ճիշտ է, որ դատավորի ամփոփման մեջ երդվյալ ատենակալներին ուղղված ուղղորդումը եղել է ամբողջական և զգուշությամբ ձևակերպված՝ ուշադրությունը հրավիրելով վտանգների վրա, որոնք կարող են առաջանալ՝ չստուգված վկայության վրա ապավինելով: Այնուամենայնիվ դատարանը չի գտնում, որ այսպիսի նախազգուշացումը, որքան էլ, որ այն հստակ և համոզիչ ձևով արտահայտված լինի, կարող էր բավարար կերպով հավասարակշռող գործոն լինել, երբ մեղադրող կողմի միակ վկայի չստուգված վկայությունը դիմումատուի դեմ ներկայացված միակ ուղղակի ապացույցն է եղել:

165. Ուստի Դատարանը գտնում է, որ Թ.-ի վկայության որոշիչ բնույթը գործում որևէ ուժեղ հաստատող վկայության բացակայության դեպքում նշանակել է, որ երդվյալ ատենակալներն այս գործում չեն կարողացել կատարել Թ.-ի վկայության վստահելիության արդար և պատշաճ գնահատում: Քննելով դատավարության ընդհանուր արդարությունը՝ Դատարանը եզրակացնում է, որ բավարար կերպով հավասարակշռող գործոններ չեն եղել հակակշռելու այն դժվարություններին, որոնք առաջացել են պաշտպանող կողմի համար Թ.-ի վկայության ընդունման արդյունքում: Ուստի այն գտնում է, որ պրն. Թահերիի առնչությամբ տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին, ինչպես նաև 3 (դ) կետերի խախտում:

II. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառումը

166. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, և եթե գործին առնչվող Կոնվենցիայի անդամ պետության ազգային իրավունքը թույլ է տալիս անել միայն մասնակի փոխհատուցում, ապա Դատարանը պետք է անհրաժեշտության դեպքում արդար հատուցում ապահովի վնաս կրած կողմի համար»:

167. Քանի որ խախտում չի հայտնաբերվել առաջին դիմումատուի առնչությամբ, պետք է մտածել միայն երկրորդ դիմումատուի համար արդար հատուցման մասին:

[Type text]



Ա. Վնաս

168. Երկրորդ դիմումատուն նշել է, որ ի տարբերություն 6-րդ հոդվածով գործերի մեծամասնության տեղին կլինեի ասել, որ վիճարկվող հանցանքի համար իրեն դատապարտելը և այնուհետև ազատագրվման ձևով պատիժ նշանակելը տեղի չէին ունենա, եթե չլինեի այդ խախտումը: Հիմնվելով բանտում անցկացրած հավելյալ ժամանակի վրա և հղում կատարելով անօրինական կալանքի վերաբերյալ համեմատելի այլ ներպետական որոշումներին՝ երկրորդ դիմումատուն պահանջել է 65,000 ֆունտ ստերլինգի չափով փոխհատուցում (մոտավորապես 83,830 եվրո): Կառավարությունը պնդել է, որ պատճառահետևանքային կապ չկա ենթադրյալ խախտման և դիմումատուի դատապարտման միջև և, որ ներպետական նախադեպային իրավունքը սահմանափակ առնչություն ունի դրա հետ ու հայտնաբերված ցանկացած խախտում արդարացիորեն հատուցվել է: Կամ էլ ճիշտ կլինեի վճարել ավելի ցածր գումար, օրինակ 6,000 եվրո, որը տրվել է Վիսերն ընդդեմ Նիդերլանդների գործում, թիվ 26668/95, կետ 56, 2002թ-ի փետրվարի 14:

169. Պալատն այս գործով իր վճռում ընդունել է, որ ներպետական նախադեպային իրավունքը սահմանափակ առնչություն ունի ոչ գույքային վնասի հարցի հետ: Սակայն այն գտել է, որ դիմումատուի դեմ ծավալված քրեական վարույթը առնվազն Թ.-ի վկայության վրա հիմնված մեղադրանքի առումով Կոնվենցիային համապատասխան չի անցկացվել, և դրա արդյունքում դիմումատուն անխուսափելիորեն մեծ ճնշման է ենթարկվել: Դատարանը որոշում կայացրեց դիմումատուին պատճառված ոչ գույքային վնասի համար 6,000 եվրոյի չափով հատուցում նշանակել:

170. Մեծ պալատը Պալատի գնահատականից հեռանալու պատճառ չի տեսնում, ուստի տալիս է 6,000 եվրոյի չափով նույն փոխհատուցումը:

Բ. Ծախսեր

171. Պալատի առջև երկրորդ դիմումատուն ծախսերի համար ներկայացրել է 7,995 ֆունտ ստերլինգի չափով պահանջ, որը մոտավորապես կազմում է 9,079 եվրո: Սա բաղկացած էր 5,571.47 ֆունտ ստերլինգից (ներառյալ ԱԱՀ) պրն Թրոուլերի կողմից կատարված մոտավորապես 45 ժամվա աշխատանքի համար, որը ներառել է Պալատի լսմանը ներկայանալը և Ստրասբուրգ մեկնելու վրա ծախսած ժամանակը: Իրավախորհրդատուի կողմից արված ծախսերը կազմել են 2,423.56 ֆունտ ստերլինգ (ներառյալ ԱԱՀ), որը ծածկել է 1,734.16 ֆունտ ստերլինգի չափով ծախսեր մոտավորապես 15 ժամվա աշխատանքի համար և 689.40 ֆունտ ստերլինգ այլ ծախսերի համար:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

172. Մեծ պալատի առջև երկրորդ դիմումատուն ներկայացրել է 3,614.16 ֆունտ ստերլինգի չափով փոխհատուցման պահանջ իրավախորհրդատուի ծախսերի համար, որոնք կատարվել են Պալատի և Մեծ պալատի առջև անցկացված վարույթի համար: Նա նաև ներկայացրել է լրացուցիչ 3,643 ֆունտ ստերլինգի (ներառյալ ԱԱՀ) պահանջ տ-ն Թրոուլերի կողմից հետագայում կատարված 37 ժամյա աշխատանքի համար: Սա ներառում էր 17 ժամյա աշխատանք, որը կատարվել է Մեծ պալատի առջև լսմանը ներկայանալու և Ստրասբուրգ մեկնելու համար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Ի վերջո նա չէր կարողացել մասնակցել լսմանը:

173. Կառավարությունը գտել է, որ ներկայացված ժամերը չափազանցված են:

174. Դատարանը գտել է, որ ներկայացված գումարը չափազանցված չէ գործի բարդության առումով: Ուստի բացառությամբ 17 ժամի, որը Մեծ պալատի առջև նախատեսված լսմանը մեկնելու և մասնակցելու համար էր (ինչը փաստացիորեն տեղի չէր ունեցել), երկրորդ դիմումատուի ընդհանուր և դատական ծախսերը պետք է լիովին փոխհատուցվեն: Ուստի Դատարանը որոշում կայացրեց վճարելու 13,150 եվրո գումար հատուցում (ներառյալ ԱԱՀ), որը տրման օրը կվերածվի ֆունտ ստերլինգի, իսկ ավելի քիչ, քան 1,150 եվրո արդեն իսկ ստացվել է ԵԽ-ի կողմից որպես իրավաբանական օգնություն:

C. Եկամտային տոկոսադրույքը

175. Դատարանը գտնում է, որ փոխհատուցումը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի վարկավորման նվազագույն չափի վրա, որին էլ կավելանան 3 տոկոս միավորներ:

Այս իսկ պատճառներով Դատարանը

1. 15 ձայն ընդդեմ երկուսի գտնում է, որ պրն Ալ-Քավայայի նկատմամբ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին, ինչպես նաև 3 (դ) կետերի խախտում.

2. միաձայն գտնում է, որ պրն Թահերիի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին, ինչպես նաև 3 (դ) կետերի խախտում.

3. միաձայն գտնում է,

(a) որ պատասխանող երկիրը պետք է երեք ամսվա ընթացքում երկրորդ դիմումատուին՝ պրն Թահերիին՝ վճարի հետևյալ գումարները՝ վերածված ֆունտ ստերլինգի վճարման օրվա դրությամբ առկա փոխարժեքի չափով.

(i) 6000 եվրո (վեց հազար եվրո), գումարած ցանկացած հարկ, որ կարող է գանձվել ոչ գույքային վնասի առումով.

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

(ii) 12,000 եվրո (տասներկու հազար եվրո), գումարած ցանկացած հարկ, որ կարող է գանձվել երկրորդ դիմումատուից ընդհանուր և դատական ծախսերի առումով.

(b) որ վերոհիշյալ երեքամսյա ժամկետի ավարտից հետո մինչ հատուցումը հաշված ժամանակահատվածի համար տոկոսները կհաշվարկվեն եվրոպական կենտրոնական բանկում վարկի տրման գործող տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոս միավոր.

4. միաձայն մերժում է դիմումատուի՝ արդար փոխհատուցման մյուս պահանջը:

Որոշումը կազմվել է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակվել է դռնբաց լսման ժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, Ստրասբուրգում, 2011թ-ի դեկտեմբերի 25-ին:

Մայքլ Օ'Բոյլ
Մատենավարի տեղակալ

Ֆրանսուազ Տուլկենս
Նախագահ

Համաձայն Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնների 74-րդ կանոնի 2-րդ կետի՝ հետևյալ հատուկ կարծիքները կցվել են այս վճռին.

(a) Դատավոր Բրատզայի՝ վճռի հետ համաձայնող կարծիքը.

(b) Դատավորներ Կարակասի և Սայոյի մասամբ կողմ և մասամբ դեմ կարծիքները:

Ֆ.Թ.

Մ.Օ.Բ.

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Դատավոր Բրատգայի՝ վճռին կողմ կարծիքը

1. Ռ.-ն ընդդեմ Հորնքեյլի և այլոց գործով իր վճռում, որի հետ Գերագույն դատարանի մյուս անդամները համամիտ են եղել, Լորդ Ֆիլիպսը հրաժարվել է կիրառել այս Դատարանի «միակ կամ որոշիչ թեստը»՝ նախապատվությունը տալով 2003թ-ի քրեական արդարադատության ակտի դրույթներին: Ըստ նրա այդ դրույթները հավասարակշռություն են ստեղծում մի կողմից դատավարությունն արդար անցկացնելու պարտադիր պայմանի, մյուս կողմից՝ մասնավորապես տուժողների ու ընդհանրապես հասարակության ընդհանուր շահերի միջև, համաձայն որոնց հանցագործը չպետք է ազատվի դատապարտումից, երբ վկան, որը մեղադրական բնույթի գրավոր վկայություն է տվել, որը կարող է համարվել վստահելի, մահացել է կամ չի կարողացել ներկայանալ բանավոր վկայություն տալու ինչ-ինչ այլ պատճառներով: Չնայած Լորդ Ֆիլիպսը նշել է, որ այս տեսակետին հանգելիս ամենայն ուշադրությամբ ուսումնասիրել է Դատարանի նախադեպերը, նա իր խոսքն ավարտել է՝ հույս հայտնելով, որ «Ստրասբուրգի դատարանը կարող է նաև պատշաճ ձևով հաշվի առնել պատճառները, որոնք ինձ ստիպել են չկիրառել միակ կամ որոշիչ թեստը այս գործում» (Հորնքեյլի գործով վճիռը, կետ 108):
2. Իմ կարծիքով սույն գործը ազգային դատարանների և Եվրոպական դատարանի միջև Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ դատական երկխոսության լավ օրինակ է, որին հղում էր կատարել Լորդ Ֆիլիպսը: Հորնքեյլի գործով որոշումը Գերագույն դատարանը կայացրել է այն բանից հետո, երբ հրապարակվել է սույն գործով Պալատի վճիռը, որին ես էլ եմ մասնակցել, և Մեծ պալատը թույլատրեց պատասխանող Կառավարության միջնորդությունը գործի քննությունը Մեծ պալատում թույլատրելու համար մասնակիորեն նաև այն պատճառով, որպեսզի հնարավոր դառնար ուսումնասիրել այդ վճռին ուղղված քննադատությունները
3. Ինչպես Միացյալ Թագավորության դեմ գործում ազգային դատավորը, ես էլ պետք է հետևեի նորից Մեծ պալատում նստելու և քվեարկելու՝ Կոնվենցիայով սահմանված անհարմար պարտականությանը: Մեծ պալատի վճիռը, որի հետ ես համամիտ եմ, ոչ միայն հաշվի է առնում միակ կամ որոշիչ թեստի և Պալատի կողմից դրա կիրառման վերաբերյալ գերագույն դատարանի դիտարկումները, այլև վերաքննում է 2003թ-ի ակտի (և իր իրավանախորդ՝ 1998թ-ի քրեական արդարադատության ակտի) երաշխիքները, որոնք նախատեսված են երաշխավորելու քրեական դատավարության արդարությունը, երբ ասեկոսե ապացույց է ընդունվել: Չնայած, ինչպես

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

ակնհայտ է վճռից, Դատարանը չի կարողացել ընդունել թեստի վերաբերյալ բոլոր քննադատությունները, այն անդրադարձել է Գերագույն դատարանի կողմից կենտրոնական ճանաչված խնդիրներից մեկին, մասնավորապես թեստի կամ կանոնի կիրառման անճկունությանը, ինչը արտացոլվել է Լուկան ընդդեմ Բուալիայի գործով Պալատի վճռում, համաձայն որի դատապարտումը, որը բացառապես կամ որոշիչ լինելու աստիճանի հիմնված է բացակա վկայի վկայության վրա, համարվում է անհամատեղելի 6-րդ հոդվածում առկա արդարության պահանջների հետ՝ անկախ ազգային համակարգում գործող ցանկացած հավասարակշռող դատավարական երաշխիքներից: Ես համամիտ եմ մեծամասնության այն կարծիքի հետ, որ կանոնը ոչ ճկուն ձևով կիրառելը, անտեսելով գործին առնչվող որոշակի իրավական համակարգերի առանձնահատկությունները, դեմ կլինեք այն ավանդական ձևին, որով Դատարանը այլ համատեքստերում մոտեցել է քրեական դատավարության ընդհանուր արդարության հարցին: Չնայած, ինչպես Դատարանն է գտել գնահատելիս դատավարության արդարությունը, այն փաստը, որ դատապարտումը բացառապես կամ որոշիչ լինելու աստիճանի հիմնված է բացակա վկայի գրավոր վկայության վրա, շատ կարևոր գործոն է, որը պետք է ծանր ու թեթև արվի, բայց, որը նաև պահանջում է ուժեղ հավասարակշռող գործոններ, այդ թվում՝ արդյունավետ դատավարական երաշխիքների գոյությունը. այն չպետք է ինքնաբերաբար հանգեցնի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման:

4. Վերաքննելով երկու գործերը այս սկզբունքների լույսի ներքո՝ ես համաձայն եմ մեծամասնության հետ, որ, հակառակ Պալատում հայտնած իմ առաջին կարծիքի, 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել Ալ-Քավայայի գործում, իսկ Թահերիի գործում տեղի է ունեցել:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Դատավորներ Մայոյի և Կարակասի մասամբ կողմ և մասամբ դեմ միացյալ կարծիքը

Միացյալ Թագավորության Գերագույն դատարանը (*Ռ. -ն ընդդեմ Հորնքեյլի և այլոց* (2009) ՄԹԳԴ 14) հրավիրել է մեզ պարզաբանելու բացառող կանոնի ետևում առկա սկզբունքները գործերում, որտեղ ասեկոսե վկայությունը միակ կամ որոշիչ վկայությունն է: Այսպիսի խնդրանքները, որոնք մեր նախադեպային իրավունքում իրական մտահոգություններ և անհամապատասխանություններ են արտացոլում, պատշաճ քննման են արժանի՝ թույլ տալու, որ բռնա ֆիդե երկխոսություն տեղի ունենա¹:

Ըստ երևույթին հարցը, որը պետք է պարզաբանվի, հետևյալն է: Երբ դատապարտումը բացառապես կամ որոշիչ լինելու աստիճանի հիմնված է դեպոնացված ցուցմունքի վրա, որն արվել է մարդու կողմից, ում քննելու հնարավորություն ամբաստանյալը չի ունեցել թե՛ նախաքննության ընթացքում և թե՛ դատավարության ժամանակ, ընդհանուր առմամբ համարվում է, որ պաշտպանող կողմի իրավունքները սահմանափակվել են միա աստիճանի, որն անհամատեղելի է 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների հետ (այսպես կոչված «միակ կամ որոշիչ կանոն»): Հարցն այն է, թե արդյոք այդ կանոնը պետք է համարվի բացարձակ կանոն, որի խախտումը ինքնաբերաբար հանգեցնում է այն եզրակացման, որ դատավարությունը արդար չի եղել և ընթացել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ (տե՛ս վճռի 119-րդ կետը), բայց շատ ավելի կարևոր հարց կա, մասնավորապես հարաբերությունը ամբաստանյալի հիմնարար

¹ Մենք համաձայն ենք Գերագույն դատարանի հետ, որ միգուցե անբավարար ուղղորդում է տրվել «որոշիչ վկայության» հասկացության առնչությամբ: Այս թերությունը մասամբ այս Դատարանի պրակտիկայում ցուցաբերած հատուկ մոտեցման արդյունքն է, որի նպատակն է հարգել ազգային օրենսդիր և դատական ինքնիշխանությունը, մասամբ էլ այն ենթադրության շնորհիվ, որ այսպիսի սահմանումները լավագույնս զարգանում են ազգային իրավական համակարգի համատեքստում: Այս մոտեցումը համապատասխանում է լրացման սկզբունքին:

Խնդրանքին պատասխանելու նպատակով սույն վճիռը տալիս է սահմանում:

Մեր կարծիքով «որոշիչ» վկայությունը խելամտորեն պետք է հասկացվի որպես վկայություն, առանց որի մեղադրող կողմը չէր կարողանա գործ հարուցել: Ավելի բարձր չափանիշը կարող է ասեկոսե ապացույցի բացարձակ արգելքի վերածվել: Ավելի ցածր չափանիշը հանգեցնում է չարաշահման: Ավելին, այն դեպքում, երբ վկայությունն այնպիսին է, որ առանց դրա չէր կարող լինել մեղադրանք, առավել ևս դատապարտում, վկային խաչաձև հարցաքննության պատշաճ հնարավորություն չտրամադրելը սահմանափակումների մեջ է դնում պաշտպանող կողմին ավելի մեծ չափով, քան այն գործերում, որտեղ այլ ապացույց անկախ ձևով օժանդակում է դատապարտմանը: Միակ կամ որոշիչ թեստն այստեղ գործում է որպես 6-րդ հոդվածի 3(դ) կետի նեցուկ՝ երաշխավորելու, որ բացառությունը դեմ չգնա սկզբունքին և դրա արդյունքում առաջացած ցանկացած դատապարտումը ամբողջությամբ կամ բացառապես չհիմնվի ասեկոսեի վրա:

[Type text]

իրավունքների և հասարակության՝ դատավարությունից հետո պատիժ նշանակելու լեգիտիմ շահի միջև (Արդարությունը նաև նշանակում է, որ անմեղը չպետք է պատժվի): Իրականում հարցն այն է, թե ինչ աստիճանի է արդար դատաքննության իրավունքը, որը ինստիտուցիոնալ մտահոգության առարկա է և ամբաստանյալի ու արդարադատության իրականացման հակադիր շահերի միջև արդար հավասարակշռման հարց, կարող կլանել կամ ոտնահարել որոշակի անհատական իրավունքներ, որոնք Կոնվենցիայում սահմանված են բացարձակ և կատեգորիալ տերմիններով:

Սույն գործում սկզբունքները պարզաբանելու համար՝ անհրաժեշտ է սկսել պաշտպանության կողմի՝ 6-րդ հոդվածի 1-ին և 3(դ) կետերով ամրագրված իրավունքների պաշտպանությունից:

Պետք է շեշտվի, որ 6-րդ հոդվածի 1-ին և 3(դ) կետերը գոյություն ունեն ամբաստանյալի և երկրի միջև առկա անբակտելի ուժային անհավասարակշռության համատեքստում: 6-րդ հոդվածի շարժիչ ուժն այն նախադրյալն է, որ արդարադատության շահերը պատշաճ ձևով չեն երաշխավորի ամբաստանյալին անարդար դատավարության և անհարկի դատապարտման վտանգներից: Քանի որ հանցագործին առանձնացնելիս և պատժելիս մեղադրանքի կողմի ուժը ենթակա է չարաշահման, ինչպես նաև բյուրոկրատիայի ճնշման, չպետք է անհարկի խանգարել պաշտպանող կողմի՝ Պետության մեղադրանքները վիճարկելուն: Երբեմն ասում են, որ արդարադատություն իրականացնելիս պաշտպանության կողմի իրավունքները պետք է «հավասարակշռվեն» հանրային շահի և մասնավորապես տուժողների և վկաների՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների հետ: Բայց մինչ այս նկատառումները, արդարադատություն իրականացնելիս պաշտպանության կողմի իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ հակառակ կողմի վկաներին հարցաքննելու իրավունքի պաշտպանությունը, արդեն իսկ ամրագրված է որպես հիմնարար նշանակություն ունեցող արդար դատավարության համար: Կոնվենցիայի կողմից 3-րդ կետի իրավունքներն առանձնացնելը նշանակում էր, որ պաշտպանության կողմի այս հիմնարար իրավունքները անհրաժեշտ էին հակակշռելու համար մեղադրանքի կողմի գերիշխող ուժին՝ արդարության շահերից ելնելով: Հավասարակշռելու համար այս իրավունքները այս անգամ էլ արդարադատության իրականացման շահերի հետ, ինչպես որ Կառավարությունն էր ձգտում անել Ալ-Քավայայի և Թահերիի գործերում, անհրաժեշտ է մեղադրանքի կողմին և արդարադատության իրականացման

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

շահերին (մասնավորապես պատժելուն) տալ ակնհայտ առավելություն: Այս Դատարանը երբեք չի գտել, որ «6-րդ հոդվածի 3(դ) կետը պարզապես լուսաբանում է հարցերը, որոնք պետք է հաշվի առնել որոշելիս՝ արդյոք արդար դատավարություն է անցկացվել, թե ոչ», ինչպես որ Ուոլեր Լ.Ջ.-ն է պնդել վերանայելիս Ռ.-ն ընդդեմ Սելիկի գործում Ստրասբուրգի նախադեպային իրավունքը (2005), մեջբերված Հորնքեյլի գործում, կետ 79²:

Վճռում (կետ 143) սահմանված է հետևյալ կերպ. «Միննույն ժամանակ, սակայն, Դատարանը միշտ մեկնաբանել է 6-րդ հոդվածի 3-րդ կետը վարույթի արդարության ընդհանուր քննման համատեքստում (տե՛ս Սալդուզն ընդդեմ Թուրքիայի գործով վճիռը, թիվ 36391/02, կետ 50, 2008թ նոյեմբերի 27)» (ընդգծումն ավելացրած է): «Ընդհանուր քննում» տերմինը նոր է 6-րդ հոդվածի համատեքստում: Ճիշտ է, որ Դատարանը հետևողականորեն գնահատել է ազդեցությունը, որ պաշտպանության կողմի՝ վկային հարցաքննելու անկարողությունն ունենում է իր դատավարության ընդհանուր արդարության վրա: Իրականում Դատարանը ճանաչել է, որ նույնիսկ այն դեպքում, երբ պաշտպանության իրավունքի որևէ տարր սահմանափակվել է, սա կարելի է հակակշռել և վերականգնել դատավարության արդարությունը: Դատավարության արդարությունը պարզելու համար ամբողջական մոտեցումը կիրառելիս (այժմ ներկայացված որպես «ընդհանուր քննում»)՝ այս Դատարանը երբեք չի հայտարարել, որ արդարության կարելի է դեռևս հասնել, եթե հիմնարար իրավունքներից մեկը զրկվել է իր բուն էությունից: Ինչ վերաբերում է վկաներին և նրանց հարազատներին խաչաձև հարցաքննելու իրավունքին, բայց զենքերի հավասարության ավելի լայն սկզբունքով՝ Դատարանը պարբերաբար և հետևողականորեն ակնհայտ սահման է գծել միակ կամ որոշիչ կանոնի ձևով, որը նա երբեք չի խախտել: Այսօր պաշտպանության իրավունքի այս վերջին սահմանը խախտվում է հանուն արդարության ընդհանուր քննության:

Մեր նախադեպային իրավունքի լույսի ներքո անհերքելի է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իրավունքները ենթակա են մեկնաբանման արդար դատաքննության համատեքստում: Այդ առնչությամբ հղում է կատարվել Սալդուզի գործին (տե՛ս վճռի 143-րդ կետը): Բայց Սալդուզի գործով եզրակացություններում նշանակալի տարբերություններ կան դրան նախորդող մի շարք գործերի համեմատեն: «Ընդհանուր քննում» տերմինը ակնհայտորեն բացակա է: Դատարանը գտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(գ), ինչպես նաև

² Տղավո Պղեպատյանը նշում է, որ այնտեղ 1-ին և 3-րդ կետերը քննվել են առանձին: [Type text]



1-ին³ կետերի խախտում: Բհարկե, տերմինաբանությունը ինքնին առանձնապես նշանակալի չէ, բայց տերմինաբանության փոփոխությունը բավականին ուղղորդող է:

Քննվող հարաբերության բնույթի առումով Սալդուզի գործում սույն գործին առնչվում է (և հաշվի առնելով հոդված 6-ի 3 գ ու դ կետերով նախատեսված իրավունքների նմանությունը՝ մուտատիս մուտանդիս կիրառելի է) հետևյալը. Դատապաշտպան ունենալու իրավունքի մեկնաբանության մեջ 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա հիմնվելը թելադրված է վտանգված հատուկ իրավունքի ընդարձակ մեկնաբանման անհրաժեշտությամբ: Կոնվենցիան շնորհում է անձի պաշտպանության համար իրավական օժանդակության իրավունք («ինքն իրեն պաշտպանելու» իրավունք): Այն չի նշում, թե դատավարության որ փուլում պետք է իրավունքը շնորհվի: Կարող էր վիճարկվել, որ այն սահմանափակված է դատաքննության փուլով: Սակայն Դատարանը չի ընդունել այսպիսի նեղ մոտեցումը և մեկնաբանել է դատապաշտպանի իրավունքը արդար դատավարության ելքի տեսանկյունից՝ ընդլայնելով դրա շրջանակները: Ո՛չ Սալդուզի, ո՛չ էլ որևէ այլ գործում Դատարանը չի վիճարկել, որ արդար դատաքննության իրավունքը կլանում է 6-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված հատուկ իրավունքները:

Անհերքելի է, որ մեր դատական պրակտիկայում կան մի շարք գործեր, որոնցում 6-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված իրավունքները, այդ թվում՝ վկաներին հարցաքննելու իրավունքը, մեկնաբանվել են սահմանափակ ձևով, և որտեղ այնուամենայնիվ գտել են, որ արդար դատաքննության պահանջները բավարարված են: 6-րդ հոդվածի 1-ին կետը միշտ օգտագործվում էր որպես պահեստային դիրքորոշում. սահմանափակումը ճակատագրական չի համարվել այն դատավարության համար, որտեղ այն որոշ չափով հակակշռվել է, առնվազն տեսականորեն: Գտել են, որ սահմանափակումները թելադրվել են արդյունավետ նախաքննության և դատաքննության կարիքներով (արդարադատության իրականացման կարիքներով) կամ էլ այլոց՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների հետ կոնֆլիկտներով (օրինակ այն դեպքում, երբ վկայի կյանքի իրավունքը պետք է պաշտպանվեր): Բոլոր այս

³ Որոշ համաձայնող կարծիքներ օգտագործում են «6-րդ հոդվածի 3(գ), ինչպես նաև 1-ին կետեր» արտահայտությունը:

Մյուս չափանշային բանաձևը, որն օգտագործվում է հետևյալն է. «Քանի որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները պետք է դիտվեն որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի հատուկ կողմեր, Դատարանը միասին կքննի 6-րդ հոդվածի 1-ին և 3(դ) կետերով բողոքները (տե՛ս Գոսսան ընդդեմ Լեհաստանի գործով վճիռը, թիվ 47986/99, կետ 51, 2007թ հունվարի 9)»:

[Type text]



դեպքերում հավելյալ երաշխիքներ էին պահանջվում և զենքերի հավասարության իմաստով խաչաձև հարցաքննության իրավունքը միշտ համարվում էր պահպանված (ինչպես «հատուկ դատապաշտպանի» դեպքում կամ էլ երբ խոցելի վկաների պաշտպանության համար առերեսման հատուկ միջոցներ էին կիրառվում):

Այս Դատարանի նախադեպային իրավունքը օժանդակում է չորս առաջարկություններին, որոնք վերաբերում էին պաշտպանության կողմի իրավունքներին արդար դատաքննության համատեքստում: Նախ՝ այս իրավունքները հիմնված են զենքերի հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքների վրա, որոնցից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է, որ մեղադրանքի կողմին ավելի շատ առավելություն չտրվի, քան պաշտպանության կողմին, և որ քրեական գործով ամբաստանյալը կարողանա ստուգել իր դատապարտման հիմքում ընկած վկայությունը: Երկրորդ, չնայած այս իրավունքների առնչությամբ որոշակի սահմանափակում թույլատրվում է, բայց այն պետք է արդարացվի և բավարար կերպով հակակշռվի դատավարական երաշխիքներով: Երրորդ՝ պաշտպանության կողմին արտոնություններից զրկելու աստիճանը գործոն է որոշելու համար, թե արդյոք դատավարությունն ընդհանուր առմամբ արդար է ընթացել: Եվ վերջապես այն դեպքում, երբ վկայի հայտարարությունները, որոնց դատավարությունից առաջ կամ դրա ընթացքում քննելու հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել, որոշիչ կերպով ընկած են դատապարտման հիմքում. այս դեպքում վնասը այն աստիճանի է, որն ինքնին կազմում է 6-րդ հոդվածի խախտում, որը ոչ մի դատավարական երաշխիք չի կարող արդյունավետ կերպով հակակշռել: Չորրորդ առաջարկությունն է հայտնի դարձել որպես միակ կամ որոշիչ կանոն: Բայց ինչպես առաջարկում ենք ստորև՝ միգուցե ավելի խելամիտ է հասկանալ երկրորդ, երրորդ և չորրորդ առաջարկությունները միասին որպես ճանապարհ հարթողներ դեպի ասեկոսեի արգելման նեղ բացառություն: Եվս մեկ անգամ նշենք, որ պետությունները պետք է որոշեն , թե ինչ տեսակի վկայությունն է ընդունելի, և Դատարանը երբեք համընդհանուր արգելք չի դրել այդ կապակցությամբ: Բայց նախադեպային իրավունքի լույսի ներքո ակնհայտ է, որ ասեկոսեն մնում է ապացույցի խնդրահարույց աղբյուր, որը պահանջում է հատուկ զգուշություն, ասեկոսե վկայության վստահելիությունը ստուգելու անկարողության պատճառով: Դատարանը նշել է. «Այսպիսի իրավիճակում առկա վտանգներն ակնհայտ են» (տե՛ս Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

գործով վճիռը, 1989թ նոյեմբերի 20, կետ 42 (U.erieU. A, no. 166)): Չնայած Դատարանը կոչ է անում «ծայրահեղ» զգուշություն ցուցաբերել չստուգված վկայության նկատմամբ, իրականությունն այն է, որ վկայությունը կամ օգտագործվում է կամ ոչ⁴:

Կոնվենցիան չի թվարկում պաշտպանության կողմի իրավունքները սահմանափակելու հիմքերը: Ավելի շուտ դա հաճախ հասկացվում է որպես իրավունքների առանձնացում արդար դատաքննության երաշխավորման համատեքստում պաշտպանության համար: Այն դեպքում, երբ գործնական դժվարություններ են ի հայտ գալիս, միջոցները, որոնք ձեռք են առնվում դրանք հաղթահարելու համար, պետք է գնահատվեն՝ որոշելով, թե արդյոք իրավունքները պատշաճ կերպով պաշտպանվել են և ոչ թե որոշելով, թե արդյոք իրավունքներին ավելի մեծ կարևորություն է տրվել՝ այլ օրենսդիր շահերից ելնելով: Չպետք է թույլ տալ, որ մեղադրանքի կողմի շահերին առաջնահերթություն տրվի պարզապես այն պատճառով, որ դրանք հանդես են գալիս վկայի պաշտպանության կամ մեղադրյալին դատապարտելու անհրաժեշտության քողի տակ (որը ներկայացվում է որպես արդարադատության շահ):

Այս Դատարանն ընդգծել է իր նախորդ նախադեպային իրավունքում, որ ապացույցի ընդունելիությունը ազգային օրենսդրության հարց է, և որ Դատարանի խնդիրը ոչ թե որոշելն է՝ արդյոք որևէ վկայություն ճիշտ ձևով է ընդունվել, թե ոչ, այլ որոշելն է՝ արդյոք դատավարությունն ընդհանուր առմամբ արդար է ընթացել (տե՛ս Կոստովսկու գործը, մեջբերված վերևում, կետ 39): Որոշելու համար դատավարության արդարությունը՝ Դատարանը պետք է այնուամենայնիվ ինտեր ալիա գնահատի ձևը, որով տրվել են հոգուս պաշտպանության և մեղադրանքի կողմերի վկայությունները: Սկզբունքորեն 6-րդ հոդվածի 3(դ) կետը պահանջում է, որ վկայի վկայությունը տրվի հանրային լսմանը ամբաստանյալի ներկայությամբ հակառակ կողմի փաստարկների դիտարկմամբ: Դատավարության ժամանակ առերեսման բացակայության դեպքում մինչդասական փուլում արված հարցաքննությունը կարող է բավարար լինել (տե՛ս Կոստովսկու գործը, մեջբերված վերևում, կետ 39): 6-րդ հոդվածի 3(դ) կետի հետ կապված մտահոգություններ առաջ կգան առաջին հերթին Ալ-Քավայայի և Թահերիի գործերին նման գործերում, որտեղ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել հարցաքննել կարևոր

⁴ Տե՛ս Ստեֆան Թրեչսելի կողմից արված քննադատությունը «Մարդու իրավունքները քրեական դատավարությունում»-ում, 2005թ, 313:
[Type text]



վկաներին մինչդաստական կամ դատական վարույթների ժամանակ: Նպատակն այն է, որ պաշտպանության կողմին տրվի վկաների վկայությունները դատարանում վիճարկելու հնարավորություն, և հատկապես գործը քննող դատարանում, եթե դրան խոչընդոտող հիմնավոր պատճառներ չկան: Փաստը, որ Դատարանը չի վերանայի վկայության ընդունելիության հարցերը (բացառությամբ վկայության, որը ձեռք է բերվել 3-րդ հոդվածի խախտմամբ), չի նշանակում, որ նա տեղյակ չէ դրանց խնդրահարույց բնույթի մասին:

Խաչաձև հարցաքննությունը անհրաժեշտ է, հատկապես եթե ցուցմունքը չափազանց կարևոր է մեղադրանքի կողմի համար: Ցուցմունքի կարևորությունը կախված է վկայի արժանահավատությունից: Արժանահավատությունը ստուգելու համար անհրաժեշտ է իմանալ վկայի ինքնությունը: Անձի վարքագիծը չափազանց կարևոր է, քանզի գործի դատալսման ժամանակ դրանից է կախված դատավորի և երդվյալ ատենակալների՝ ապացույցի վերաբերյալ առաջին տպավորությունը: Նույնիսկ փորձառու դատավորները կարող են թյուրիմացաբար անհարկի կարևորություն տալ վկաների ցուցմունքներին, որոնց պաշտպանության կողմը հնարավորություն չի ունեցել խաչաձև հարցաքննելու: Ա ֆորտիորի, այս փաստերն ավելի կարևոր են երդվյալ ատենակալների համակարգում, քանի որ փորձառու դատավորը կարող է ավելի ճիշտ գնահատել նախնական դատալսումն իրականացնող դատավորի ներկայությամբ կամ իր կողմից տրամադրած տեղեկությունը, քան ոչ մասնագետը:

Երդվյալ ատենակալների կողմից չստուգված ապացույցին պատշաճ նշանակություն տալը շատ ավելի մեծ դատական իրազեկություն է պահանջում, քան դատավորների կողմից մեղադրանքի կողմի ապացույցի պոտենցիալ նշանակության տեսանկյունից ընդունելիության վերաբերյալ որոշում կայացնելը: Այդ իսկ պատճառով Հոդված 6-ի 3 (դ)-րդ կետին համապատասխան գործելու համար՝ անհրաժեշտ է երաշխավորել, որ չստուգված ցուցմունքը չհրապարակվի երդվյալ ատենակալների առջև, եթե այն վճռորոշ կլինի գործի համար: Այս առումով այս Դատարանը պետք է իմանա, թե արդյոք «ա» Անգլիայի և Ուելսի իրավական համակարգերում տվյալ գործերի առնչությամբ համապատասխան աշխատանք արվել է, թե ոչ կամ «բ» արդյոք հակակշիռների առկայությամբ ասեկոսե ապացույցը որպես միակ կամ որոշիչ ապացույց ընդունելու դեպքում կան վտանգներ, որոնք պաշտպանության կողմի իրավունքները և ընդհանրապես, արդար դատավարությունը վտանգի տակ են գցում այն աստիճան, որ խոչընդոտում են մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը: Անարդարության օրինակ

[Type text]



է ասեկոսե ապացույցի հիման վրա քրեական դատապարտումը, որը կանխելու համար անհրաժեշտ է Հոդված 6-ի 3 (դ)-րդ կետով նախատեսված կայուն պաշտպանություն: Ուրեմն հարցը այստեղ նրանում չէ, թե արդյոք դատարանը համոզված է, որ չստուգված ապացույցը հավաստի է:

Դատավոր Սքալիայի նախագգուշական հիշեցումն այս առումով շատ ուսուցողական է. «Ցուցմունքի ակնհայտ հավաստի լինելու պատճառով առերեսման բաց թողնելը նույնն է, ինչ-որ երդվյալ ատենակալների բացակայությամբ դատավարությունը, քանի որ մեղադրյալն ակնհայտորեն մեղավոր է»: (տե՛ս *Քրուֆորդն ընդդեմ Վաշինգտոնի*, 541 ԱՄՆ 36, 62 (2004))⁵. Ալ-Քավայայի և Թահերիի գործի առնչությամբ Կառավարության՝ անվիճարկելիության և հավաստիության գնահատումը վիճարկելի է այն պատճառով, որ այդ գնահատումն անելիս օգտագործված միջոցները սահմանափակում էին հիմնական վկային հարցաքննելու պաշտպանության իրավունքը:

Երբ հասկանալի է դառնում պաշտպանության իրավունքի և արդար դատավարության միջև կապը, ապա միակ կամ որոշիչ ապացույցի վերաբերյալ թեստը թվում է, թե ընդհանուր ասեկոսե ապացույցի արգելման բացառություն է՝ նախատեսված առանձին կանոնով: Որպես բացառություն այն պետք է մեկնաբանվի խիստ և նեղ իմաստով: Դատարանը, Հոդված 6-ի 3 (դ)-րդ կետի խախտում չգտնելով, նշել է նաև դատապարտմանը նպաստող լրացուցիչ ապացույցների առկայության մասին (տե՛ս, օրինակ, *Ֆերանտելին և Սանտանգելոն ընդդեմ Իտալիայի*, օգոստոսի 7, 1996թ, 52-րդ կետ, 1996-III որոշումներ, *Ռոբսոնն ընդդեմ Հոլանդիայի*, որի մասին

⁵ Մեծ Պալատին ուղղված իր պնդումներում Կառավարությունը Քրուֆորդին բացասական է բնութագրել որպես արտուտիստ և անաքրոնիստ: Պրն. Վոլթեր Բալեյի գործով դատավարության վերաբերյալ Ֆրեյների մտահոգությունների մասին դատավոր Սքալիայի հղումները, ընդհակառակը, այնպիսին են, որ կանոնի հիմքում ընկած է սկզբունքը: Չնայած որ Քրուֆորդը մեր չափանիշներից ավելի ճշգրիտ է, այնուամենայնիվ, նա հազիվ թե լինի արտուտիստ: ԱՄՆ-ի բացառող կանոնը կիրառելի է միայն ցուցմունքների համար և ընդունում է այն բացառությունները, որոնք հայտնի են եղել Հանրապետության հիմնադրման ժամանակ (տե՛ս Դեյվիսն ընդդեմ Վաշինգտոնի, 547 ԱՄՆ 813, 2003թ): Վկայի և վկային խաչանձ հարցաքննելու նախնական հնարավորության բացակայությունը բավարար են, որպեսզի բավարարեն ԱՄՆ-ի օրենսդրությամբ նախատեսված առերեսման պահանջը: Եվ՝ Դեյվիսի, և՛ Հենոնի ներպետական խախտման առկայությամբ գործերում Գերագույն դատարանը բացատրել է, որ «վկայությունները ցուցմունքի բնույթ չունեն, եթե տրվում են ոստիկանության հարցաքննության ընթացքում այն պայմաններում, որտեղ օբյեկտիվորեն երևում է, որ հարցաքննության առաջնային նպատակն է նպաստել ոստիկանության ընթացիկ հրատապ աշխատանքին», բայց «դրանք ցուցմունք կարող են համարվել, եթե հանգամանքներից տեսանելի լինի, որ այդպիսի ընթացիկ հրատապ հարց չկա, և որ հարցաքննության առաջնային նպատակն է վերականգնել կամ ապացուցել անցյալում տեղի ունեցած իրադարձությունները, որոնք պոտենցիալ կարևոր են հետագա քրեական հետապնդման համար» (547 ԱՄՆ, 822):

[Type text]



վերը հղում է արված, 72-րդ կետ և Գոսան ընդդեմ Լեհաստանի, N° 47986/99, 61-րդ կետ, հունվարի 9, 2007թ):

Ինչպես Ալ-Քավայայի և Թահերիի գործում, անգլիական իրավունքը ձգտում է բացառություն գտնել այնտեղ, ինչն արդեն բացառություն է: Հետևաբար, Դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք Հոդված 6-ի 1-ին և 3 (դ)-րդ կետերի հիմքում ընկած սկզբունքները կարող են պահպանվել հետագա սահմանափակումների դեպքում:

Կառավարությունը հաստատեց, որ այս գործերում ապացույցը հավաստի էր, քանի որ իրականում ընդհանուր իրավունքի համակարգում վստահելիությունը կարող էր գնահատվել առանց առերեսման, և մեղադրյալի իրավունքներն էլ պաշտպանվում են Կոնվենցիայից անկախ: Այսպիսի տրամաբանությունը համոզիչ չէ: Կոնվենցիայի հիմնական նպատակն է կանխել Պետության կողմից մարդու իրավունքների խախտումը, ներառյալ դատաիրավական համակարգը կազմող սխալ փաստեր փնտրողների կողմից, ինչքան էլ որ նրանք մարդկային հնարավորությունների սահմաններում պրոֆեսիոնալ լինեն: Պատահական չէ, որ առերեսման միջոցով չստուգված ցուցմունքի հանդեպ անվստահությունը շարունակում է գերակշռել ընդհանուր իրավունքում: Իռլանդիայի Իրավունքի բարեփոխման հանձնաժողովի դիտարկումները հատկապես ուղղորդիչ են. «Բացակա վկաների ցուցմունքների ընդունելիության հետ կապված վտանգներ կան. այն խախտում է մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքը և արդարադատության իրականացման ձախողում է առաջացնում, և վախեցած կամ բացակա վկաների տրված չստուգված ցուցմունքը կխախտեր այս իրավունքը: Հանձնաժողովը նշում է, որ նախապես առաջարկել է, որ դատարանները պահպանեն ասեկոսե ապացույցի մասին կանոնը զարգացնելու/փոփոխելու հայեցողություն»: (69-71-րդ կետեր): Ալ-Քավայայի գործի համատեքստում ասեկոսե ապացույցն ընդունելու վտանգները Կանադայի Գերագույն դատարանին հարկադրեցին սահմանափակել ստուգման հնարավորություն չունեցող վկաների ցուցմունքների ընդունելիությունը Ռ-ն ընդդեմ Խևալունի ([2006] 2 Ս..C.R. 787): Եվ, ինչպես նախապես նշել ենք, Միացյալ Թագավորությունը, որտեղ գործում է ընդհանուր իրավունքի ամբողջական համակարգ, կիրառում է առերեսման ավելի խիստ պահանջ, քան այն, որ առկա է Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայում: Շատ կարևոր է իմանալ, որ Միացյալ Թագավորությունը, ինչպես մյուս պետությունները, վավերացրել է Կոնվենցիան այն համոզմունքի հիման վրա, որ իր իրավական համակարգը համահունչ էր Կոնվենցիայի հետ: Վավերացման

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

ժամանակ ընդհանուր իրավունքում գործող կանոնը բացառում էր ասեկոսե ապացույցը⁶:

Պոպուլիզմը, ոստիկանությունը և քրեական հետապնդման մարմինները աշխարհի բոլոր դատարանների վրա ճնշում են գործադրում, որ քրեական դատավարության հիմնարար երաշխիքներն անտեսվեն: Երբեմն պահանջները լեգիտիմորեն հիմնավորված են գործնական դժվարություններով, բայց սա հիմնավոր պատճառ չէ մեղադրյալի իրավունքների պաշտպանությունն անտեսելու համար, որոնք որոշիչ դեր ունեն թե՛ արդար դատավարության, և թե՛ արդարադատության արդար իրականացման համար:

Քանի որ վկայի բացակայության կամ անանունության պատճառները տարբեր են (օրինակ՝ մահը, վկայի վախը, խոցելիությունը որպես ընտանեկան բռնության կամ երեխայի սեռական բռնության զոհ), գործերը նույն ձևով չպետք է քննվեն: Օրինակ՝ երեխա վկաների հետագա պաշտպանությունը հատուկ հոգատարություն է պահանջում: Նույնիսկ այսպիսի գործերում պաշտպանության կողմը պետք է հնարավորություն ունենա հարցաքննելու վկային մինչդատական լսման կամ նախաքննության ժամանակ: Այս նիստերը կարող են նկարահանվել, որպեսզի պաշտպանության կողմը կարողանա վիճարկել վկայի արժանահավատությունը երդվյալ ատենակալների առջև (տե՛ս, օրինակ, *Մ.Ն ընդդեմ. Շվեդիայի*, № 34209/96, 52-րդ կետ, ՄԻԵԴ 2002-V). Ընդհանրապես, պաշտպանության կողմի իրավունքների ցանկացած սահմանափակման վերաբերյալ առավելագույն զգուշություն պետք է ցուցաբերվի (տե՛ս, *Մ.Ն ընդդեմ. Շվեդիայի*, որի մասին վերը հղում է արված, 53-րդ կետ): Այստեղ նույնպես ընդունելի լուծում էր վկայության ստուգման հատուկ ձևը: Բայց վկայությունը ստուգվում էր, իսկ վկայի միակ կամ որոշիչ հանդիսացող չստուգված ապացույցը վստահելի չէր:

Ալ-Քավայայի և Թահերիի գործերում մինչև դատավարությունը սկսելը վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորություն չի եղել: Ոչ էլ ներկայացվել են այդ բացթողումն արդարացնող հստակ պատճառներ, բացի այն մշտական

⁶ Տե՛ս Լորդ Բինգամի ձևակերպումը. «Ինչպես իմ ազնվագարն և կիրթ ընկեր Լորդ Ռոջեր Ըոլսֆերին առաջարկեց «Հոդված 6-ի (3)(d)-րդ կետի ներկայացնելը կարևոր ոչինչ չէր ավելացնի անգլիական իրավունքի պահանջին, ըստ որի վկաները պետք է վկայություն տան մեղադրյալի առջև»: Հնարավոր է նաև (թեև փաստարկ չկա), որ Հոդված 6-ի (3)(d)-րդ կետի ներկայացնելը, որը երաշխավորում է մեղադրյալի վկաներին անձամբ կամ իր ներկայությամբ հարցաքննելու իրավունքը, բրիտանացի միջնորդների ազդեցությունն է արտացոլում: Ամեն դեպքում պարզ է, ինչպես իմ ազնվագարն ընկրերը նկատեց նմանատիպ գործում՝ para 11, որ «ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը նպատակ ունի հաստատելու, որ Հոդված 6-ի (3)(d)-րդ կետը ավելի մեծ ազդեցություն է ունեցել մայրցամաքային համակարգերի ընթացակարգերի վրա, որտեղ նախկինում մեղադրյալը կարող էր դատապարտվել՝ հիմնվելով վկաների ցուցմունքի վրա, որոնց հարցաքննելու հնարավորություն մեղադրյալը չի ունեցել (Ռ-ն ընդդեմ Դեյվիսի, 24-րդ կետ):

[Type text]



հիմնավորումներից, ինչպիսիք են՝ ապահովել հանրային անվտանգություն և քրեական պատիժ իրականացնել: Մ.Թ.-ի ինքնասպանությունը Ալ-Քավայայի գործում և Թահերիի գործում իր համայնքում մատնիչի համբավ ստանալու վախի պատճառով Թ.-ի մերժումը վկայություն տալ դատարանում միանգամայն տարբերվում են այն գործերից, որտեղ առկա է երեխայի շահագործում կամ կազմակերպված հանցանք, որոնց դեպքում անհրաժեշտ է վկային պաշտպանել մեղադրյալից: Հատուկ ուշադրություն է անհրաժեշտ նաև այն դեպքում, երբ հիմնական վկաները մահացել են կամ մեղադրյալի գործողությունների պատճառով վախեցած են: Այնուամենայնիվ, Ալ-Քավայայի և Թահերիի գործերում այսպիսի դեպքեր չկան: Ուստի, այդ գործերին լուծում տալու համար մենք չպետք է կառչենք այդ հարցից:

Որքան էլ հասկանալի լինի վիճարկման խնդիրը, որն առաջանում է մեղադրանքի կողմի մոտ, երբ հիմնական վկաները մահանում են կամ իրական վախի պատճառով չեն ներկայանում դատավարությանը, այնուամենայնիվ, Հոդված 6-ով նախատեսված երաշխիքները խոսում են միայն պաշտպանության շահերի մասին և ոչ թե վկաների կամ մեղադրանքի կողմի պարտականությունների մասին: Այս Դատարանի խնդիրն է պաշտպանել մեղադրյալին, հատկապես երբ Կառավարությունը սահմանափակում է նրա՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքները, որպեսզի ամրապնդի Պետության դիրքը դատավարության ժամանակ: Հակակշռող ընթացակարգերը խիստ անհրաժեշտության դեպքում կարող են Կառավարությանն ավելի ձկուն դարձնել Հոդված 6-ի 3 (դ) կետի պահանջները բավարարելու առումով: Միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնի ծավալվող կիրառման մեր թեստը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ առերեսման ընդհանուր կանոնի այս բացառությունն ինքնին սկզբունքայնորեն անսահմանափակ չէ: Վերջապես, Կառավարության խնդիրն է կցել իրենց գործին ոչ ասեկոսե հաստատող ապացույցներ: Վերոնշյալի ձախողումը Կառավարության համար լուրջ խնդիր է ստեղծում պատշաճ դատաքննության առումով և խախտում է Պետության՝ Հոդված 6-ի 1-ին և 3 (դ)-րդ կետերով սահմանված պարտականությունները:

Այսօր Դատարանը հեռացել է իր նախկին դիրքորոշումից, ըստ որի, երբ հնարավոր չէ վկային խաչաձև հարցաքննել և դատապարտումն էլ հիմնված է միակ կամ որոշիչ ասեկոսե ապացույցի վրա, Հոդված 6-ով նախատեսված իրավունքները կխախտվեն: Դատարանը հիմնվում է այն գործերի վրա, որտեղ ապացույցը պահվում է մեղադրյալից ոստիկանության աղբյուրները պահպանելու նպատակով (հղում. Ռաուն և Դեյվիսն ընդդեմ ՄԹ-ի [GC], № 28901/95, ՄԻԵԴ 2000-II): Ներկայիս որոշման համաձայն այդ գործերում Դատարանը «ներպետական դատարանների

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

հայեցողությանն էր թողել որոշելու, թե արդյոք պաշտպանության իրավունքները պետք է զիջեին հանրային շահին, թե ոչ, իսկ ինքը պետք է հաստատեր, թե արդյոք դատական մարմինների հետևողականությամբ իրականացրած գործընթացներն ունեին մեղադրյալի իրավունքների սահմանափակման հակակշիռ երաշխիքներ, թե ոչ: Այն, որ որոշակի ապացույց հասանելի չէր պաշտպանությանը, դեռևս չէր նշանակում, որ կատարվել է Հոդված 6-ի 1-ին կետի խախտում (տե՛ս որոշման 145-րդ կետ)»:

Այլ կերպ ասած, Դատարանը հաստատում է, որ այն արդեն ընդունել է, որ ապացույցի հասանելիությունը համապատասխան հավասարակշռություն է ստեղծում վտանգված հանրային և մասնավոր շահի միջև: Ակնհայտ է, որ ի տարբերություն Հոդված 8-11-ի՝ Դատարանի լեզուն և ընդհանրապես պրակտիկան հակակշռող փորձ չի նախատեսում:

Մենք, պարզապես, չենք կարող հասկանալ, թե ինչպես է կարելի հիմնվել այսպիսի գործերի վրա, որոնք չեն առնչվում միակ վկայի ցուցմունքի հետ: Իրականում, Ռատուն և Դեյվիսը գործն առնչվում էր կարևոր ապացույցի հրապարակման հետ: Պարզվեց, որ սա բացահայտ իրավունք չէր. «Ցանկացած քրեական դատաքննության ժամանակ կլինեն մրցակցող շահեր, ինչպես օրինակ՝ ազգային անվտանգությունը կամ ճնշամիջոցի վտանգից վկաներին պաշտպանելու կարիքը կամ հանցանքը քննելու ուստիկանական գաղտնի մեթոդների պահպանումը, որոնք պետք է համեմատվեն մեղադրյալի իրավունքների հետ՝ դրվելով կշեռքի մյուս նժարում (տե՛ս, օրինակ, Դորսոնն ընդդեմ Հոլանդիայի 1996թ-ի մարտի 26-ի որոշում, 1996-II, էջ 470, 70-րդ կետ)» (տե՛ս Ռատուն և Դեյվիսը գործը, որի մասին վերը հղում է արված, 61-րդ կետ): Դորսոնի գործի առնչությամբ Դատարանը նշել էր, որ հակակշռումն իրականացվել է միայն այնտեղ, որտեղ ապացույցը միակ կամ որոշիչ չի եղել (և հատկապես, ինչպես այս գործում, հիմնված էր ասեկոսե ապացույցի վրա): Հակակշռման կիրառումը իրավական կանոնով⁷ սկսկալվող ճշգրտության և արժանահավատության չափանիշին չբավարարելու վտանգի տակ է, և պարզվում է, որ այդ վտանգն

⁷ Տե՛ս Տրեչսելի գործը, որի մասին հղում է արված, 313: Դատավորի արդարադատության տեսանկյունից չստուգված ասեկոսե ապացույցի արժանահավատության վերավերյալ տե՛ս 2003թ-ի Քրեական արդարադատության ակտի Մաս 11, Գլուխ 2, Բաժին 116.

«...»

(4) (2)(e) ենթաբաժնի համաձայն հնարավոր է թույլատրություն տալ , միայն եթե դատարանը գտնի, որ արդարադատության շահերից ելնելով պետք է ընդունել ցուցմունքը՝ հաշվի առնելով.

(a) ցուցմունքի բովանդակությունը,

(b) ցանկացած վտանգ, որ ցուցմունքի ընդունումը կամ բացառումը կարող է անբարենպաստ լինել դատաքննության որևէ կողմին (և հատկապես՝ ինչքան դժվար կլինի ստուգել ցուցմունքը, եթե այն տվող անձը բանավոր վկայությամբ հանդես չգա)»:

[Type text]



անընդունելիորեն մեծ է և ավելին, քան ցանկացած հակակշռող միջոց միակ կամ որոշիչ ապացույցի առկայությամբ գործում:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Ռատուն ընդդեմ Դեյվիսի գործում բացի սխալ ընկալման հիմքով արդարության վերաբերյալ հղումից, «միակ կամ որոշիչ» կանոնի կատեգորիկ մեկնաբանության վերաբերյալ այլ պատճառ չի առաջարկվում, բացի այն, որ Դատարանը պահանջի, որ հակակշռող միջոցներն այնպիսին լինեն, որ բավարարեն առավելագույն խստությունը: Ալ-Քավայայի գործում շատ լավ լուսաբանված են հակակշռող մոտեցումից բխող իրավունքների անկայուն և անհամարժեք պաշտպանությունը, որտեղ նույնիսկ Վերաքննիչ դատարանն է ստիպված եղել խոստովանել, որ դատավորի տված ուղղորդումները բավարար չէին: Այնուամենայնիվ, դատարանը ենթադրել էր, որ երդվյալ ատենակալներն ի վիճակի էին համապատասխան տարանջատում անել, որը նրանց հնարավորություն տվեց հիմնվել ենթադրյալ ոտնձգությունից մյուս տուժողի բողոքի հետ խիստ նմանությունների վրա: Մենք այսպիսի վստահությունը համարձակ ենք համարում Հորնքեսլի գործով Գերագույն դատարանի տված պատճառների հիման վրա: Ինչպես Գերագույն դատարանը նշեց, բնորոշ հատկանիշներից մեկը, որով նշանավորվում էր արդար քրեական դատաքննության ընդհանուր իրավունքի մոտեցումը, «եղել է դժկամությունը վստահել ոչ մասնագետ տրիբունալին, որ նրանք համապատասխան կարևորություն կտան իրենց առջև դրված ապացույցին» (17-րդ կետ): Ահա, թե ինչ տեղի ունեցավ Ալ-Քավայայի գործի առնչությամբ⁸: Այլ կերպ ասած, օրենսդրությամբ սահմանված և ընդհանուր իրավունքի ազնիվ ավանդական ուղղով վերապատրաստված իրազեկ դատավորների կողմից կիրառված հակակշռող համակարգում առաջարկված հավաստիացումները ձախողվեցին, իսկ երկրորդ գործում (Թահերիի գործում)՝ Դատարանը նույնիսկ գտավ, որ գործը քննող դատավորը սխալ էր կիրառել ենթադրյալ անվտանգ երաշխիքը:

Վերոնշյալ պատճառներից ելնելով մենք եզրակացնում ենք, որ Հոդված 6-ի 1-ին և 3 (դ)-րդ կետերի խախտում է արվել Ալ-Քավայայի գործում, և այդ իսկ պատճառով մենք այլ կարծիք ունենք այդ գործի առնչությամբ, մինչդեռ Թահերիի գործի առնչությամբ մենք հետևում ենք մեծամասնության կարծիքին, բայց այլ հիմքով, քանի որ միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը անտեսվել էր:

Այս Դատարանը, փորձելով բավարարել արդար դատավարության օրինական պահանջները, համակարգված և հետևողականորեն սահմանագիծ է նշել միակ կամ որոշիչ կանոնի ձևով: Ներկայումս այս դիրքորոշումն անտեսվում է արդարության ընդհանուր քննության նպատակով՝ հուսալով, որ արդարության կարելի է հասնել՝

⁸ Տեղին կլինի հիշել դատավորի պնդումները նախնական դատալսման ժամանակ. «կոպիտ ասած՝ չկա ցուցմունք, չկա մեղադրանք»: Երդվյալ ատենակալներին ուղղված նրա ուղղորդումները տե՛ս 15-րդ և 16-րդ կետերում:

[Type text]



պահանջելով տվյալ իրավունքի սահմանափակման հակակշռող միջոցներ և դրանք բացատրող խիստ հիմնավորումներ և իրական ապացույցներ: Եթե նույնիսկ կարողանում են հասնել այդպիսի արդարության, այնուամենայնիվ, այդ ձեռքբերումը հարցականի տակ է դրվում, քանի որ այն իրականացվում է Կոնվենցիայով նախատեսված իրավունքի անտեսմամբ: Իրավունքի պատմության համաձայն չստուգված ասեկոսե ապացույցի հիման վրա արված դատապարտումները հաճախ սխալ են լինում, և իհարկե, քաղաքական շահարկման ցանկալի միջոց: Իսկապես, սա նույնը չէ, ինչ որ Անգլիայում և Ուելսում կիրառվող հակակշռող մոտեցումը: Բայց ներկայիս գործերը, ինչպես նաև *Հորնքեսլի* գործում արձանագրված դեպքերը ցույց են տալիս հակակշռող մոտեցման մեջ առկա անորոշությունները, որով խաթարվում է դատաքննության իրավական որոշակիությունը և իրավունքի կանխատեսելիությունը: Այսպիսի մոտեցման վտանգները արդեն իսկ առաջ էին քաշվել 2008թ-ին՝ *Հորնքեսլի* որոշումից մեկ տարի առաջ:

Ռ-ն ընդդեմ Դելվիսի գործով (8-րդ կետ) Լորդ Բինգամը, ազնվորեն ջանալով պաշտպանել արդար դատաքննության սկզբունքները, անհրաժեշտ համարեց մեջբերում անել *Ռ-ն ընդդեմ Հյուզի* գործով Նոր Զելանդիայի Վերաքննիչ դատարանի որոշումից [1986] 2 NZLR 129, որտեղ Ռիչարդսոն Ջ-ն նշել էր (էջ 147).

«Ակնհայտ է, որ մեղադրյալը չի կարող ապահովված լինել իրեն ուղղված մեղադրանքի դեմ ճիշտ և ամբողջական պաշտպանությամբ, քանի դեռ չունի բավարար տեղեկություն իրեն մեղադրողի մասին, որպեսզի որոշի, թե արդյոք նրա արժանահավատությունը պետք է ստուգվի, թե ոչ»:

Լորդ Բինգամը շարունակեց.

«Մենք վտանգավոր վիճակում կհայտնվեինք որպես հասարակություն, եթե Պետության և մեղադրյալի շահերը հավասարակշռելու փոխարեն Դատարանը դատական կանոնի համաձայն սահմանափակեր դատաքննության համար կարևոր հարցեր առաջ քաշելու պաշտպանության կողմի իրավունքը: Այսօր պահանջվում է, որ վկայի անունը հայտնի լինի, վաղը նույն տրամաբանությամբ հնարավոր է, որ հանցանքի բացահայտման և հետապնդման ժամանակ արդարադատության շահերից ելնելով հարկ կլինի վերացնել վկայի ֆիզիկական ինքնությունը բացահայտելու վտանգը կամ թույլ տալով, որ վկան անանուն վկայություն տա, օրինակ՝ փակ էկրանի ետևից, որտեղ վկայի վարքագիծն ուսումնասիրելու հնարավորություն չկա, կամ մեղադրյալին Դատարանից հեռացնելը, կամ էլ՝ երկուսը միասին: Հակառակ կողմի վկայի հետ առերեսում իրականացնելու իրավունքը առանցքային է արդար դատավարության ցանկացած քաղաքակիրթ հասկացության համար: Այն պետք է

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
Ներկայացուցչության օժանդակությամբ:

ներառի մեղադրյալի՝ մեղադրողի ինքնությունն իմանալու իրավունքը, եթե հավաստիության ստուգման խնդիր կա» (էջ 148-149)⁹.

Միակ կամ որոշիչ ապացույցի մասին կանոնը, որի մասին այսքան խոսվեց, նպատակ ունի պաշտպանել մարդու իրավունքերը «թունավոր ծառի պտուղից» (եթե ապացույցի աղբյուրը մաքուր չէ («ծառը»), ուրեմն դրանից ձեռք բերված ոչինչ մաքուր չի լինի («պտուղը»)): Հակակշռող մոտեցման որդեգրումը նշանակում է, որ կանոնը, որը նպատակ ունի երաշխավորել մարդու իրավունքները, փոխարինվում է հակակշռող անորոշությամբ: Ինչքանով որ մեզ հայտնի է, սա առաջին դեպքն է, որ Դատարանը առանց հատուկ նոր և հիմնավոր պատճառի նվազեցրել է պաշտպանության մակարդակը: Մա մարդու իրավունքների հետագա դատական պաշտպանության չափազանց լուրջ խնդիր է Եվրոպայում:

⁹ Չնայած արդար դատավարություն ապահովելու դատարանների ջանքերին, Լորդերի որոշումից 33 օր հետո Խորհրդարանը օրինականացրեց այն, ինչը Լորդերը համարել էին ընդհանուր իրավունքին և արդար դատավարության սկզբունքներին հակասող, այն հարցում, որը Լորդերը համարել էին լուծված այս Դատարանի նախադեպային իրավունքով: Մի տարի հետո Գերագույն դատարանը համոզվեց (այլ համատեքստում և ավելի վաղ ընդունված օրենքների հիման վրա), որ հանգուցյալ Լորդ Բինգհամի վերահաստատած սկզբունքները բավարարված էին նվազ երաշխիքների համեմատության մեջ, չնայած իր և մյուս դատավորների արտահայտած մտահոգությունների:
[Type text]

